

ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



№ **2-3** (1594-1595) ՓԵՏՐՈՒԱՐ-ՄԱՐՏ 2008

ՀՅ Դաշնակցութեան
Հայաստանի Գերագոյն մարմնի յայտարարութիւնը

Նախագահական ընտրութիւններն ակնառու կերպով ցոյց տուեցին, որ ժողովրդի մի զգալի հատուածի մօտ առկայ է լուրջ բարեփոխումներ իրականացնելու յստակ պահանջ: Սակայն, ցաւօք, ժողովրդի մէջ առկայ տրամադրութիւնները քաղաքական միջոցներով պաշտպանելու եւ ուղղորդելու փոխարէն ընտրուեց առճակատման կործանարար ճանապարհը:

Արդիւնքում.

- հասարակութեան մէջ բարոյա-հոգեբանական անկումային տրամադրութիւնները, յուսահատութեան, երկփեղկուածութեան, փոխադարձ անհանդուրժողականութեան, անվստահութեան, երկրի զարգացման հեռանկարի նկատմամբ անորոշութեան, մարդու իրաւունքների եւ հիմնարար ազատութիւնների խաթարման զգացումը վտանգաւոր աստիճանի է հասել,
- քաղաքական կեանքում տիրապետող են դառնում քաղաքական ուժերին օտարների եւ իւրայիններ բաժանելու միտումները, տեղայնական տարանջատումները, իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ բացակայում են բնականոն յարաբերութիւններն ու երկխօսութիւնը, քաղաքական գործընթացներում առաջնորդող են ծայրահեղականութիւնը եւ առաւելապաշտութիւնը,
- վտանգւում է Հայաստանի՝ իբրեւ բարենպաստ ներդրումային միջավայր, զարգացող տնտեսութիւն եւ կայուն առաջընթաց ունեցող երկրի վարկն ու կարգավիճակը,
- ՀՀ եւ ԼՂՀ անվտանգութեանն ուղղուած սպառնալիքների աննախադէպ աճ է արձանագրուել, առաջանում են նոր արտաքին մարտահրաւէրներ:

Իրավիճակի յետագայ վատթարացումը յղի է հայկական երկու պետութիւնների անկախութեանն ու անվտանգութեանն ուղղուած ռազմա-քաղաքական սպառնալիքներով:

Ստեղծուած իրավիճակում երկիրը կանգնած է իր ազգային-պետական ուղեգիծը վերահաստատելու, ժողովրդավարական բազմակողմանի բարեփոխումների գործընթացը խորացնելու, ներազգային համերաշխութիւնը վերականգնելու, ազգային համաձայնութեան մթնոլորտ ձեւաւորելու հրամայականի առաջ:

Օրախնդիր է երկրում արտագաղթի նոր ալիքի կանխարգելումը, ներդրումային ռիսկերի չեզոքացումը, առաջընթաց զարգացման համար բարենպաստ միջավայրի վերականգնումն ու ամրապնդումը:

Այս պայմաններում հանգուցալուծման միակ ճանապարհը հատուածական-կուսակցական շահի անվերապահ ստորադասումն է յանուն Հայրենիքի եւ հայութեան առջեւ կանգնած ազգային-պետական նպատակների իրագործման: Լաւագոյն լուծումը կարող է լինել խորհրդարանական բոլոր ուժերի ընդգրկումով ազգային համաձայնութեան կառավարութեան ձեւաւորումը:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը պատրաստակամ է մաս կազմել այս խնդիրների իրագործմանը նպատակամղուած համաձայնութեան կառավարութեանը եւ կոչ է անում քաղաքական ընդդիմութեանը՝ գնահատել ստեղծուած իրավիճակի լրջութիւնը, օգտագործել ընձեռուած հնարա-ւորութիւնը եւ իր մասնակցութեամբ երկրում բարեփոխումների գործընթացը դարձնել առաւել ամբողջական ու լիարժէք:

Համաձայնութեան կառավարութիւնն իր առաջնահերթ խնդիրները պէտք է համարի.

- դատական համակարգին գործադիր իշխանութեան միջամտութեան բացառումը, այդ համակարգի լիարժէք անկախութեան եւ անաչառութեան ապահովումը,
- անպատժելիութեան եւ ամենաթողութեան վերացումը, օրէնքի առջեւ բոլորի հաւասարութիւնը՝ անկախ զբաղեցրած դիրքից ու պաշտօնից,
- ընտրական գործընթացների նկատմամբ հանրութեան վստահութիւնը երաշխաւորող, գործադիր իշխանութեան միջամտութիւնը բացառող, լիովին անկախ եւ ինքնուրոյն ընտրական նոր համակարգի ձեւաւորումը,
- տնտեսական մենաշնորհները բացառող հակամենաշնորհային գործուն օրէնսդրական դաշտի ստեղծմամբ մրցակցային արդար կարգի հաստատումը,
- լիարժէք բազմակարծութեան, խօսքի ազատութեան, Հանրային հեռուստառադիոընկերութեան օբյեկտիւ եւ թափանցիկ գործունէութեան ապահովումը,
- ընդդիմութեան համար քաղաքական համակարգում լիարժէք գործելու երաշխիքների ապահովումը,
- կենսապահովման նուազագոյն զամբիւղի հաշուառման հիման վրայ սոցիալական քաղաքականութեան իրականացումը:

Երկիրը բնականոն հուն մտցնելու, վերոյիշեալ խնդիրները յաջողութեամբ լուծելու, յետընտրական լարուածութիւնը արագ լիցքաթափելու համար ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը անհրաժեշտ է համարում իրականացնել անյետաձգելի միջոցառումների ծրագիր:

Այդ ծրագրի իրականացմանը կարող է նպաստել Հանրապետութեան Նախագահին կից՝ ժողովրդի վստահութիւնը վայելող անձանցից, հասարակական կազմակերպութիւնների, արտախորհրդարանական ուժերի ներկայացուցիչներից կազմուած Հասարակական խորհրդի ստեղծումը: Խորհուրդը պէտք է նպաստի վստահութեան մթնոլորտի ձեւաւորմանը եւ հասարակութեան հետ իշխանութեան մշտական կապի հաստատմանը:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմին

Երեւան, 19 մարտի 2008թ.

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

Հարցազրույց

4 «Դրօշակի» հարցերին պատասխանում է Արմէն Ռուստամեանը

ԼՂՀ - 20

10 Ի՞նչ է պետք իմանալ դարաբաղեան հակամարտութեան մասին՝ նրա արդար կարգաւորման համար

24 Էթնիկ ժողովուրդների զտման քաղաքականութիւնը Ադրբեջանում

32 Անբնկճելի Քարինտակը

39 Մարտահրաւէրի հրամայականը

Պատմութեան դասեր

43 Հայ -հռոմեական հարաբերութիւնների հայեցակարգն ըստ Խորենացու

Ցիրուցան եղած էջեր

54 Սիմոն Վրացեանի քաղաքական օրագիրը (1943թ. 18-25 օգոստ.)

Նամակներ

74 Վահան Տէրեանի նամակը Սոնա Օթարեանին

Թերթերով «Դրօշակ» - ի էջերը

76 Ի՞նչ է գրել « Դրօշակը » 100 տարի առաջ

Նոր գրքեր

79 Համշէն եւ համշենահայութիւն

Պարկերազարդ

80 Արքուր Զարիբեան



«Դրօշակ» ամենամսեայ պաշտօնաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխաւոր խմբագիր՝ **Ռուբէն Յովսէփեան**
Խմբագիր՝ Կ.Խանլարեան
Համակարգչային շարուածքը՝ Ս.Խաչատրեանի
Ձեւաւորումը՝ Մ.Յովսէփեանի
Գրանցման վկայական՝ 897
Երեւան,375010,Միհր Մկրտչեան 12/1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրութիւնը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

" **Droshak"** monthly, ARF Dashnaktsoutiun publication
12/ 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@ arf.am
Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

Digitized by ARF PR Office

ԱՅԱՏԱՌԻ ԿԱՅԱՆՈՒԹ

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐ

Արդիւնքում ՀՀ նախագահ ընտրուեց ՀՀ վարչապետ Սերժ Սարգսեանը

ՀՀ նախագահական 2008 թ. ընտրութիւններից յետոյ երկրում ստեղծուել է մի այնպիսի իրավիճակ, որ ոչ յաղթողն է լիարժէք վայելում իր յաղթանակը եւ ոչ էլ պարտուողը՝ ընդունում իր պարտութիւնը:

Պատճառները բազմաթիւ ու բազմաբնոյթ են: Նախընտրական քարոզարշաւի ընթացքում իշխանութեան թեկնածուի կազմակերպած եւ ոչ մի միջոցառմանը ժողովուրդն ինքնաբուխ մասնակցութիւն չցուցաբերեց: Պետական լծակներով կազմակերպուած տասնեակ հանրահաւաքները չդարձան եւ չէին կարող դառնալ յաղթանակի գրաւական, ինչը պարզորոշ գիտակցում էր նաեւ իշխանութիւնը: Արած-չարածի մասին ազդարարող քարոզարշաւներն էլ յանգում էին ընդամենը երկրում ծայր առած խելայեղ շինարարութեան առասպելին:

Ընտրակաշառքը, աշխատանքից հեռացնելու, գազը, ջուրը, հոսանքը կտրելու մասին սպառնալիքները լաւագոյն զէնքեր էին հասարակութեան սոցիալապէս անապահով շերտերին ընտրատեղամասեր քշելու համար: Նաեւ պետական մակարդակով կազմակերպուած ընտրախախտումների արդիւնքում հազարաւոր «ոչ մաքուր» քուէաթերթիկներ յայտնուեցին քուէատուփերում:

Ահա թէ նաեւ որ դժգոհութիւնների ալիքի վրայ միտինգային բեմահարթակներում յայտնուեցին «նախկիններ»: Ու ինչպիսի զաւեշտական էջ բացուեց Հայաստանի քաղաքական պատմութեան մէջ... Հասարակական օբյեկտիւ անբարոյ իրավիճակի մասին սկսեցին աղաղակել հին մեղաւորները՝ նոր մեղաւորներին հռչակելով «աւազակապետութիւն»:

Պետական անհեռատեսութիւնը շարունակուեց յետընտրական գործընթացներում եւս: Ժողովրդի՝ այս կամ այն թեկնածուի օգտին քուէարկած ընտրողների մի զգալի մասի, խաղաղ ցուցարարների նկատմամբ, փետրուարի 21-ից սկսեալ, ի գործ դրուեցին տարաբնոյթ ճնշումներ եւ՛ ընդդիմութեան, եւ՛ իշխանութեան կողմից: Մի կողմից բեմահարթակներից աւետում էր մօտալուտ յաղթանակը եւ մատուցում համապատասխան աճպարարութիւն, իսկ միւս կողմից՝ ոստիկանութեան միջոցով ձեռնարկում էին «խուզարկութիւնների» ոչ մասնագիտական, ոչ հմուտ, հրահրիչ ակցիաներ...

Խաղաղ ցուցարարները դուրս մղուեցին մի հրապարակից եւ զայրացած ամբոխի հոգեբանութեամբ լցուեցին մի այլ հրապարակ: Ճնշումները սաստկացան, կոչերի բնոյթը փոխուեց, յայտարարուեց ու անմիջապէս գործադրուեց «արտակարգ դրութիւն», ոստիկանութեան կողքին յայտնուեց բանակը. մի երկու միջադէպ, մի երկու հայիհ-

յանք, մի երկու նետուող քար, ապա բռնկումներ, պայթիւններ, կրակոցներ... ու գրուեց մեր պատմութեան եւ մի սեւ էջ, անմեղ զոհերի յիշատակի եւ մէկ օր՝ մարտի 1-ը:

Առարկայական լինելու համար մեր վերլուծութեան մէջ փորձեցինք տեղատրել եւ՛ իշխանութեան, եւ՛ ընդդիմութեան անհեռատեսութեան ու անտակտութեան երեւոյթները: Մեղաւորներ միշտ կարելի է որոնել երկու կողմում էլ: Բայց թէ, վերջին հաշուով, ո՞ւմ է հասցէագրւում գլխաւոր պատասխանատուութիւնը, միանշանակ համոզուած ենք՝ իշխանութիւններին: Իսկ պատասխանատուութեան աստիճանին համապատասխան ակնկալւում է ելքի որոնման եւ իրավիճակի նորմալացման իմաստնութիւն, նախաձեռնութիւն եւ կամք:

Այս առումով դրական քայլ է համաձայնական իշխանութիւն ձեւաւորելու յուշագիրը, որում քաղաքական չորս կուսակցութիւնները (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ եւ ՀՅԴ, յուշագրի բնութագրմամբ՝ կոալիցիայի կողմեր) հաւաստիքներ են տալիս՝ ժողովրդավարական բարեփոխումների խորացման, քաղաքացիական եւ սոցիալական կեանքի որակի էական բարելաւման եւ գործադիր մեխանիզմներում բարեփոխումներ իրականացնելու համար:

Համաձայնական իշխանութեան ձեւաւորումն անհրաժեշտ է յատկապէս քաղաքական կայունութեան անմիջական վերականգնման իմաստով եւ նախատեսուած է գործել ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի լիազօրութիւնների ժամկէտում: Կարծում ենք, որ նման բազմակողմ կոալիցիոն իշխանութեան բուն առաքելութիւնը ազգային ներկայ ճգնաժամը կարճ ժամանակամիջոցում լուծելն է, որից յետոյ լիայոյս կը լինենք, որ երկրի քաղաքական դաշտը կ՝առաջնորդուի հաւասարակշռման կենարար սկզբունքի հիման վրայ:

Պետական կեանքի շրջանակներում արտաքին եւ ներքին քաղաքականութիւնների փոխկապուածութեան հին օրէնքը, ողջ հզօրութեամբ, աշխատեց նաեւ Հայաստանի դէպքում, երբ հայ ժողովուրդը, իր բոլոր հատուածներով, պատրաստւում էր նշել ու արդէն նշում էր Արցախեան ազատագրական շարժման 20-ամեակը:

Յետընտրական շրջանի անկայունութիւնը ոսկէ հնարաւորութիւն ընձեռեց Ադրբեջանին, ռազմական մի փոքր սադրանք մոգոնելուց յետոյ, իր դիւանագիտական ճկուն կորպուսը մոբիլիզացնելու համար: ԵԱՀԿ-ի շրջանակներում հակամարտութեան խաղաղ լուծման բանակցութիւններին զուգահեռ, տրուեց ՄԱԿ-ում հարցի արծարծման ռազմավարութեան մեկնարկը: Այս նոր ճակատի բացման նախաձեռնութեամբ Ադրբեջանին յաջողուեց շուրջ հարիւր պետութիւնների «ձեռնպահութեան» պայմաններում, 39 «կողմ» քուէարկող պետութիւնների աջակցութեամբ ՄԱԿ-ի Գլխաւոր վեհաժողովում անցկացնել հակահայ բանաձեւի նախագիծ: Իսկ Հայաստանի կողքին եւ բանաձեւին «դէմ» հանդէս եկան ընդամէնը վեց պետութիւններ:

Հակամարտութեան միջազգայնացման ադրբեջանական տուեալ փորձը ապացուցեց մի քանի հաստատումներ. նախ այն, որ հայկական դիւանագիտութիւնը նուազ ակտիւ է, քան ադրբեջանականը: Մերոնք, կարծես, շարունակում են «քնած մնալ ուղտի ականջում»: Իսկ ամենագլխաւորն այն է, որ ներկայիս, հակամարտութեան լուծման «միջազգային» ուղին լի է անկանխատեսելի խոչընդոտներով, հայամէտ «դէմեր»-ով ու «ձեռնպահներ»-ով, ադրբեջանամէտ «կողմեր»-ով ու բազում այլ զարմանալի շրջադարձերով, որոնց յաղթահարելու համար ժամանակավրէպ ու անճարակ է թւում հայկական կողմի արտաքին քաղաքականութիւնը, ինչն էլ, անխուսափելիօրէն, շատ լուրջ վերանայման է ենթակա: Ամէն դէպքում մեր դիւանագիտութիւնը պիտի ունենայ լայն կարելիութիւն լուծման երկու կոմպոնենտների՝ «միջազգային» եւ «տարածաշրջանային» ուղղութիւններով մրցելու հակառակորդի հետ:

Արտաքին քաղաքականութեան մէջ այս նոր մարտահրաւէրները բարեյաջող կերպով դիմագրաւելու համար, չպիտի մոռանալ, որ երեք նախապայման է այսօր դրուած մեր ներքին քաղաքականութեան առջեւ. քաղաքական կայունութիւն, սոցիալական համերաշխութիւն եւ ժողովրդավարութեան պահպանում: Ահա թէ ինչով է բացատրւում համաձայնական իշխանութեան անհրաժեշտութիւնը:

Արցախեան շարժման 20-ամեակը դիմաւորում ենք ազգային այս ճգնաժամն էլ յաղթահարելու, պատմութեան գիրկը նետելու ամբողջական պատասխանատուութեամբ ու պատրաստակամութեամբ:

«Դրօշակ» - ի հարցերին պատասխանում է ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ

ԱՐՄԷՆ ՌՈՒՍՏԱՄԵԱՆԸ



«Դրօշակ» - ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի յայտարարութեան մէջ փաստւում է՝ նախագահական ընտրութիւնները ցոյց տուեցին, որ ժողովրդի մի զգալի հատուածը լուրջ բարեփոխումներ իրականացնելու յստակ պահանջ ունի եւ որ այդ հատուածի «տրամադրութիւնները քաղաքական միջոցներով պաշտպանելու եւ ուղղորդելու փոխարէն, ցաւօք, ընտրուեց առճակատման կործանարար ճանապարհը»: Ի՞նչ էք կարծում, հնարաւո՞ր էր խուսափել այդ ճանապարհից եւ ինչպէ՞ս: Քաղաքական մշակոյթի մեր ձեռքբերումները բաւարա՞ր էին իրականացնելու այդ «խուսափումը»:

Ա. Ռ. - Հարցադրումը շատ ճիշտ է հէնց միայն այն առումով, որ մենք կարեւորում ենք քաղաքական մշակոյթի դերակատարութիւնն այս հարցերի կարգաւորման համար: Ինչո՞ւ: Որովհետեւ մենք վստահ ենք, որ կար հնարաւորութիւն խուսափելու առճակատումից, կար հարցի քաղաքական լուծման ճանապարհը, բայց, ցաւօք, ընտրուեց առճակատման կործանարար ուղին: Թէ ինչու տեղի ունեցաւ այդ առճակատումը, մենք արդէն տուել ենք մեր պատճառաբանումները, որոնք հետեւեալ երկու խնդիրներով են պայմանաւորուած. նախ՝ ի սկզբանէ պարզ էր, որ ժողովուրդը իշխանափոխութիւն է ցանկանում ոչ թէ ինքնանպատակ, այլ այն պատճառով, որ իրականում հասունացել է բարեփոխումների՝ խորքային բարեփոխումների լուրջ պահանջ, այնպիսի բարեփոխումների, որ տեսանելի եւ շօշափելի լինեն իր համար: Սա՝ մի կողմից, իսկ միւս կողմից էլ ժողովուրդը ցանկանում է դրան հասնել առանց ցնցումների ու առճակատումների: Հասարակական այս կարեւորագոյն պահանջներն, ի վերջոյ, սխալ գնահատուեցին:

Երկրորդ պատճառը, որ յանգեցրեց առճակատման, թաքնուած է ընդդիմադիր բեւեռի առաւելապաշտական մօտեցումների ծալքերում: Այդ մօտեցումների բուն էութիւնն այն էր, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի ձեւաւորած ընդդիմութիւնն առաջնորդւում էր ամէն ինչ կամ ոչինչ նշանաբանով: Նրանք չէին էլ մտածում, որ կարելի էր բաւարարուել ստացած ձայներին համապատասխան ձեռքբերումներով: Ի՞նչ է նշանակում, օրինակ, նրանց այն պահանջը, որ եւ նախագահի պաշտօնը պէտք է իրենք ստանան, եւ իրենց պէտք է իրաւունք վերապահեն ցրել Ազգային ժո-

ղովն ու այն վերակազմաւորել իրենց մեծամասնութեամբ: Իրականում սա նշանակում էր միահեծան մի իշխանութիւնը փոխարինել մի այլ միահեծան իշխանութեամբ:

Հէնց այս առաւելապաշտական նկրտումներն էլ ի չիք դարձրին խնդրի տրամաբանական լուծումը: Իսկ տրամաբանական լուծումը մենք տեսնում էինք բանակցութիւնների սեղանի շուրջ, որին որպէս օրակարգի նիւթ եւ մենք, եւ մեր թեկնածուն առաջարկել էինք միջոցառումների երեք կարեւորագոյն ուղղութիւններ, որոնց ընդունումը լաւագոյն ելքը կը լինէր ստեղծուած իրավիճակից: Աւելորդ չէ մէկ անգամ եւս համառօտ անդրադառնալ դրանց. ընտրական գործընթացները պէտք է դարձնել այնպիսին, որ բացառուեն բոլոր տիպի ընտրախախտումները, ապահովել խօսքի լիարժէք ազատութիւնն ու բազմակարծութիւնը՝ դրանք տարածելով բոլոր ԶԼՄ-ների, այդ թւում նաեւ Հանրային հեռուստատեսութեան վրայ, եւ վերջապէս, գործունէութեան այնպիսի հնարաւորութիւններ տալ ընդդիմութեանը, որպէսզի ընդդիմութիւնն իր համար որպէս գործելու միակ ձեւ չընտրի փողոցային պայքարը: Այս առաջարկներին, ի դէպ, արձագանքեցին գրեթէ բոլոր քաղաքական ուժերը, բացի առաւելապաշտական խնդիրներ հետապնդող ընդդիմադիր բեւեռից: Այստեղ էր, որ իրեն զգացնել տուեց քաղաքական հարցերը բանակցային սեղանի շուրջ լուծելու քաղաքական մշակոյթի բացակայութիւնը: Ինչեւէ, մեզ չյաջողուեց խուսափել այնքան անցանկալի առճակատումից, ինչի իրողութեան հետ այսօր ստիպուած ենք հաշտուել ամէնքս: Սակայն, տեղի ունեցածից հետեւութիւններ անելու փոխարէն, հակամարտութեան երկու բեւեռներում յայտնուած ուժերը հիմա էլ փորձում են տեղի ունեցածի համար մեղաւորներ փնտրել միմեանց «բանակներում»: Դա, մեր համոզմամբ, անշնորհակալ գործ է եւ կարող է տանել նորանոր սխալների: Երբ խաղաղ պայմաններում արիւն է թափւում, երբեք չես կարող ասել, թէ այդ արեան մեղքն ընկնում է մի կողմի վրայ: Մեղքը տուեալ դէպքում բոլորինն է: Այստեղ չկան յաղթողներ եւ պարտուողներ: Երեւանի փողոցներում պարտուեցինք բոլորս: Սա պէտք է յստակ գիտակցել: Իշխանութիւնները պէտք է հասկանան, թէ որտեղ են իրենք սխալուել, ընդդիմութիւնն էլ իր հերթին պէտք է վերլուծութիւն կատարի եւ իր համար պարզի, թէ անհանդուրժողական ու մերժողական քարոզչութեան որ փուլում իրավիճակը դուրս եկաւ իր հսկողութիւնից: Օրինաչափ է, չէ՞, երբ լիցքեր ես կուտակում առանց հաշուի առնելու հնարաւորութիւններդ, գալու է մի պահ, երբ չափից շատ կուտակած լիցքերի տիրապետումն այլեւս վեր է լինելու քո ուժերից: Հէնց այդ պահից սկսած դու ես արդէն ենթարկւում այդ լիցքերի պարպման գործընթացին: Մտածել, թէ ընդդիմադիր բեւեռի առաջնորդները չէին գիտակցում դա, սխալ կը լինի, եւ շատերի պէս մենք էլ հակուած ենք մտածելու, որ լիցքերի կուտակման մեր նշած գործընթացի դէմը չի առնուել միտումնաւոր, մի բան, որ աւելի է խտացնում ընդդիմութեան մեղքի բաժինը:

«Դրօշակ» - Ողբերգական վախճանով բախման դրդապատճառները, պայթուցիկ այդ նիւթը, ըստ երեւոյթին, լիովին չի լիցքաթափուել եւ ամենայն հաւանականութեամբ, այս կամ այն չափով ու եղանակով, դեռեւս իրեն զգացնել է տալու: Ընդվզման դրսեւորումներն իրենց անցանկալի զարգացումներով, հնարաւոր է, վտանգելու են ոչ միայն Հայաստանի Հանրապետութեան, այլեւ ԼՂՀ բնականոն կեանքն ու առաջընթացը: ՀՅԴ Հայաստանի ԳՄ-ն, այս պայմաններում, հանգուցալուծման միակ ճանապարհ է համարում «հատուածական կուսակցական շահի անվերապահ ստորադասումը յանուն Հայրենիքի, եւ հայութեան առջեւ կանգնած ազգային-պետական նպատակների իրագործման լաւագոյն լուծում կարող է լինել խորհրդարանական բոլոր ուժերի ընդգրկումով ազգային համաձայնութեան կառավարութեան ձեւաւորումը»:

Չէ՞ք կարծում, որ եթէ ազգային համաձայնութեան մասին է խօսքը, ապա պէտք է նկատի ունենալ ոչ միայն խորհրդարանական ուժերին:

Ա. Ռ. - Իրավիճակի լիցքաթափումը մէկ-երկու օրում լուծուելիք խնդիր չէ: Այն, ինչ որ բացասական առումով մենք կուտակել ենք, դեռ երկար ժամանակ կ'ուղեկցի մեզ: Աւելին՝ մենք վստահ ենք, որ այս հարցի հետ կապուած դեռ

բազմաթիւ խնդիրներ են առաջանալու, որոնց լուծումները ստիպուած ենք լինելու փնտրել բոլորս միասին: Հէնց այս մտահոգութեամբ է, որ մենք կոչ ենք արել բոլորին հատուածական կուսակցական շահերը յետին պլան մղել յանուն ընդհանուր մեծ գործի, յանուն Հայրենիքի եւ պետականութեան ամրապնդման: Ինչու ենք դա այդքան կարեւորում:

Նախ եւ առաջ պէտք է ընդունել, որ հասկանալի պատճառներով Լեւոն Տէր-Պետրոսեանի յետեւից գնացող ընտրազանգուածը նոյնպէս մեր ժողովուրդն է, որ մենք պարտաւոր ենք լսել նրա բողոքն ու պահանջները, յարգել նրա դիրքորոշումն ու նրա ընդվզումն ընդունել որպէս ահազանգ մեր բոլոր թերացումների: Դա մենք չպէտք է ընկալենք որպէս մի օտար, անհնազանդ զանգուածի ինքնանպատակ հակադրութիւն: Աւելին ասեմ. այդ ընդվզման մէջ կան շատ ռացիոնալ կէտեր, այդ ընդվզումն ունի օբյեկտիւ շատ պատճառներ: Ի վերջոյ այդ ընդվզումի հիմքում ընկած է իր տնտեսական ու սոցիալական վիճակից դժգոհ ժողովրդի բողոքը: Մեր առօրեայ կեանքում ու կենցաղում առկայ բազում անարդարութիւններն են ծնել այդ բողոքը: Ուստի իշխանութիւններն ու քաղաքական ուժերը միասնաբար պէտք է շատ արագ եւ կարճ ժամկէտներում կատարեն այնպիսի քայլեր, որ այդ դժգոհութեան դրդապատճառները նուազեն: Ես չեմ ասում, թէ դժգոհութիւնն այդ կերպ կը վերանայ: Հասարակութեան մէջ դժգոհութիւն բոլոր երկրներում էլ կայ: Խօսքը դժգոհութեան ծաւալների ու դրդապատճառների մասին է: Առաջին հերթին պէտք է վերացուեն այն դրդապատճառները, որոնք կարող են հիմք դառնալ հասարակական համընդհանուր բողոքի: Նորմալ երկրներում սոցիալական բողոքների եւ դրանց բուն պատճառների վերացումը զուտ ժամանակի եւ տուեալ երկրի հնարաւորութիւնների հետ կապուած հարց է, իսկ մեզանում, ցաւօք, այդ դժգոհութիւնների դրդապատճառները արդիւնք են քաղաքական, հայեցակարգային կոպիտ սխալների, որոնց շտկումն աւելի լուրջ աշխատանք է պահանջում: Եթէ դժգոհութիւնն ունի նման դրդապատճառներ, ապա անհրաժեշտ պահին միշտ էլ կը գտնուի մէկը, որն այդ դժգոհութիւնը կը վերածի քաղաքական պայքարի եւ լուրջ ընդվզման: Հէնց դրա ականատեսը եղանք մենք

ընտրարշաւի մեկնարկից սկսած մինչեւ մարտի 2-ը: Ստեղծուած իրավիճակում մեր գլխաւոր խնդիրը ժողովրդի դժգոհութեան տրամաբանութեան մէջ բեկում մտցնելն է: Դրանով պէտք է զբաղուեն քաղաքական ուժերը, որոնք կոչուած են թէ իշխանութիւն ձեւաւորել եւ թէ ուղղորդել քաղաքական գործընթացները: Հէնց այս մօտեցումն էլ ընկած է ազգային համաձայնութեան կառավարութեան մասին մեր առաջարկութեան հիմքում: Քաղաքական կեանքի պրակտիկայից յայտնի է, որ ազգային համաձայնութեան կառավարութիւններ ստեղծուում են այն ժամանակ, երբ որեւէ երկրում առաջանում է ճգնաժամային իրավիճակի լիցքաթափման լուրջ խնդիր, երբ այլեւս աներկբայ է, որ տուեալ երկիրն ունի բեկումնային բարեփոխումների լուրջ կարիք: Որքան լիարժէք է ազգային համաձայնութիւնը, այնքան հեշտութեամբ կը յաղթահարուեն ծագած խնդիրները, այնքան աւելի կը պակասի բողոքաւոր զանգուածը:

Մենք լիարժէքօրէն պատրաստ ենք մաս կազմել նման մի կառավարութեան եւ աջակցել նրան մեր երկրում ծագած ճգնաժամը յաղթահարելու համար: Մենք նաեւ շատ ուրախ կը լինենք, որ հնարաւորինս մեծ թուով դերակատար ուժեր ներգրաւուեն այս գործընթացին եւ այն չսահմանափակուի խորհրդարանական ուժերի շրջանակով: Նոյնիսկ արմատական ընդդիմութեան մէջ էլ կան մարդիկ, ովքեր կարող են վերը յիշատակուած խնդիրների առումով օգտակար դերակատարութիւն ունենալ: Ի վերջոյ, ընդունենք թէ չընդունենք, հէնց այդ մարդկանց շնորհիւ են հասարակական դժգոհութեան հետ կապուած բազմաթիւ երեւոյթներ ճշգրիտ ձեւակերպումներ ստացել: Այդ ներուժը պէտք է կարողանալ արդիւնաւէտ օգտագործել: Կարծում եմ՝ սխալուած չեմ լինի, եթէ ասեմ, որ նման քայլը վերը յիշատակուած քաղաքական մշակոյթի ձեւաւորման մի բաղկացուցիչը կարող է դառնալ:

«Դրօշակ» - Իսկ որքանո՞վ է հնարաւոր նորանոր ուժերի ներգրաւումը քաղաքական ու տնտեսական գործընթացներում, երբ արդէն հրապարակի վրայ է կոալիցիոն պայմանագրի քառակողմ տարբերակը: Դուք կարծում էք, որ պայմանագրի դռները տակաւին բա՞ց են ցանկացողների առջեւ:

Ա. Ռ. - Ես կարծում եմ, որ կարելի է այդ դուռը բաց թողնել: Սակայն դա միայն մեր որոշելիք հարցը չէ: Կառավարութեան ձեւաւորման գործում մենք միայն օժանդակողի, նպաստողի դերակատարութիւն ունենք: Այդ գործընթացը հիմնականում իրականացնում եւ ուղղորդում է Հանրապետական կուսակցութիւնը: Սակայն դա չի նշանակում, որ հարցը վերջնականապէս լուծուած է: Ես կարծում եմ, որ այս ուղղութեամբ մենք դեռեւս քննարկումներ կ'ունենանք մեր գործընկերների հետ:

«Դրօշակ» - Շատերն այն կարծիքին են, որ Հայաստանի քաղաքական համակարգում ՀՅԴ-ն իր ներգործութիւնը կարող էր ունենալ ընդդիմութեան դաշտում: Առաւել, քան իշխանականում: Ընդդիմութեան դաշտը կամովին յանձնելով Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ մենք թոյլ ենք տալիս, որ երկար ժամանակով նրա կողքին լինեն նաեւ նրանք, ովքեր Թատերական հրապարակում էին յայտնուել ակամայ եւ կամ ընդդէմ գործող իշխանութիւնների: Եւ այդպիսիների քանակը կարծես աւելի մեծ է, քան Լեւոն Տէր-Պետրոսեանի երկրպագուներինը: ՀՅԴ-ն ինչո՞ւ չգերադասեց ընդդիմութեան մէջ յայտնուած ժողովրդի այդ հատուածի համախմբման դերը:

Ա. Ռ. - Ես կարծում եմ, որ գոյութիւն ունի այդ հարցի մի պարզ բացատրութիւն. մենք այսօր էլ համոզուած ենք, որ դեռեւս նախընտրական փուլում ճիշտ էինք բանաձեւել այն երկու խնդիրները, որոնք պէտք է ի վերջոյ միաժամանակեայ լուծում ստանան առաջիկայ տարիներին: Առաջինը՝ խորքային բարեփոխումներ իրականացնել երկրում, եւ երկրորդ՝ այդ գործընթացի ծաւալմանը զուգընթաց երկիրը զերծ պահել ներքաղաքական ցնցումներից: Այսինքն՝ մենք ձգտում ենք հասնել ժողովրդավարական կայունութեան, որն էլ ենթադրում է նշուած խնդիրների միաժամանակեայ լուծում: Ո՞ր դաշտում մեզ համար առաւել նպաստաւոր պայմաններ կային այդ նպատակներին հասնելու համար: Այս փնտրտուքն էր մեր տեւական երկընտրանքի հիմնական պատճառը:

Յաւով պէտք է նշեմ, որ մարտի 1-ի եւ 2-ի դէպքերից յետոյ մեր քաղաքական դաշտը ծայրայեղութեան աստիճան բեւեռացուած է: Դեռեւս գերիշխում է «կամ-կամ»-ի՝ մեզ համար անընդունելի մթնոլորտը: Մի բեւեռը ֆետիշացնում, ինքնանպատակ ձեւով կարեւորում է կայունութեան պահպանման խնդիրը, իսկ միւս բեւեռը պայքարն է հռչակում որպէս գերագոյն նպատակ: Ըստ նրա՝ ամէն ինչ կարելի է ոտնատակ տալ, միայն թէ երկրում ինչ-որ բան փոխուի: Այս երկու մօտեցումն էլ մեզ համար անընդունելի է: Յատկապէս անընդունելի է սեփական իշխանութիւնների դէմ «պայքար, պայքար մինչեւ վերջ»-ի գաղափարը, որն սպառնում է խարխլել մեր երկրի ու պետականութեան ճակատագիրը որոշող հիմնասիւները: Տրամաբանուած պայքարն, ըստ մեզ, պէտք է տեղաւորուի այն սահմանների մէջ, որ երկրին ու հասարակութեանը տանի դիալեկտիկ զարգացման: Ընտրութիւններից յետոյ մեզանում փոխա-

նակ գերիշխէր հակադրութիւնների պայքարի եւ միասնութեան տրամաբանութիւնը, առաջացաւ մի վիճակ, երբ հակադրուող կողմերը սկսեցին մերժել հակադրութիւնների միասնութիւնը եւ յայտնուեցին տրամագծօրէն հակառակ բեւեռներում: «Կամ-կամ»-ի տրամադրութիւնը, որ առաւել ցայտուն էր արտայայտուել ընդդիմադիր դաշտում, աւելի ճիշտ՝ բեւեռում, ընդհանրապէս որեւէ երկխօսութեան տեղ չէր թողնում եւ ոչ մէկի համար: Դու կամ իրենց հետ ես, կամ դաւաճան, տականք եւ այլն, եւ այլն: Նրանք այս իշխանութիւններին հասցրել էին այնպիսի գնահատականներ տալ եւ այնպիսի պիտակներ կպցնել, որ այդքանից յետոյ իրենց կողմից որեւէ դրական քայլ կարող էր դաւաճանական համարուել ցուցարարների կողմից:

Երկրի ապագայի մասին մեր պատկերացումները, ռազմավարական նշանակութիւն ունեցող հարցերին մեր մօտեցումները, բնական է, այս ճամբարում ընկալում չէին գտնելու: Այս դաշտում կառուցողական ընդդիմութեան մասին խօսելը եւ առհասարակ որեւէ միջանկեալ վիճակ, անընդունելի էր ի սկզբանէ:

Մեր այն մօտեցումը, որ խնդիրները լուծելով եւ միեւնոյն ժամանակ կայունութիւնը պահպանելով է հնարաւոր ապահովել երկրի առաջընթացը, աւելի լուրջ ընկալում ունեցաւ միւս կողմում: Շփումների ժամանակ մենք այս կողմին բացատրեցինք, որ մենք նոյնպէս դէմ չենք կայունութեանը, բայց կայունութիւնը չպէտք է դիտուի որպէս գերագոյն նպատակ: Կայունութիւնը երկրին պէտք է որպէս միջոց՝ ծագած հիմնախնդիրները լուծելու համար: Երբ մեր այս մօտեցումն ընդունուեց, մենք ներկայացրեցինք յետագայ բարեփոխումների մեր փաթեթը, որի իրականացման համար, ըստ մեզ, առաւել արդիւնաւէտ կը կարողանանք աշխատել իշխանութիւնների կողքին:

«Դրօշակ» - Քաղաքական բնականոն պայմաններում գործադիր իշխանութիւնը, ըստ էութեան, լինում է աւելի միատարր, քան ընդդիմութիւնը: Օրինակ, եթէ յաղթանակում է կենտրոն-աջը, ապա կենտրոն-ձախը, ծայրայեղ ձախը եւ ծայրայեղ աջը միաժամանակ յայտնւում են ընդդիմութեան դաշտում, եւ, անշուշտ, պարտադիր չէ նրանց քաղաքական միաւորումը: Գործադրի պարագան տարբեր է, ուր անխուսափելիօրէն պիտի գոյութիւն ունենան կոալիցիոն ուժերի քաղաքական հայեացքների միաւորում եւ համապատասխան դիսցիպլին: Մեր դէպքում, ներկայիս պայմանները բնականոն չեն եւ, ձեր իսկ հաստատմամբ, կոալիցիան գոյացել է երկրի քաղաքական կեանքը նորմալացնելու համար: Ահա ստացւում է մի վիճակ, ուր ընդդիմութիւնը բաղկացած է, հիմնականում, մի հոսանքից: Նորմալացումից յետոյ, Ձեր կարծիքով, քաղաքական դաշտը նոր հաւասարակշռութեա՞ն է հասնելու:

Ա. Ռ. - Ձեր այս հարցը կապուած է ապագայի հետ: Դա կախուած կը լինի այն բանից, թէ ինչպէս կ'աշխատի նորաստեղծ քառակողմ կոալիցիան: Բնական է, որ դժուար է լինելու համաձայնեցնել տեսակէտները: Որքան շատ են կողմերը, այնքան դիւրին չէ վերջնական որոշումներ կայացնելը: Բայց դա էլ իր դրական կողմերն ունի: Եթէ այդ պայմաններում կողմերն այնուամենայնիւ գալիս են համաձայնութեան, ապա կայացուած որոշումը լինում է ճշգրիտ եւ իրականութեանն աւելի համահունչ: Այս իմաստով կոալիցիոն աշխատանքն իսկապէս արդիւնաւէտ է: Բայց չեն բացառւում նաեւ այնպիսի իրավիճակներ, երբ քննարկուող հարցի կամ հարցերի շուրջ կողմերը ոչ մի կերպ չկարողանան գալ համաձայնութեան: Այդպիսի ճգնաժամային իրավիճակները մենք չենք բացառում: Կը լինե՞ն նման ճգնաժամեր, թէ՝ ոչ, ժամանակը ցոյց կը տայ, բայց ասեմ, որ կոալիցիոն համաձայնագրով նման իրավիճակների համար նոյնպէս ելքեր կան նախանշուած: Եթէ տեւական ժամանակի ընթացքում կոալիցիայի կողմերի միջեւ որեւէ հարցի շուրջ անհամաձայնութիւն է առաջանում եւ ստեղծւում է անյաղթահարելի իրավիճակ յետագայ համագործակցութեան համար, ապա կոալիցիան դադարում է նոյն ֆորմատով գոյութիւն ունենալուց:

«Դրօշակ» - Առաջնահերթ բոլոր այն խնդիրները, որ ՀՅԴ Հայաստանի ԳՄ-ի յայտարարութեամբ դրւում են ազգային համաձայնութեան կառավարութեան առջեւ, որքանո՞վ են ընդգրկուել քառակողմ կոալիցիայի

քաղաքական համաձայնագրի մէջ եւ որքանո՞վ են դրանք իրականանալի ստեղծուած կացութեան մէջ:

Ա. Ռ. - Մեր յայտարարութիւններով ներկայացուած առաջնահերթ խնդիրները, գրեթէ ամբողջութեամբ (ընդամէնը ձեւակերպումային տարբերութիւններով) ընդգրկուել են քառակողմ կոալիցիայի քաղաքական համաձայնագրի մէջ: Այս առումով ստարտը բաւականին յաջող էր, եւ ծրագրերը, որոնք մենք նախանշել էինք յայտարարութիւնների մէջ, առաւել կարճ ժամկէտներում կարող են իրականութիւն դառնալ:

«Դրօշակ» - Ի՞նչ գործառոյթներ է իրականացնելու հանրապետութեան նախագահին կից ստեղծուելիք Հասարակական խորհուրդը, եւ որքանո՞վ է այդ կառոյցը լինելու անկախ, անկաշկանդ իր քննարկումների, եզրակացութիւնների եւ առաջարկների մէջ:

Ա. Ռ. - Մեր այս առաջարկը, եթէ նկատել էք, առաջին հերթին ուղղուած է իրավիճակի լիցքաթափմանը: Նման առաջարկներ եղել են նաեւ նախկինում, բայց դրանք յանգում էին Ազգային ժողովում ժամանակաւոր յանձնաժողով ստեղծելու գաղափարին: Մեր կարծիքով՝ Աժ ժամանակաւոր յանձնաժողովը, որը համալրուած կը լինէր միայն մի քանի պատգամաւորներով, ի զօրու չէր լինի լուծել այն հարցերը, որոնք մենք այսօր փորձում ենք դնել ՀՀ Նախագահին կից Հասարակական խորհրդի իրաւասութեան տակ: Նախագահն անձամբ է ստեղծելու այս խորհուրդը, իր ընտրութեան մէջ ազատ է եւ կարող է խորհրդի կազմում ընդգրկել համընդհանուր ճանաչում ունեցող այնպիսի մարդկանց, որոնք կը կարողանան գործունէութիւն ծաւալել ուզածդ բնագաւառում: Այս ձեւաչափով ստեղծուելիք Հասարակական խորհուրդը եւ աւելի մեծ հեղինակութիւն կը վայելի, եւ աւելի դիւրին պայմաններ կ'ունենայ իր խօսքն ասելու հասարակութեանը: Մենք, ամենայն հաւանականութեամբ, նորընտիր նախագահին կոչ կ'անենք իր պաշտօնավարութեան առաջին իսկ ամիսներին ձեռնամուխ լինել այս գործին: Որպէսզի հասկանալի լինի, թէ ինչու ենք կարեւորում այս հարցը իրավիճակի լիցքաթափման առումով, նշեմ մի քանի խնդիրներ, որոնցով, մեր պատկերացմամբ, պէտք է զբաղուի այս խորհուրդը: Օրինակ՝ ապատեղեկատուութեան տարածման խոչընդոտումը եւ, ասենք, բանտարկեալների կարգավիճակի որոշումը (քաղաքական, թէ քրէական) հարցեր են, որոնց պարզաբանումը ծանրակշիռ մարմնի կողմից էապէս կը նպաստի հասարակութեան մէջ վստահութեան մթնոլորտի առաջացմանը:

Իր կենսունակութիւնն ապացուցելու դէպքում, Հասարակական խորհուրդը յետագայում կարող է նաեւ կամրջի դեր ստանձնել ժողովուրդ-իշխանութիւն կապի համար:



ԻՐԱՎ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ՝

ՆՐԱ ԱՐԴԱՐ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍԵԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փիլիսոփայութեան դոկտոր, պրոֆեսոր

1988-ի փետրուարին սկսուել է մեր ժողովրդի պատմութեան մէջ իր նախադէպը չունեցող համաժողովրդական շարժում՝ Ղարաբաղեան շարժումը: Քսան տարի... Թւում է, հայերս արդէն պէտք է տիրապետէինք հիմնախնդրի բոլոր նրբութիւններին, նրա առանցքային հարցերի վերաբերեալ ունենայինք ճշգրտուած-խմբագրուած-յղկուած բանաձեւեր: Աւաղ: Պարզւում է, որ մենք չենք հասցրել դա անել: 88-ի փետրուարից անցել է քսան տարի, իսկ մենք դեռ ստիպուած ենք արձանագրել, որ մեր պետական ու քաղաքական գործիչները, այդ թւում նաեւ նրանք, ովքեր պատասխանատու են (կամ ոչ վաղ անցեալում պատասխանատու էին) մեր պետութեան անվտանգութեան համար եւ տարբեր միջազգային ատեաններում ներկայացնում էին Հայաստանի Հանրապետութեան դիրքորոշումը Ղարաբաղեան հակամարտութեան վերաբերեալ, տարբեր կերպ են հասկանում խնդիրը եւ տարբեր, յաճախ իրարամերժ պատասխաններ են տալիս հիմնախնդրի առնչութեամբ ծագող միեւնոյն հարցերին: Ինչպիսին էլ լինի նման անցանկալի իրողութեան բացատրութիւնը, ինչպիսին էլ լինեն արդարացումները, մենք այսօր ստիպուած ենք փաստել հետեւեալը. նախընթաց տարիներին յաճախ, մեր իսկ օգնութեամբ, ձեւաւորուել եւ միջազգային շրջանակներում արմատաւորուել է խնդրի ձեւախեղուած, անհայանպաստ մի կերպար, որը բացառում է հակամարտութեան արդար կարգաւորումը: Հիմնախնդրի տեղեկատուական կերպարում կեղծուած են գրեթէ բոլոր բանալի հասկացութիւնները: Հիմնահարցի գիտականօրէն մշակուած եւ ազգայնօրէն որդեգրուած հայեցակարգի բացակայութեան պայմաններում մեր իսկ կողմից կամ մեր մասնակցութեամբ ու համաձայնութեամբ շրջանառութեան մէջ են դրուած հիմնախնդրի բուն էութիւնը, նրա պատմութիւնն ու իրաւական հիմքերը աղճատող բանաձեւեր:

Ստորեւ մենք կը շարադրենք հիմնական այն դրոյթներն ու բանաձեւերը, որոնք, մեր կարծիքով, սկզբունքային նշանակութիւն ունեն հիմնահարցը ըմբռնելու եւ այն իր էութեանը համարժէք ձեւով աշխարհին ներկայացնելու տեսակէտից: Դրանք դրոյթներ են, որոնց իմացութիւնը, մեր կարծիքով, պարտադիր է ամէն մէկի համար, ով մտահոգ է հակամարտութեան արդար կարգաւորման հարցով:

ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՅԹՆԵՐ

Դրոյթ առաջին: Գոյութիւն չունի որեւէ իրաւական փաստարկ, որեւէ իրաւական փաստաթուղթ, որով մերօրեայ Ադրբեջանական Հանրապետութիւնը կարող էր հիմնաւորել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր յաւակնութիւնները: Չկայ միջազգային իրաւունքի որեւէ նորմ, Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ որեւէ պայմանագիր կամ ԽՍՀՄ որեւէ օրէնք, որը կասկածի տակ դնէր Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կայացման լեգիտիմութիւնը: Միջազգային իրաւունքի եւ ԽՍՀՄ՝ որպէս 1991-ին լուծարուած երկրի, օրէնքների տեսակէտից ԼՂՀ կայացումը անբասիր է:

Դրոյթ երկրորդ: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Բաքուի ենթակայութիւնից դե-ֆակտո դուրս է բերուել դեռեւս ԽՍՀՄ օրօք, 1989-ին, երբ մարզում մտցուել էր յատուկ

կառավարում: Յատուկ կառավարման կարգավիճակը, երբ մարզի բոլոր հիմնարկ-ձեռնարկութիւնները, կուսակցական, արհմիութենական եւ հասարակական կազմակերպութիւնները դրուել են Մոսկուայի կամ Երեւանի անմիջական ենթակայութեան տակ, ժամանակագրօրէն եղել է մարզի վերջին կարգավիճակը ԽՍՀՄ տարիներին:

Դրոյթ երրորդ: ԼՂՀ-ն 1991-ին ասպարէզ է իջել Լեռնային Ղարաբաղում (պատմական Արցախում) անընդմէջ գոյատեւած հայկական անկախ ու կիսաանկախ պետականութիւնների՝ Խաչէնի իշխանութեան, Ղարաբաղի մելիքութիւնների, Ղարաբաղի խանութեան, որպէս խորհրդային տիպի պետականութիւն հիմնուած ԼՂԻՄ-ի ժառանգական գծի վրայ: Լեռնային Ղարաբաղը պատմականօրէն չի պատկանել «Ադրբեջան» անուանումով որեւէ անկախ պետութեան եւ այսօր չի պատկանում Ադրբեջանական Հանրապետութեանը ոչ խնդրի իրաւական հիմքերի տեսակէտից, ոչ էլ դէ-ֆակտո:

Դրոյթ չորրորդ: 1991 թ. օգոստոսի 30-ի «Անկախ պետականութեան վերականգնման մասին» հռչակագրով եւ հոկտեմբերի 18-ի «Պետական անկախութեան մասին» սահմանադրական ակտով Ադրբեջանական Հանրապետութիւնը հրաժարուել է լինել նախկին Ադր. ԽՍՀ իրաւայաջորդը եւ վերականգնել 1918 թ. թուրքական ռազմական ինտերվենցիայի արդիւնքում ասպարէզ մտած եւ առանց լեգիտիմ սահմաններ ձեռք բերելու պատմութեան թատերաբեմը լքած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետութեան պետականութիւնը: Իրաւական այդ ակտով մերօրեայ Ադրբեջանական Հանրապետութիւնը 1991-ին ԽՍՀՄ-ից դուրս է եկել առանց Նախիջեւանի ու Լեռնային Ղարաբաղի, քանի որ ոչ Նախիջեւանը, ոչ էլ Լեռնային Ղարաբաղը մաս չեն կազմել այն պետութեան, որի իրաւայաջորդն է դարձել ինքը:

Դրոյթ հինգերորդ: Ադրբեջանական Հանրապետութիւնը չէր կարող անկախութիւն ձեռք բերել նախկին Ադր. ԽՍՀ սահմաններում եւ այդ տեսակէտից միակն էր նախկին միութենական հանրապետութիւնների շարքում: Ադրբեջանական Հանրապետութեան անկախացումը Ադր. ԽՍՀ սահմաններում կապուած էր միջազգային իրաւական արգելքների հետ, որոնք ամրագրուած էին Ադր. ԽՍՀ սահմաններում յայտնուած տարածքների վերաբերեալ գործող միջպետական բազմակողմ պայմանագրերում:

Դրոյթ վեցերորդ: Ադրբեջանական Հանրապետութիւնը 1991-ին չի ունեցել իր ինքնիշխանութիւնը Ադր. ԽՍՀ սահմաններում հռչակելու իրաւունքը, քանի որ 1991-ին նա հրաժարուել էր Ադր. ԽՍՀ իրաւայաջորդութիւնից եւ իրեն հռչակել 1918-1920 թթ. գոյատեւած, առանց սահմաններ ձեռք բերելու պատմական ասպարէզը լքած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետութեան իրաւայաջորդ, որի կազմում ոչ Լեռնային Ղարաբաղ եւ ոչ էլ Նախիջեւան է եղել:

Դրոյթ եօթերորդ: Ադրբեջանական Հանրապետութիւնը 1991-ին չէր ունենայ իր ինքնիշխանութիւնը Ադր. ԽՍՀ սահմաններում հռչակելու իրաւունքը նաեւ Ադր. ԽՍՀ իրաւայաջորդը մնալու դէպքում, քանի որ Ադր. ԽՍՀ սահմաններում 20-ական թուականներին յայտնուած Նախիջեւանի վերաբերեալ կայ 1921 թ. կնքուած եւ մինչ օրս գործող, 1991-ին ԽՍՀՄ օրէնքների նկատմամբ գերակայող Կարսի բազմակողմ պայմանագիրը, որն Ադրբեջանական Հանրապետութեանը արգելում էր իր ինքնիշխանութիւնը տարածել Ադր. ԽՍՀ հովանաւորութեանը (միայն հովանաւորութեանը) յանձնուած այդ տարածքի վրայ:

Դրոյթ ութերորդ: ԽՍՀՄ լուծարման ընթացքում Ադրբեջանական Հանրապետութիւնը ընդհանրապէս սահմաններ չի հռչակել, չնայած պարտաւոր էր դա անել Ադր. ԽՍՀ իրա-ւայաջորդութիւնից հրաժարուելու եւ առանց սահմաններ ձեռք բերած մի պետականութեան իրաւայաջորդը դառնալու պարագայում: Սահմանների անխախտելիութեան սկզբունքը վերաբերում է լեգիտիմ սահմաններին, իսկ Ադրբեջանական Հանրապետութիւնը (ԱՀ) այդպիսի սահմաններ մինչ օրս չունի:

Դրոյթ իններորդ: 1991 թուականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, մինչեւ ԱՀ միջազգային ճանաչումը (այն ՄԱԿ է ընդունուել 1992 թուականի մարտին), Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը կայացել է վերջինիս չպատկանող տարածքներում եւ այսօր էլ վերահսկում է

նման տարածքներ: ԼՂ-ի ժողովուրդը 1991-ին իր անկախութիւնը հռչակել է ոչ թէ ինքնորոշման առաջնային ակտով, այլ ազգային պետական կարգավիճակի բարձրացման ճանապարհով:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՈՒ ԻՐԱՒԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՒՄ

Դրոյթ տասներորդ: Ռուսական կայսրութեան փլուզման տարիներին, 1918-1920 թուականներին, Լեռնային Ղարաբաղում իշխանութիւնը իրագործում էին երկրամասի ազգաբնակչութեան Լիազօր ներկայացուցիչների համագումարը եւ նրա կողմից ձեւաւորուած Ազգային խորհուրդը, որոնք վերահսկում եւ կառավարում էին երկրամասի տընտեսական, քաղաքական եւ մշակութային կեանքը՝ ամբողջ ծաւալով: Լիազօր ներկայացուցիչների համագումարներում (1918-1920 թթ. տեղի է ունեցել լիազօր ներկայացուցիչների ինը համագումար) ներկայացուած է եղել ողջ Լեռնային Ղարաբաղը՝ ներառեալ Կենտրոնական ու Հիւսիսային Արցախը: 1918-1920 թթ. Լեռնային Ղարաբաղը եղել է դէ-ֆակտո անկախ վարչաքաղաքական կազմաւորում՝ ինքնիշխան պետութեանը յատուկ գլխաւոր ատրիբուտներով: Լիազօր ներկայացուցիչների բոլոր համագումարները (բացառութեամբ եօթերորդի) երկրամասը հռչակել են 1918 թ. մայիսին հռչակուած Հայաստանի Հանրապետութեան անկապտելի մաս:

Դրոյթ տասնմէկերորդ: 1920 թ. նոյեմբերի 30-ին Բաքուն հրաժարուել է Հայաստանի նկատմամբ տարածքային իր յաւակնութիւններից, Լեռնային Ղարաբաղը ճանաչել էր Խորհրդային Հայաստանի անվիճելի տարածք, իսկ երկու օր յետոյ՝ դեկտեմբերի 2-ին ճանաչել էր ԼՂ-ի ժողովրդի ազատ ինքնորոշման իրաւունքը: Համարելով ԼՂ-ի վերաբերեալ վէճն աւարտուած եւ հիմնուելով ԼՂ-ի ժողովրդի կամքի ազատ արտայայտութեան վրայ, որն ամրագրուել է 1918-1920 թուականներին տեղի ունեցած ԼՂ-ի լիազօր ներկայացուցիչների համագումարների որոշումներում, 1921 թ. յունիսի 12-ին Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան կառավարութիւնը ԼՂ-ն հռչակել է իր անկապտելի մասը:

Դրոյթ տասներկուերորդ: Մէկ ամիս չանցած՝ սոցիալիստական յեղափոխութիւնը դէպի մահմեդական Արեւելք արտահանելու բոլշեւիկեան ծրագրերի հունում արդէն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչուած Լեռնային Ղարաբաղը նրանից օտարուել եւ Ադր. ԽՍՀ սահմաններն է մտցուել՝ Ռուսաստանի կոմունիստական (բոլշեւիկեան) կուսակցութեան Կովկասեան բիւրոյի 1921 թ. յուլիսի 5-ի որոշմամբ, որը նման հարցեր լուծելու որեւէ լիազօրութիւն չունէր: Անկախ այն բանից, որ երրորդ երկրի (Խորհրդային Ռուսաստանի) ոչ սահմանադրական, կուսակցական մի մարմին (որպիսին եղել է Կովբիւրօն) չի ունեցել Անդրկովկասում տարածքային հարցեր լուծելու իրաւունք, չնայած որոշումը «ընդունուել է» առանց քննարկման ու քուէարկութեան եւ առանց ԼՂ-ի ներկայացուցիչների մասնակցութեան, այն իրենով փաստել է, որ Բաքուն եւ Մոսկուան 1921-ին ճանաչել են իր պատմական տարածքներում ԼՂ-ի ժողովրդի՝ խորհրդային տիպի պետականութիւն ունենալու իրաւունքը: 1991-ին, այն բանից յետոյ, երբ Բաքուում հրաժարուել են Ադր. ԽՍՀ իրաւայաջորդութիւնից եւ զրկուել ԼՂ-ի հետ ինչ-որ յարաբերութիւն ունենալու միակ եւ այն էլ ապօրինի հիմքից, Կովբիւրոյի որոշման իրաւազօրութեան կամ անիրաւազօրութեան հարցը կորցրել է իր իրաւական նշանակութիւնը: Ընդունո՞ւմ, թէ մերժում է Կովբիւրոյի որոշման իրաւազօրութիւնը, միեւնոյն է՝ Բաքուն այլեւս կապ չունի գոյութիւն չունեցող Ադր. ԽՍՀ-ին օրինաբար կամ ապօրինի յանձնուած Լեռնային Ղարաբաղի հետ, որովհետեւ նա իրաւայաջորդը չէ խորհրդային այն հանրապետութեան, որի սահմաններում 1921-ին յայտնուել է Լեռնային Ղարաբաղը:

Դրոյթ տասներեքերորդ: ԼՂԻՄ-ը Կովբիւրոյի որոշման համաձայն իր սահմաններում պէտք է ներառեր ողջ Լեռնային Ղարաբաղը: Այդ որոշմամբ լայն մարզային ինքնավարութիւն էր տրւում ողջ աշխարհագրական Լեռնային Ղարաբաղին, այլ ոչ թէ նրա մի մասին, ինչը արտացոլուել է մարզի՝ 20-30-ական թուականների անուանման մէջ (АОНК — Автономная область Нагорного Карабаха): 1923 թուականի յուլիսի 7-ի դեկրետով Բաքուն, խախտելով Կովբիւրոյի առանց այն էլ ապօրինի որոշումը, մարզը հիմնել է ԼՂ-ի մի մասի վրայ, նրա սահմաններից դուրս թողնելով երկրամասի հիւսիսային, կենտրոնական, արեւ-

մտեան եւ հարաւային շրջանները, որի վրայ հիմնուելով 1936 թուականին ԽՍՀՄ նոր սահմանադրութեան ընդունման կապակցութեամբ մարզին տրուել է նոր անուանում (НКАО – Нагорно-Карабахская автономная область): Խորհրդային Հայաստանից օտարուել է ողջ Լեռնային Ղարաբաղը՝ նրան լայն մարզային ինքնավարութիւն տալու պայմանով, իսկ մարզ հիմնուել է ԼՂ-ի մի մասի վրայ:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՒ ԻՐԱՒԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԽՍՀՄ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դրոյթ տասնչորսերորդ: ԼՂՀ-ն 1991-ին, ԽՍՀՄ լուծարման ընթացքում, չի կայացել Ադրբեջանական Հանրապետութիւնից անջատուելու ճանապարհով: Նա կայացել է վերջինիս չպատկանող այն տարածքների մի մասի վրայ, որոնք Կովբիւրոյի որոշմամբ օտարուել էին Խորհրդային Հայաստանից եւ որոնք պէտք է ԼՂԻՄ-ի մաս կազմէին: ԼՂ-ի կենտրոնական ու հիւսիսային շրջանները, ինչպէս նաեւ Նախիջեւանը, այսօր մնում են Ադրբեջանական Հանրապետութեան ապօրինի վերահսկողութեան տակ: Ըստ հիմնախնդրի իրաւական փաթեթի դրանք Բաքուի կողմից օկուպացուած տարածքներ են:

Դրոյթ տասնհինգերորդ: ԼՂ-ի ժողովրդի ազատ ինքնորոշման իրաւունքը ճանաչուել է մի քանի անգամ: Առաջինը այդ իրաւունքը ճանաչել է Ադր. ԽՍՀ-ն դեռեւս 1920 թ. դեկտեմբերի 2-ին՝ Երեւանում խորհրդային կարգերի հաստատման կապակցութեամբ հրապարակած հռչակագրով: Այնուհետեւ ԼՂ-ի ազատ ինքնորոշման իրաւունքը ճանաչուել է 1990 թ. ապրիլի 3-ին ընդունուած «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետութեան դուրս գալու հետ կապուած հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրէնքով, որի օգտին քուէարկել են նաեւ Ադր. ԽՍՀ-ից եւ ԼՂԻՄ-ից ընտրուած ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորները: Օրէնքն արտօնում էր խորհրդային ինքնավար կազմաւորումներին ԽՍՀՄ-ից միութենական հանրապետութեան դուրս գալու դէպքում ինքնուրոյն որոշել իրենց ազգային պետական կարգավիճակը, այդ թւում եւ՝ հիմնել անկախ պետութիւն: Այսօր խօսք կարող է լինել ոչ թէ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի ճանաչման (այն բազմիցս ճանաչուել է), այլ արդէն ճանաչուած իրաւունքը յարգելու մասին:

Դրոյթ տասնվեցերորդ: Մերօրեայ Ադրբեջանական Հանրապետութիւնը Ադր. ԽՍՀ սահմաններում ճանաչուել է տարածքային ամբողջականութեան եւ սահմանների անխախտելիութեան միջազգային իրաւունքի նորմերի խախտումով, քանի որ այդ սկզբունքները վերաբերում են լեգիտիմ սահմանների եւ օրինաբար պատկանող տարածքների, այլ ոչ թէ զաւթուած տարածքների ու զաւթման արդիւնքում ստեղծուած սահմանների: Տարածքային ամբողջականութեան սկզբունքը, եթէ նկատի են առնում առանց իրաւայաջորդի անէութեան գիրկն անցած Ադր. ԽՍՀ սահմանները, կիրառելի չէ ԱՀ նկատմամբ հետեւեալ պատճառներով:

Առաջին. 1991-ին նա իրեն հռչակել է միջազգային հանրութեան կողմից դէ-եուրէ չճանաչուած եւ պատմական ասպարէզը առանց սահմաններ ձեռք բերելու լքած ԱԴՀ իրաւայաջորդը:

Երկրորդ. 1991-ին ԱՀ-ն սահմաններ չի հռչակել, չնայած պարտաւոր էր դա անել Ադր. ԽՍՀ իրաւայաջորդութիւնից հրաժարուելու եւ սահմաններ ձեռք չբերած ԱԴՀ պետականութիւնը վերականգնելու պարագայում:

Երրորդ. գործող Կարսի պայմանագիրը արգելում է ճանաչել Ադրբեջանական Հանրապետութեան ինքնիշխանութիւնը Նախիջեւանի վրայ, քանի որ այն ԱԴՀ մաս չի կազմել եւ չի տրուել Ադր. ԽՍՀ-ին որպէս մի տարածք, որի վրայ պէտք է տարածուէր նրա ինքնիշխանութիւնը, այլ յանձնուել է միայն եւ միայն նրա հովանաւորութեանը:

Չորրորդ. նախկին Ադր. ԽՍՀ սահմաններին յաւակնելու իրաւական արգելքները, լեգիտիմ սահմաններ ձեռք չբերած 1918-1920 թթ. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետութեան պետականութեան վերականգնումը, ինչպէս նաեւ 1991-ի սեպտեմբերին ԼՂՀ հռչակումը Ադրբեջանական Հանրապետութեանը տալիս են անկախացման առաջնային ակտով կայացող պետութեան իրաւական կարգավիճակ, որին սահմաններ չպէտք է տրուեն դրսից եւ ուրիշների նկատմամբ գործադրուող բռնութեամբ, ինչպէս դա արուել է: Այդ սահմանները նա պէտք է ձեռք բերի ժողովրդավարական յայտնի ուղիներով:

Դրոյթ տասնեօթերորդ: Խորհրդային տարիներին ԼՂ-ի ժողովուրդը ԽՍՀՄ կենտրոնական իշխանութիւնների առջեւ բարձրացրել է երկրամասը Հայաստանին վերամիաւորելու հարցը՝ զանգուածային ստորագրահաւաքների, ըմբոստութեան միջադէպերի ձեւով: 1988-ի փետրուարին «Միացում» կարգախօսով սկսուած Ղարաբաղեան շարժումը իր բնոյթով եղել է ԽՍՀՄ ամբողջատիրութեան համար աննախադէպ, դեմոկրատական ու ազատագրական շարժում եւ այդպէս էլ ընկալուել է միջազգային հանրութեան կողմից: Եստոպելի սկզբունքը կիրառելի չէ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ:

Դրոյթ տասնութերորդ: 1992 թ. մարտին Ադրբեջանական Հանրապետութիւնը ՄԱԿ է ընդունուել նախկին Ադր. ԽՍՀ սահմաններով եւ այսօր ճանաչուած է այդ սահմաններում: Ճանաչման ակտը ոչ թէ իրաւական, այլ քաղաքական ակտ է: Երրորդ երկրների կողմից նախկին Ադր. ԽՍՀ սահմաններում ԱՀ ճանաչումը չի խախտում, օրինակ, Կարսի գործող բազմակողմ միջազգային պայմանագրի իրաւազօրութիւնը, որից բխում է Նախիջեւանի՝ Բաքուի կողմից օկուպացուած լինելու իրաւական հետեւանքը:

Դրոյթ տասնիններորդ: Հիմնախնդրի իրաւական հիմքերի տեսակէտից գրաւեալ տարածքներ ունի ոչ թէ հայկական, այլ ադրբեջանական կողմը: Դա Կենտրոնական ու Հիւսիսային Արցախն է: Դա նաեւ Նախիջեւանն է, որով Բաքուն արգելափակել է դէպի Ասիա տանող Եւրոպայի ճանապարհը:

Դրոյթ քսաներորդ: ԼՂՀ ճանաչումը կապուած չէ Ադրբեջանական Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան խախտման հետ ոչ միայն այն պատճառով, որ ԼՂ-ի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը ճանաչուած է վաղուց, այդ թւում եւ Բաքուի կողմից, այլեւ այն պատճառով, որ հիմնախնդրի իրաւական հիմքերի տեսակէտից Լեռնային Ղարաբաղը ԱՀ տարածքը չէ:

Դրոյթ քսանմէկերորդ: Հիմնախնդրի քաղաքականացման պատճառով ոչ Մինսկի խմբում, որի հովանու տակ շուրջ երկու տասնամեակ ընթանում են ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցութիւնները, ոչ ՄԱԿ-ում եւ ոչ էլ միջազգային իրաւասու այլ մի ատեանում մինչ օրս «Ղարաբաղեան հիմնախնդրի իրաւական փաթեթ» չի ներկայացուած:

Դրոյթ քսաներկուերորդ: Թէ եւրոպական արժէքների, թէ միջազգային իրաւունքի, թէ հիմնախնդրի անմիջական հիմքերի ու էութեան տեսակէտից արդար խաղաղութիւն կարող է հաստատուել միայն այն դէպքում, եթէ ԵԱՀԿ-ն առաջարկի, իսկ Բաքուն, Երեւանը եւ Ստեփանակերտը ընդունեն հակամարտութեան կարգաւորման հետեւեալ բանաձեւը՝ «Կողմերը պարտաւորւում են ազատել հիմնախնդրի իրաւական հիմքերի տեսակէտից օկուպացուած տարածքները»:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Դրոյթ քսաներեքերորդ: Լեռնային Ղարաբաղը նախկին ԼՂԻՄ-ը չէ: ԼՂԻՄ-ը աշխարհագրական Լեռնային Ղարաբաղի մի մասն է միայն: 1921 թ. Կովբիւրոյի որոշմամբ մարզային ինքնավարութիւն պէտք է տրուէր Լեռնային Ղարաբաղին (ներառեալ բոլոր այն տարածքները, որ այսօր գտնւում են ԼՂՀ վերահսկողութեան տակ), այլ ոչ թէ նրա մի մասին:

Դրոյթ քսանչորսերորդ: Արեւելեան Անդրկովկասում մինչեւ 1918 թուականը «Ադրբեջան» անուանումով ոչ պետական կազմաւորում, ոչ էլ «Ադրբեջան» աշխարհագրական տեղանուն է եղել: Ոչ մէկը, ոչ էլ միւսը անհնար է գտնել մինչ այդ հրատարակուած քարտէզներում, պատմական ու քաղաքական բովանդակութեան աշխատութիւններում: Քսաներորդ դարում «Ադրբեջան» անուանումը օգտագործուել է երեք պետական կազմաւորումների անուան մէջ: Առաջինը 1918 թ. թուրքական ռազմական ինտերվենցիայի արդիւնքում հիմնուած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետութիւնն է, երկրորդը Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնն է, որը հռչակուել է առաջինի տապալման արդիւնքում, երբ 1920 թ. ապրիլի 28-ին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակը մտել է Բաքու, երրորդը մերօրեայ Ադրբեջանական Հանրապետութիւնն է, որը մերժելով Ադր. ԽՍՀ իրաւայաջոր-

դութիւնը, վերականգնել է ԱԴՀ պետականութիւնը: «Ադրբեջան» աշխարհագրական տեղանուն Արեւելեան Անդրկովկասում մինչ օրս չկայ:

Դրոյթ քսանհինգերորդ: Թուրքախօս բնակչութեան տեսակարար կշիռը Արեւելեան Անդրկովկասում կտրուկ աճել է միայն 19-րդ դարի վերջին քառորդում, երբ Պարսկաստանի հիւսիս-արեւմտեան շրջաններից՝ պատմական Ատրոպատենա-Ատրպատական-Ադրբեջանից, տարեկան 25-30 հազար թուրքախօս (հիմնականում շիա աղանդի) բնակչութիւն տեղափոխուեց սրընթաց տնտեսական վերելք ապրող այդ երկրամասը: Պաշտօնական Ռուսաստանը նրանց որակեց որպէս օտխոդնիկներ (отходники) եւ տուեց *կովկասեան* թաթարներ անուանումը: Տեղափոխուածները էթնիկապէս միատարր չէին, սակայն հաւատքի ու մշակոյթի տեսակէտից ընդհուպ մինչեւ 19-րդ դարի վերջը իրենց գիտակցում էին պարսկական հանրութեան մաս: Պարսկական քաղաքական ու մշակութային ազդեցութիւնը երկրամասում թուլացնելու նպատակով Ռուսական կայսրութիւնը ամէն կերպ նպաստել է նրանց մէջ թուրքական գիտակցութեան ու ինքնութեան ձեւաւորմանը, բայց մինչ օրս էլ Բաքուում չեն դադարում վէճերն այն մասին, թէ ինչպիսի ազգային ինքնութիւն ունի հանրապետութեան՝ ադրբեջանցու անձնագիր ունեցող քաղաքացին, երբ յայտնի է, որ հանրապետութիւնում բնակուող եւ ադրբեջանցու անձնագիր ունեցող մարդկանց մի զգալի մասը իրականում թալիշներ, թաթեր, լեզգիներ կամ քրդեր են եւ պահպանում են իրենց այդ ինքնութիւնը: Հանրապետութիւնում սանձազերծուած հակահայկական հիստերիայի իրական նպատակներից մէկը հայից՝ որպէս ընդհանուր թշնամուց եկող «մահացու

վտանգի» առասպելի օգնութեամբ ազգային իւրօրինակ ընդյատակ անցած լեզգիների, թալիշների, քրդերի ու թաթերի թուրքացումն է:

Դրոյթ քսանվեցերորդ: 1920 թ. նախկին Ադր. ԽՍՀ-ն եղել է միակը նախկին խորհրդային հանրապետութիւնների շարքում, որը հիմնուել է որպէս ոչ ազգային (արտազգային, ինտերնացիոնալ) հանրապետութիւն, որի պատճառով մինչեւ 30-ական թուականները չի ունեցել տիտղոսակիր ազգ: Ադր. ԽՍՀ-ում՝ իբրեւ նոր տիպի, ոչ ազգային, ինտերնացիոնալ հանրապետութիւնում, հայերը դիտուել են որպէս այդ հանրապետութեան հիմնադիր ազգերից մէկը: Քսանական թուականների քաղաքական բնոյթի գրեթէ բոլոր փաստաթղթերում ընդգծւում էր, որ Ադր. ԽՍՀ-ն հիմնուել է որպէս մուսուլմանների ու հայերի ընդհանուր պետութիւն: 1998-ին ընդհանուր պետութեան գաղափարին նորից յարութիւն է տուել Մինսկի խումբը, բայց, ինչպէս յայտնի է, Բաքուն կտրականապէս մերժել է այն:

Դրոյթ քսանեօթերորդ: Թուրքիան ցեղասպանութեան քաղաքականութիւնը 1915-1923 թթ. իրագործել է ոչ միայն իր սահմաններում յայտնուած Արեւմտեան Հայաստանում, այլեւ այդ սահմաններից դուրս, այդ թւում եւ ողջ Արեւելեան Անդրկովկասում: 1918 թուականին թուրքական կանոնաւոր զօրքերը հայերի զանգուածային ջարդեր են իրագործել դէպի խորհրդային Բաքու շարժուելու ամբողջ ճանապարհին: Թուրքական զօրքերի հրամանատար Նուրի փաշան քաղաքը յանձնելու վերջնագիրը ներկայացրել է Բաքուի Հայոց ազգային խորհրդին, քանի որ քաղաքը թուրքերից պաշտպանում էին գլխաւորապէս հայերը: Բաքուն գրաւելուց, հայերի աջակցութիւնը վայելող օրինական իշխանութիւնը տապալելուց եւ իշխանութիւնը տեղի թուրքերի մուսավաթական կուսակցութեանը յանձնելուց յետոյ թուրքական զօրքը եւ թուրք խաժամուժը աւելի քան երեսուն հազար հայ են կոտորել Բաքուում: Կապիտալիզմի պայմաններում Արեւելեան Անդրկովկասում տնտեսական գերակշիռ դիրքեր գրաւած հայերը 1917-1918 թթ. թուրքական վերահաս վտանգի պայմաններում Բաքուում ստիպուած սատարում էին խորհրդային կարգերը: Իրականում նրանք ընտրութիւն էին կատարում ոչ թէ սոցիալիզմի ու կապիտալիզմի, այլ ցեղասպան Թուրքիայի ու Խորհրդային Ռուսաստանի միջեւ:

Դրոյթ քսանութերորդ: 1918 թուականին թուրքական կանոնաւոր բանակի կողմից հիմնուած ԱԴՀ-ն Թուրքիայի կողմից իր սահմաններից դուրս այլ ժողովուրդների պատմական տարածքներում թուրքական պետութիւններ հիմնելու Հիւսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետութեանը նախորդած փորձն էր: Եթէ թուրքական ռազմական միջամտութիւնը չլինէր, ԱԴՀ-ն հազիւ թէ յայտնուէր քաղաքական քարտէզում:

Դրոյթ քսանիններորդ: Թուրքական բանակի կողմից հիմնուած եւ Ազգերի լիգայի կողմից դէ-եուրէ չճանաչուած ԱԴՀ-ն 1920 թ. ապրիլի 28-ին տապալուեց մէկ այլ երկրի՝ Խորհրդային Ռուսաստանի 11-րդ բանակի կողմից, որը «հիմնադրեց» Խորհրդային Ադրբեջանը:

Դրոյթ երեսուներորդ: Ոչ ազգային, ինտերնացիոնալ Խորհրդային Ադրբեջանում դէպի մահմեդական Արեւելք «կարմիր յեղափոխութեան» արտահանման բոլշեւիկեան ծրագրերի հունում արդէն քսանական թուականների վերջերին իշխանութիւնը տրուեց տեղի թուրքերի (կովկասեան թաթարների) ձեռքը, որոնք եւ երեսունականներին վերանուանուեցին ադրբեջանցիներ՝ որպէս էթնոնիմ վերցնելով հանրապետութեան անունը, որն իր հերթին Պարսկաստանի հիւսիս-արեւմտեան երկրամասի անուանումն է: Կովկասեան թաթարները հանրապետութեան տիտղոսակիր ազգ են դարձել մեխանիկական այդ անուանափոխութեամբ:

Դրոյթ երեսունմէկերորդ: Արեւելեան Անդրկովկասի թուրքերին կամ նոյնն է թէ՝ կովկասեան թաթարներին նոր էթնոնիմով անուանակոչելը չփոխեց ադրբեջանահայութեան՝ որպէս Ադր. ԽՍՀ հիմնադիրներից մէկի կարգավիճակը: Նա մնաց խորհրդային այդ հանրապետութեան պետականակիր ազգերից մէկը ոչ միայն այն հիմքի վրայ, որ Խորհրդային Ադրբեջանը հիմնուել էր որպէս մուսուլմանների ու հայերի «միասնական պետական միութիւն», ինչպէս դա արձանագրուած է «ԼՂԻՄ-ի հիմնադրման մասին» Ադրկենտգործկոմի դեկրետում, այլեւ այն իրաւական հիմքով, որ որպէս խորհրդային տիպի ազգային պետականութիւն ԼՂԻՄ-ը Ադր. ԽՍՀ կազմում հիմնուել է ողջ ադրբեջանահայութեան պետական պաշտպանուածութեան երաշխաւորը լինելու առաքելութեամբ ու պատասխանատուութեամբ:

Դրոյթ երեսուներկուերորդ: Ադր. ԽՍՀ քաղաքական իշխանութիւնը գրաւած Արեւելեան Անդրկովկասի՝ իրենց ադր-



բեջանցիներ վերանուանած թուրքերը խորհրդային տարիներին քօղարկուած կամ անսքօղ վարում էին ագրեսիւ ազգային քաղաքականութիւն: Մահմեդականութիւն դաւանող մի շարք ազգութիւններ (լեզգիներ, թալիշներ, թաթեր, քրդեր եւ այլն) արդէն 80-ական թուականներին անհետացան հանրապետութեան էթնիկական քարտէզից: Նրանց մեծ մասը կամ ենթարկուեց բռնի ձուլման, կամ հետապնդումներից խուսափելու համար անցաւ իւրօրինակ «ազգային ընդյատակ» եւ մինչ օրս դեռ չի համարձակւում դուրս գալ այնտեղից: «Փափուկ ձնշմամբ» կամ տնտեսական ու քաղաքական հետապնդումներով նոյն խորհրդային տասնամեակներին հանրապետութիւնից դուրս էին մղւում հայերը: Դեռեւս թուրքական ինտերվենցիայի ժամանակ հայերի զանգուածային ջարդեր իրագործուեցին նաեւ Նախիջեւանում: Կարսի պայմանագրով նախատեսւում էր երկրամասի հայ փախստականների անվտանգ վերադարձը հայրենի եզերք: Խորհրդային տասնամեակներին արգելուեց նրանց վերադարձը իրենց տները, իսկ ութսունականներին երկրամասից դուրս մղուեցին դեռեւս տեղում մնացածները: Փաստօրէն հէնց խորհրդային տարիներին Նախիջեւանում Բաքուն աւարտին հասցրեց Թուրքիայի կողմից 1918-ին սկսուած նախիջեւանահայութեան ցեղասպանութիւնը:

Դրոյթ երեսուներեքերորդ: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ 1988-ին վերաբորբոքուած վէճը սումգայիթեան ջարդերից սկսած ընդունեց Ադր. ԽՍՀ երկու հիմնական ժողովուրդների՝ հայերի ու իրենց ադրբեջանցի վերանուանած Արեւելեան Անդրկովկասի թուրքերի միջեւ ազգամիջեան հակամարտութեան բնոյթ: Սումգայիթեան ջարդերին հետեւեցին զանգուածային բռնութիւններն ու ջարդերը Խոջալուում, Շուշիում, Բաքուում, հանրապետութեան հայաբնակ բոլոր վայրերում: Շահումեանի շրջանը հայաթափուեց Բաքուին ծառայութիւններ մատուցող յետխորհրդային Ռուսաստանի բանակի մասնակցութեամբ: ԽՍՀՄ օրօք եւ յատկապէս նրա լուծարման ընթացքում ադրբեջանահայութեան նկատմամբ իրագործուած քաղաքականութիւնը ըստ էութեան հայոց ցեղասպանութեան նոյն թուրքական քաղաքականութեան ուղեգծում մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւն է անկախ այն բանից, որ մինչ օրս չի ստացել համարժէք միջազգային գնահատական: Աւելին՝ այն լռութեան ու մոռացութեան է մատնուած: 1991-ին Ադրբեջանական Հանրապետութիւնը հրաժարուել է լինել Ադր. ԽՍՀ իրաւայաջորդը նաեւ իրագործուած այդ ցեղասպանութեան համար պատասխանատուութիւնից խուսափելու նպատակով:

Դրոյթ երեսունչորսերորդ: ԼՂ-ի հակամարտութեան համատեքստում ազգութեամբ ադրբեջանցի փախստականներ չկան: Նախկին ՀԽՍՀ-ում բնակուող շուրջ 156.000 ադրբեջանցիների մի մասը (կէսից աւելին) իր համար շահեկան պայմաններով բնակարանները փոխանակել է Սումգայիթից, Բաքուից եւ Ադր. ԽՍՀ հայաբնակ միւս վայրերից ՀԽՍՀ եկած հայ փախստականների հետ, իսկ միւս մասը դրամական փոխհատուցում է ստացել Սպիտակի երկրաշարժից յետոյ աւերուած բնակարանների դիմաց եւ այն օգտագործել իր հայեցողութեամբ: Լեռնային Ղարաբաղի այն շրջաններից, որոնք այսօր գտնւում են ԼՂՀ վերահսկողութեան տակ, միջազգային իրաւունքի տեսակէտից նոյնպէս փախստականի կարգավիճակին համապատասխանող ադրբեջանցիներ չկան, քանի որ, նախ, այդտեղ բնակուող ադրբեջանցիները ըստ էութեան զանգուածաբար մասնակցել են ողջ ԼՂԻՄ-ի եւ յարակից հայաբնակ շրջանների շրջափակմանը, իսկ յետագայում ԼՂ-ի ժողովրդի դէմ Բաքուի մանձագործած պատե-

ՀՅԴ. ԲԻՒՐՈՅ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ռազմին (ըստ միջազգային իրաւունքի պատերազմական գործողութիւններին մասնակցողը չի կարող համարուել փախստական): Եւ երկրորդ, այն պետութիւնը, որտեղ այժմ նրանք բնակւում են, իրենք իսկ համարում են իրենց ազգային պետութիւնը: Նշուած երկու պատճառներով նրանք չեն կարող համարուել փախստականներ: Ղարաբաղեան հակամարտութեան համատեքստում փախստականի կարգավիճակում յայտնուել են միայն եւ միայն հայերը:

Դրոյթ երեսունհինգերորդ: Ղարաբաղեան հակամարտութեան գլխաւոր զոհը ցեղասպանութեան ենթարկուած, հազարամեայ բնակութեան իր վայրերից արտաքսուած նախկին Ադր. ԽՍՀ հայութիւնն է՝ Անդրկովկասի արեւելեան շրջաններից, Նախիջեւանից եւ Կենտրոնական ու Հիւսիսային Արցախից բռնութեամբ տեղահանուած հայերն են: Նախկին Ադր. ԽՍՀ հայութեան այս հատուածներից ոչ մէկը մինչ օրս չի ստացել ոչ բարոյական, ոչ նիւթական եւ ոչ էլ տարածքային փոխհատուցում: Փախստականի կարգավիճակում յայտնուած ադրբեջանահայութեան մի մասը, ինչպէս նաեւ Կենտրոնական ու Հիւսիսային Արցախից տեղահանուած հայերի մի մասը տարերայնօրէն տեղաւորուել են ազատա-գրրուած այն շրջաններում, որոնք 1921 թ. Կովբիւրոյի որոշման համաձայն պէտք է ԼՂԻՄ-ի մաս կազմէին եւ այսօր գտնւում են ԼՂՀ վերահսկողութեան տակ: Կենտրոնական Արցախի Շահումեանի շրջանի բնակիչների մի մասը հաստատուել է Քարվաճառ/Քելբաջարի շրջանում, եւ այսօր այն վերանուանուած է Շահումեանի շրջան:

Դրոյթ երեսունվեցերորդ: Ադրբեջանահայութեան նկատմամբ իրագործուած ցեղասպանութիւնը բացայայտեց Թուրքիայի ու թուրքական քաղաքական մշակոյթի համար բնորոշ հետեւեալ իրողութիւնը: Բոլոր այն տարածքներում, որ գրաւուել են թուրքերի կողմից եւ որտեղ նրանց յաջողուել է հիմնել պետութիւն, տարուել է բնիկների բռնի դաւանափոխութեան եւ ուծացման քաղաքականութիւն: Այն ժողովուրդների նկատմամբ, որոնց ուծացումը կամ դաւանափոխութիւնը հանդիպել է անյաղթահարելի դիմադրութեան, կիրառուել է գրաւած տարածքներից նրանց դուրս մղման (էթնիկական զտման) կամ ֆիզիկական բնաջնջման քաղաքականութիւն: Հայ ժողովրդի դէմ 19-րդ դարից սկսած Թուրքիան յանցագործ այդ միջոցին բացայայտ ձեւով դիմել է իր սահմաններում յայտնուած Արեւմտեան Հայաստանում: 20-րդ դարի 70-ական թուականներին նա նոյն քաղաքականութիւնը իրագործեց Հիւսիսային Կիպրոսում: Նոյն ձեռագիրը մենք տեսնում ենք Արեւելեան Անդրկովկասում՝ Թուրքիայի հիմնած ԱԴՀ-ում եւ այնուհետեւ Ադր. ԽՍՀ-ում: Ազգամիջեան յարաբերութիւններում պատմականօրէն ձեւաւորուած քաղաքական վարքի բերումով պետականութիւնը թուրքի ձեռքում ամենուր դարձել է ցեղասպանութեան գործիք: Դրանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ 20-րդ դարի սկզբին իրապէս բազմազգ Արեւելեան Անդրկովկասի քարտէզից անհետացել են գրեթէ բոլոր բնիկ ժողովուրդները: Իսլամադաւանները կամ ուծացուել են, կամ մտել «ազգային ընդյատակ», իսկ հայերը ուղղակի դուրս են մղուել երկրից: Այսօր էլ այդ տեսակէտից բացատրելի են դառնում Բալկաններում էթնիկական զտումներով ուղեկցուող ազգամիջեան ընդհարումները: Դրանցում դժուար չէ գտնել թուրքերի քաղաքակրթական հետքը:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՈՒՂԱԿՈՒՄ

Դրոյթ երեսունեօթերորդ: Ղարաբաղեան հիմնախնդիրը քաղաքականացուել է դեռեւս անցած դարի 20-ական թուականներին, երբ հակառակ ԼՂ-ի ժողովրդի կամքի բոլշեւիկեան Մոսկուան երկրամասը օտարել է Խորհրդային Հայաստանից՝ այդ գնով սոցիալիստական յեղափոխութիւնը Թուրքիա եւ մահմեդական Արեւելք արտահանելու յոյսով: Խնդիրը քաղաքականացուած էր եւ խորհրդային տարիներին, երբ Մոսկուան աչք էր փակում ոչ միայն հայերի, այլեւ Ադր. ԽՍՀ իսլամադաւան ժողովուրդների նկատմամբ վարուող հալածանքների ու բռնի ուծացման առջեւ: Հիմնախնդիրը քաղաքականացման մի նոր փուլ մտաւ 1988-ին, երբ սկսուեց Ղարաբաղեան շարժումը եւ երբ Արեւմուտքի համար ազգային խնդիրները գործնականօրէն դարձան ԽՍՀՄ կազմաքանդման միջոց: Ղարաբաղեան խնդրում քաղաքական գործօնները յետխորհրդային պայմաններում ձեռք բերեցին յատուկ նշանակութիւն՝ պայմանաւորուած այն բանով, որ Անդրկովկասը յայտնուեց խոշոր տէրութիւնների աշխարհաքաղաքական շահերի կիզակէտում:

Դրոյթ երեսունութերորդ: ԽՍՀՄ լուծարման համատեքստում խնդիրը քաղաքականացուեց նաեւ ԱՄՆ-ի կողմից: 1989 թ. ԱՄՆ-ի Կոնգրէսը հանդէս եկաւ յայտարարութիւններով, որոնցում կոչ էր արւում ԽՍՀՄ ղեկավարութեանը հիմ-

նահարցը լուծել ԼՂ-ի ժողովրդի կամքին համապատասխան: Ակնյայտ էր, որ ԱՄՆ-ը բարոյապէս սատարում էր ղարաբաղցիների ազատագրական պայքարը: Ընդամէնը երկու տարի յետոյ, 1991-ի աշնանը, երբ ԽՍՀՄ լուծարումը մտաւ աւարտական փուլ եւ Լեռնային Ղարաբաղը Արեւմուտքի տեսակէտից արդէն կատարել էր ԽՍՀՄ փլուզման պայթուցիկի դերը, ԱՄՆ-ը յայտարարեց, որ յետխորհրդային տարածքում ինքը նորանկախ պետութիւնները ճանաչում է միութենական հանրապետութիւնների սահմաններում:

Դրոյթ երեսունիններորդ: ԽՍՀՄ լուծարման համատեքստում խնդիրը քաղաքականացուեց նաեւ 1991-ին ԽՍՀՄ շուտափոյթ լուծարմամբ շահագրգռուած Եւրոպայի կողմից, որն այսօր նոյնպէս ցուցաբերում է անհետեւողականութիւն եւ անսկզբունքայնութիւն հակամարտութեան առարկայի ու բնոյթի գնահատումներում: Ահա տրամագծօրէն միմեանց հակասող երկու փաստաթուղթ՝ ընդունուած Եւրոպայում: Առաջինը 1993-ի յունուարի 21-ին Եւրոխորհրդարանի կողմից ընդունուած թիւ 42/165 բանաձեւն է, որում անհանգստութիւն էր արտայայտւում Ադրբեջանից բռնի արտաքսուած 300 հազար հայերի ողբերգական վիճակով, արձանագրւում, որ ԵԱՀԽ-ն պէտք է գործի Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնների միջեւ անմիջական բանակցութիւնների ապահովման ուղղութեամբ, եւ փաստւում, որ դաժան շրջափակումով Ադրբեջանը ձգտում է պատերազմի մէջ ներքաշել Հայաստանին: Երկրորդ փաստաթուղթը Եւրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2005-ի յունուարի 5-ին ընդունած թիւ 1416 փաստաթուղթն է, որտեղ, անտեսելով Եւրոխորհրդարանի բանաձեւը, մոռացութեան են տըր- ւած Ադրբեջանից բռնութեամբ արտաքսուած հարիւր հազարաւոր հայ փախստականները, իսկ Հայաստանը փաստօրէն անուղղակիօրէն մեղադրւում է հարեւան պետութեան տարածքի բռնազաւթման մէջ՝ հակառակ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի թիւ 822 բանաձեւի, որտեղ նշուած է, որ Լեռնային Ղարաբաղի «տեղական ուժերն» են ձեղքելով շրջափակումը, դուրս եկել ԼՂԻՄ-ի յարակից շրջաններ եւ իրենց վերահսկողութեան տակ առել դրանք:

Դրոյթ քառասուներորդ: Ղարաբաղեան խնդիրը քաղաքականացուել է նաեւ Ռուսաստանի կողմից, որին ԽՍՀՄ լուծարման ընթացքում սպառնում էր փլուզման վտանգը: Պայթունի «իրաւական ականը» 1990-ի ապրիլի 3-ին ընդունուած «Միութենական հանրապետութեան ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապուած հարցերի լուծման մասին» ԽՍՀՄ օրէնքն էր, որն արտօնում էր ինքնավար կազմաւորումներին ազատ որոշել իրենց իրաւական կարգավիճակը (ընդհուպ մինչեւ անկախացում) ԽՍՀՄ-ից միութենական հանրապետութեան դուրս գալու դէպքում: Օրէնքը կարող էր գլխացաւանք դառնալ Ռուսաստանի համար, եթէ իր անկախացումը դիտուէր իբրեւ ԽՍՀՄ-ից դուրս գալու ակտ, քանի որ իր կազմում նա ունէր բազմաթիւ ինքնավար կազմաւորումներ: Կանխելու համար ինքնավարութիւնների՝ 1990 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրէնքից օգտուելու հնարաւոր քայլերը, 1991-ին նա չմասնակցեց միութենական հանրապետութիւնների «անկախութեան շքերթին» եւ միայն դեկտեմբերի 10-ին Բելառուսի եւ Ուկրաինայի հետ հիմնեց ԱՊՀ-ն: Պարզ էր, որ 1991-ի աշնանը Մոսկուային ձեռնտու չէր 1990 թ. ապրիլի 3-ի օրէնքի կիրառութիւնը, եւ նա ամէն կերպ աշխատում էր մոռացութեան մատնել այն: ԽՍՀՄ խաղաղ եւ արագ լուծարմամբ շահագրգիռ Արեւմուտքը, եւ առաջին հերթին ԱՄՆ-ը, Մոսկուայի մտահոգութիւնները ցրելու եւ ԽՍՀՄ կազմաքանդմանը նրա հնարաւոր դիմադրութիւնը կանխելու համար, շտապեցին յայտարարել, որ իրենք կը սատարեն Ռուսաստանի ամբողջականութիւնը եւ որ յետխորհրդային տարածքում իրենք նորանկախ պետութիւնները կը ճանաչեն նախկին միութենական հանրապետութիւնների սահմաններում: Դէպքերի ընթացքի հետ հաշտուած Մոսկուան ընդունեց պայմանը եւ ինքն ընդունեց միութենական հանրապետութիւնների սահմաններում նորանկախ պետութիւնները ճանաչելու դիրքորոշումը: Դա անմիջական անդրադարձ ունեցաւ ղարաբաղեան խնդրի վրայ, քանի որ ԼՂ-ի անկախացումը Ռուսաստանը անմիջականօրէն կապում էր 1990 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրէնքի հետ եւ մեկնաբանում իբրեւ այդ օրէնքի հիման վրայ ԽՍՀՄ-ից դուրս եկած ԱՀ կազմից ԼՂ-ի անջատում: Այդ պահին նախադէպեր թոյլ չտալու համար Մոսկուային պէտք էր անտեսել այդ օրէնքը եւ ճանաչել ԱՀ անկախութիւնը նախկին Ադր. ԽՍՀ սահմաններում: Մոսկուան այդպէս էլ վարուեց: ԽՍՀՄ կազմաքանդման թոհուբոհում չնկատուեց իրաւական այն փաստը, որ ԼՂՀ-ն իր ինքնիշխանութիւնը ձեռք է բերում 1990 թ. ապրիլի 3-ի օրէնքից տարբեր եւ նրանից աւելի հիմնարար իրաւական հիմքով՝ նա ինքնիշխանութիւն էր հաստատում ԱՀ-ին չպատկանող տարածքներում՝ առանց նրանից անջատուելու կամ նրա կազմից դուրս գալու: Հազիւ թէ այսօր, դէպքերից տասնամեակներ անց, 1990 թ. ԽՍՀՄ օրէնքը իրենից որեւէ վտանգ ներկայացնի նոր Ռու-

սաստանի համար, սակայն 1991-ին դրութիւնը արմատապէս այլ էր: Այսօր Ղարաբաղեան հարցում գործում է միայն 90-ականների իներցիան, եւ տիրապետում է այն կարծիքը, թէ իբր Լեռնային Ղարաբաղը օգտուել է միայն 1990 թ. ԽՍՀՄ ապրիլի 3-ի օրէնքից եւ անջատուել ԽՍՀՄ-ից դուրս եկած Ադրբեջանական Հանրապետութիւնից:

Դրոյթ քառասունմէկերորդ: Որպէս Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման իրաւական պայմաններ ԵԱՀԿ-ը սովորաբար նշում է պետութիւնների տարածքային ամբողջականութեան եւ ժողովուրդների ազատ ինքնորոշման միջազգային իրաւական սկզբունքները: Ընդորում, Արեւմուտքի փորձագիտական ու պաշտօնական շրջանակներում լայնօրէն շրջանառւում է դրանց անլուծելի հակասութեան մէջ գտնուելու տեսակէտը: Հարցադրումը ծագում է, երբ հակառակ տրամաբանութեան՝ հաւասարու- թեան նշան է դրւում այդ երկու սկզբունքների միջեւ կամ նոյնիսկ ինքնորոշման իրաւունքը ստորադասւում է տարածքային ամբողջականութեանը: Ակնյայտ է, որ եթէ տարածքային ամբողջականութեան սկզբունքը գերակայէր ինքնորոշման սկզբունքի նկատմամբ, վերջինս ընդհանրապէս կը զրկուէր իմաստից եւ բնաւ չէր գործի, քանի որ միշտ կը հանդիպէր առաջինի անյաղթահարելի արգելքին: Աւելին, տարածքային ամբողջականութեան սկզբունքը կը վերածուէր բռնի ուծացման ու ցեղասպանութեան անպատիժ իրագործման լեգալ գործիքի: Այնինչ պատմական զարգացման իրական ընթացքի տեսակէտից ինքնորոշման սկզբունքը գերակայ է տարածքային ամբողջականութեան նկատմամբ: Ասուածը հաստատւում է XX դարի երկրորդ կէսի Եւրոպայի պատմութեամբ, որը կարծես ի հեծուկս Հելսինկեան եզրափակիչ ակտի, վերածուեց սահմանների վերաձեւման աշխարհամասի: ԽՍՀՄ լուծարումը, Չեխոսլովակիայի տրոհումը, Գերմանիայի վերամիաւորումը, Հարաւսլաւիայի մասնատումը սահմանների վերաձեւութեան անկասելի ընթացք էր՝ ժողովուրդների ինքնորոշման հիմքի վրայ: Ըստ սահմանման՝ այդ սկզբունքները ոչ միայն չեն հակասում միմեանց, այլեւ ներդաշնակօրէն համատեղւում են, քանի որ տարածքային ամբողջականութեան խախտումը կապւում է ոչ թէ ժողովուրդների ազատ ինքնորոշման, այլ մի պետութեան կողմից միւսի տարածքի զաւթման հետ: Բազմազգ պետութիւնների ժողովուրդներից մէկի ինքնորոշումը եւ անջատումը մայր երկրից չի կարող մեկնաբանուել որպէս վերջինիս տարածքային ամբողջականութեան խախտում: Բայց բնական է նաեւ, որ բազմազգ բոլոր պետութիւնները ի դէմս իրենց տիտղոսակիր ազգերի «չեն սիրում» ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքը եւ ամէն կերպ խոչընդոտում են ինքնորոշման գործընթացներին՝ որտեղ դա կարող են: ԵԱՀԿ-ը, որի հովանու ներքոյ ընթանում են Ղարաբաղեան խնդրի շուրջ բանակցութիւնները, պետութիւնների կազմակերպութիւն է, պետութիւններ, որոնք Ա<-ն ճանաչել են նախկին Ադր. ԽՍՀ սահմաններում (չնայած վերջինս 1991-ին իրեն չի հռչակել այդ սահմաններում): Հակառակ իրաւական այն փաստի, որ ԼՂՀ-ն կայացել է Ա<-ին իրաւաբանօրէն չպատկանող տարածքներում, ԵԱՀԿ-ում հարցը ձեւակերպում են որպէս ինքնորոշման հիման վրայ Ադրբեջանական Հանրապետութիւնից ԼՂ-ի անջատման խնդիր: Սա չի նշանակում, թէ խնդիրը ինքնորոշման հետ ոչ մի կապ չունի: ԼՂ-ի ժողովուրդը աշխարհի մնացած ժողովուրդների նման ունի ինքնորոշման անօտարելի եւ վաղուց ճանաչուած իրաւունք եւ 1991-ին, մինչեւ Ա<-ի ՄԱԿ ընդունուելը, մինչեւ խնդիրը ԵԱՀԿ հովանու տակ յայտնուելը, այն կենսագործել է Ա<-ին չպատկանող տարածքներում: Բայց հէնց այս հարցադրումն է բացակայում հակամարտութեան կարգաւորման միջնորդ ԵԱՀԿ-ի թղթապանակում, եւ դրա պատճառը խնդրի քաղաքականացումն է:

Դրոյթ քառասուներկուերորդ: Իրական հակասութիւնը, որին բախուել է Ղարաբաղեան խնդիրը, տարածքային ամբողջականութեան եւ ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքների միջեւ գոյութիւն չունեցող հակասութիւնը չէ, այլ նախկին Ադր. ԽՍՀ սահմաններում Ա< ճանաչման քաղաքական ակտի եւ հիմնախնդրի իրաւական հիմքերի միջեւ առկայ հակասութիւնն է: Ահա թէ ինչու ԵԱՀԿ-ը չի անդրադառնում Ա< ճանաչման եւ ԼՂՀ կայացման իրաւական հիմքերին: Նման քննութիւնը կը պարզի, որ Եւրոպան, հակասելով միջազգային իրաւունքի իր կողմից հռչակուած սկզբունքներին, ցեղասպանութիւն իրագործած Ադրբեջանական Հանրապետութիւնը ճանաչել է նրան չպատկանող տարածքներում եւ փորձում է նրա ենթադատութեանը տալ նոյն իրաւունքի տեսակէտից անբասիր կայացած ԼՂՀ-ին:

Դրոյթ քառասուներեքերորդ: Ղարաբաղեան հակամարտութեան հարցում Եւրոպայի դիրքորոշման ներքին հակասականութիւնը արտացոլուել է եւրոպական կառոյցների ընդունած բոլոր փաստաթղթերում: Բնորոշ օրինակ է ԵԱՀԿ լիսաբոնեան գագաթնաժողովում կազմակերպութեան գործող նախագահի յայտարարութիւնը այն բանից յետոյ, երբ Հայաստանը վետո դրեց Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ որոշման վրայ: Գործող նախագահը թուարկեց խնդրի կարգաւորման հարցում ԵԱՀԿ որդեգրած սկզբունքները՝ «Հայաստանի Հանրապետութեան եւ Ադրբեջանական Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւն; համաձայնագրում ինքնորոշման հիմքով որոշուած Լեռնային Ղարաբաղի իրաւական կարգավիճակը Լեռնային Ղարաբաղին կ՝ապահովի ինքնավարութեան ամենաբարձր աստիճանը Ադրբեջանի կազմում; Լեռնային Ղարաբաղի եւ նրա ամբողջ բնակչութեան երաշխաւորուած անվտանգութիւն, ներառեալ կարգաւորման դրոյթների կատարման փոխադարձ պարտաւորութիւնների ապահովումը բոլոր Կողմերի կողմից»: ԵԱՀԿ-ը առանց իրաւական հիմքերի քննութեան Ադր. ԽՍՀ սահմանները վերագրում է Ադրբեջանական Հանրապետութեանը եւ իր կողմից որդեգրուած երկրորդ սկզբունքի համաձայն բոլոր տեսակէտներից լեգիտիմ կայացած ԼՂՀ-ին եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդին առաջարկում է ինքնորոշման կրճատուած մի ձեւ, ըստ որի նրան ԱՀ կազմում կը տրուի կարգավիճակ, որը դեռեւս 1921 թ. նրան տրամադրել է Կովբիւրօն եւ որի դէմ ինքը ըմբոստացել է 1988-ին: Լիսաբոնեան վեհաժողովը խնդրի կարգաւորման երրորդ սկզբունքով Լեռնային Ղարաբաղին եւ նրա ժողովրդին խոստանում է անվտանգութիւն: Նոյն բանը 1921 թ. խոստացել է Կովբիւրօն՝ որոշման քաղաքական հիմնաւորման մասում արձանագրելով, որ Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ սահմաններ մտցնելը կատարւում է՝ «ելնելով մուսուլմանների ու հայերի միջեւ խաղաղութիւն հաստատելու անհրաժեշտութիւնից»: Երաշխաւորուած այդ «խաղաղութիւնը» ի վերջոյ աւարտուեց ողջ Արեւելեան Անդրկովկասի եւ Ադր. ԽՍՀ հովանաւորութեանը յանձնուած Նախիջեւանի հայութեան ցեղասպանութեամբ: ԵԱՀԿ-ը դրան չի անդրադառնում եւ Լեռնային Ղարաբաղին առաջարկում է մտնել մի պետութեան կազմի մէջ, որտեղ, ինչպէս յաճախ ասում են Ղարաբաղում, ենթադատութիւնը (юрисдикция) հասկանում են որպէս ցեղասպանութիւն իրագործելու արտօնութիւն:

Դրոյթ քառասունչորսերորդ: ԼՂ-ի հարցում Եւրոպայի դիրքորոշման ներքին հակասականութիւնը պայմանաւորուած է նաեւ հիմնարար այն իրողութեամբ, որ տարածքային հարցերի լուծման ժամանակ սկզբունքօրէն անհնար է չխօսել իրաւունքի անունից եւ իրաւունքի լեզուով: Այսպէս թէ այնպէս, ԵԱՀԿ-ը դիմում է իրաւական հասկացութիւնների ու սկզբունքների: Տարածքային ամբողջականութեան (սահմանների անձեռնմխելիութեան) եւ ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքները, որոնց դիմում է ԵԱՀԿ-ը, միջազգային իրաւունքի սկզբունքներ են: ԵԱՀԿ կողմից խնդրի էութեան աղաւաղումը չի յանգում միայն այն կեղծ դրոյթին, թէ իբր այդ սկզբունքները հակասում են միմեանց: Իրականում միաժամանակ երկու կեղծարարութիւն է արւում: Նախ, հարցի իրաւական հիմքերին հակառակ Ադրբեջանական Հանրապետութեանը վերագրում է տարածքներ, որոնք նրան իրաւաբանօրէն չեն պատկանում եւ այդ հիման վրայ առաջադրւում է տարածքային ամբողջականութեան իրաւական սկզբունքը: Այնուհետեւ անտեսում է ԼՂՀ կայացման իրաւական հիմքերը եւ հարցը յանգեցնում է ԱՀ-ից ԼՂ-ի անջատմանը, հակառակ այն բանի, որ ԼՂ-ի կայացումը կապ չունի անջատողականութեան հետ: Փաստօրէն ԵԱՀԿ-ը փաստաթղթերով հաստատուած խնդրի իրական իրաւական փաթեթի փոխարէն ունի փաստաթղթեր չպարունակող մի կեղծ փաթեթ, որտեղ դրուած է միայն ԱՀ տարածքային ամբողջականութեանը վերաբերող կեղծ սկզբունքը: Վիրտուալ այդ փաթեթը ենթակայ չէ բացման կամ քննարկման, եւ հէնց դա է խնդրի քաղաքականացման բուն էութիւնը:

Դրոյթ քառասունհինգերորդ: Մեծագոյն վտանգը, որ իր մէջ պարունակում է ոչ լեգիտիմ սահմաններում ԱՀ ճանաչումը, ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի բացայայտ արժեզրկումը եւ տարածքային ամբողջականութեան սկզբունքի այլասերումն է: Ընդ որում, տարածքային ամբողջականութեան սկզբունքը վերածւում է տարածքներ զաւթելու իրաւական քօղարկման միջոցի:

Դրոյթ քառասունվեցերորդ: Եւրոպայի դիրքորոշման ներքին հակասութիւնը ունի այլ դրսեւորումներ: Ամէն անգամ, երբ Լեռնային Ղարաբաղում տեղի են ունենում պառլամենտական կամ նախագահական ընտրութիւններ, եւրոպական կառոյցները շտապում են յայտարարել, թէ չեն ճանաչի դրանց օրինականութիւնը, հակառակ այն բանի, որ դեռեւս

1992-ին ԵԱՀԽ-ն որոշել է Մինսկի խորհրդաժողով հրաւիրել Լեռնային Ղարաբաղի ընտրուած ներկայացուցիչներին: Ընտրուած ներկայացուցիչներ Լեռնային Ղարաբաղը կարող է ունենալ միայն ընտրութիւնների արդիւնքում: Այնպէս որ, օրինապաշտ Եւրոպան հակասում է ինքն իրեն, չճանաչելով ընտրութիւններ անցկացնելու եւ ընտրուած իշխանութիւններ ունենալու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անօտարելի իրաւունքը, մանաւանդ որ ինքը՝ Եւրոպան որոշում ունի գործ ունենալ Լեռնային Ղարաբաղի ընտրուած ներկայացուցիչների հետ:

Դրոյթ քառասունեօթերորդ: Խոշոր տէրութիւնների կողմից ԱՀ ճանաչումը նրան իրաւաբանօրէն չպատկանող տարածքներում վերջինիս համար 1992-ին դարձել է Լեռնային Ղարաբաղի դէմ պատերազմ սանձազերծելու իւրօրինակ թոյլտուութիւն: 1991-1992-ին խոշոր տէրութիւններին եւ Եւրոպային բաւական էր յայտարարել, որ իրենք կը սատարեն հիմնախնդրի իրաւական փաթեթի հիմքի վրայ Ղարաբաղեան թնջուկի լուծմանը, որպէսզի կանխէին պատերազմը: Կատարուեց հակառակը: ԱՀ ճանաչումը իրեն չպատկանող տարածքներում Բաքուն ընդունեց որպէս պատերազմ սկսելու արտօնութիւն: Փաստօրէն խոշոր տէրութիւնների կողմից 1992-ին խնդրի իրաւական հիմքերի անտեսումով Ադր. ԽՍՀ սահմաններում ԱՀ ճանաչումը դարձաւ պատերազմ սանձազերծելու սադրանք:

Դրոյթ քառասունութերորդ: Ինչպէս անցեալ դարի 20-ական թուականներին, այնպէս էլ դարավերջին, անկախացման ընթացքում Բաքուն շահարկել է նաւթային գործօնը: Խորհրդային Ադրբեջանի լիդեր Նարիմանովին է պատկանում «Չտաք Լեռնային Ղարաբաղը՝ կերոսին չենք տայ» Մոսկուային ուղղուած սպառնալիքը: 1994-ից սկսած Բաքուն ամէն կերպ ջանում է աշխատեցնել նաւթային գործօնը, կապելով այն ապագայ նաւթամուղի անվտանգութեան հետ: 90-ականներին այդ փաստարկը գուցէ եւ ազդեցութիւն է ունեցել նաւթամուղով շահագրգիռ երկրների վրայ: Բայց երբ նաւթամուղը մի քանի տարի անխափան գործեց եւ պարզ դարձաւ, որ խնդիրը անմիջական կապ չունի Բաքու-Ջեյհան խողովակի անվտանգութեան հետ, Բաքուի «նաւթային դիւանագիտութիւնը» կորցրեց իր երբեմնի համոզչականութիւնը, մանաւանդ, որ նաւթի արտահանութեամբ առաջին հերթին ու բոլորից առաւել շահագրգռուած է ինքը՝ Բաքուն: Այսօր նաւթամուղին սպառնացող վտանգը գալիս է ոչ թէ խնդրի խաղաղ կարգաւորման ռազմավարութիւնը որդեգրած Լեռնային Ղարաբաղից, այլ հէնց ռազմաշունչ կեցուածք ընդունած Բաքուից: ՀՀ համար, որին արդէն շրջանցել են նաւթամուղային եւ տրանսպորտային ծրագրերը, նաւթամուղը կորցրել է խնդրի կարգաւորման մէջ գայթակղիչ խայծի դերը:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Դրոյթ քառասունիններորդ: Հակամարտութեան կարգաւորման շուրջ ամենաարդիւնաւէտ բանակցութիւնները վարուել են 1992-1994 թուականներին: 1994 թ. մայիսի 5-ին Ռուսաստանի միջնորդական ջանքերով ձեռք է բերուել հրադադարի մասին Բիշքեկեան արձանագրութիւնը, որի տակ դրուած են Բաքուից, Ստեփանակերտից եւ Երեւանից լիազօրուած պատուիրակութիւնների ստորագրութիւնները: Եռակողմ այդ արձանագրութեան հիման վրայ հակամարտութեան երեք կողմերը 1994 թ. մայիսի 9-11-ը ստորագրել են կրակի դադարեցման մասին համաձայնագիրը (մայիսի 9-ին Բաքուում այն ստորագրել է ԱՀ պաշտպանութեան նախարար Մամեդովը, մայիսի 10-ին Երեւանում՝ ՀՀ պաշտպանութեան նախարար Ս. Սարգսեանը եւ Ստեփանակերտում՝ ԼՂ-ի բանակի զօրահրամանատար Ս. Բաբայեանը): 1995 թուականի փետրուարի 3-ին հակամարտութեան երեք կողմերը դարձեալ Ռուսաստանի դիւանագիտական ակտիւութեան շնորհիւ ստորագրել են շփման գծում միջադէպերի կարգաւորման մասին փաստաթուղթ: Հակամարտող երեք կողմերի կողմից ստորագրուած այս փաստաթղթերը կազմում են այն հիմքը, որի շնորհիւ ապահովւում է 1994 թ. հաստատուած հրադադարը: 1994-ից ի վեր առանց միջազգային խաղաղապահ ուժերի միջամտութեան հրադադարի պահպանումը վկայութիւնն է նաեւ այն բանի, որ տարածաշրջանում հաստատուած է աշխարհաքաղաքական ուժերի հաւասարակշռութիւն:

Դրոյթ յիսուներորդ: Այն ճեւաչափը, որում ԵԱՀԿ հովանու տակ ընթանում են հակամարտութեան կարգաւորման բանակցութիւնները, թոյլ չեն տալիս, որ բանակցային գործընթացում խնդիրը ներկայացուի իր բնոյթին ու էութեանը համարժէք ձեւով: Հակամարտութեան գլխաւոր կողմը՝ Լեռնա-

յին Ղարաբաղը, յանձինս իր ընտրուած ներկայացուցիչների, Մինսկի խորհրդաժողովում, որտեղ պէտք է վերջնական որոշումներ ընդունուեն խնդրի կարգաւորման մասին, հրաւիրուած կը լինի միայն որպէս շահագրգիռ կողմ: Դա հակամարտութեան այն կողմն է, որին անմիջապէս վերաբերում է խնդիրը, որի հետ Բաքուն ստորագրել է փաստաթղթեր մինչ օրս պահպանուող հրադադարի մասին, առանց որի հնարաւոր չէ որեւէ վերջնական վճռի ընդունում եւ որն արդէն դարձել է տարածաշրջանային կայունութեան կարեւոր գործօններից մէկը: Բանակցային գործընթացի արդիւնաւէտութիւնը պահպանելու փոխարէն, ԵԱՀԿ-ը որերորդ տարին է արդէն Բաքուի պահանջով բանակցային գլխաւոր հարթակ է դարձրել ՀՀ եւ ԱՀ նախագահների խորհրդակցական բնոյթի հանդիպումները: Յատկանշական է, որ ԵԱՀԿ այդ դիրքորոշումը հակասութեան մէջ է Եւրոխորհրդարանի 1993-ի յուն. 21-ին ընդունած բանաձեւի հետ, որով պահանջւում էր անմիջական բանակցութիւններ սկսել Բաքուի եւ ԼՂ-ի իշխանութիւնների միջեւ: ԵԱՀԿ գործող ձեւաչափը բանակցային գործընթացից դուրս է թողնում նաեւ հակամարտութեան հիմնական զոհին՝ ցեղասպանութեան ենթարկուած ադրբեջանահայութեանը, որի անունը ընդհանրապէս չի յիշատակւում հակամարտութեան կարգաւորման՝ Մինսկի խմբի կողմից ներկայացուած նախագծերում:

Դրոյթ յիսունմէկերորդ: Բանակցութիւնների ժամանակ Մինսկի խմբի միջնորդները կողմերին յորդորում են «չվերադառնալ պատմութիւն», չդիմել պատմական փաստարկների: Սակայն հակամարտութեան կարգաւորման՝ Մինսկի խմբի կողմից ներկայացուած բոլոր նախագծերում առաջարկւում է վերադառնալ պատմութիւն՝ 1988 թ. իրողութիւններին, երբ սումգայիթեան ջարդերով ողջ Ադր. ԽՍՀ-ում սկսեցին մոլեգնել հայկական ջարդերն ու տեղահանութիւնները: Եթէ թոյլատրւում է վերադառնալ պատմութիւն, ապա կարելի է վերադառնալ 13-րդ դար, երբ տարածաշրջանում ադրբեջանցի ազգ կամ ադրբեջանական պետութիւն չի եղել, իսկ Արցախն իր սահմաններում ունեցած Խաչէնի իշխանութիւնը տարածաշրջանի հզօր ուժերից մէկն էր: Կարելի է վերադառնալ նաեւ 1921 թ. նոյեմբեր, երբ Բաքուում ԼՂ-ն ճանաչուել է Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս, կամ 1921 թ. յունիս, երբ ԼՂ-ն հռչակուել է Խորհրդային Հայաստանի մաս, կամ 1991 թ. սեպտեմբեր, երբ ԱՀ-ին չպատկանող տարածքներում հռչակուել է ԼՂՀ-ն: Մերօրեայ ստատուս-քուոյից ցանկացած նահանջ նահանջ է դէպի պատմութիւն:

Դրոյթ յիսուներկուերորդ: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ոչ ՀՀ Նախագահին, ոչ էլ ԱՀ Նախագահին չի տուել ԼՂ-ի վերաբերեալ որեւէ փաստաթուղթ ստորագրելու մանդատ: Անհաւանական է թւում, որ ԵԱՀԿ-ն, որը ամենահիմնարար իրաւական սկզբունքներ ու աւանդոյթներ ունեցող միջազգային կառոյցն է մեր օրերում, մէկ դար անց իր վրայ կը վերցնի բոլշեւիկեան Կովբիւրոյի դերը եւ Լեռնային Ղարաբաղի մասին որոշում կ՝ընդունի առանց նրա մասնակցութեան:

Դրոյթ յիսուներեքերորդ: Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցութիւններին զուգահեռ 2001 թուականից սկսած հակամարտութեան կարգաւորման շուրջ ժողովրդական դիւանագիտութեան հունում բանակցութիւններ են վարւում նաեւ ռուս-ամերիկեան Դարտմուտեան խորհրդաժողովի ներքոյ: Խորհրդաժողովի մասնակիցները՝ Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանի եւ Հայաստանի հասարակական ու քաղաքական գործիչները տասներորդ ռաունդի ժամանակ համաձայնութեան են եկել մի փաստաթղթի շուրջ (նրանց համաձայնութեամբ Խորհրդաժողովի համանախագահներ Հարոլդ Սոնդերսը եւ Վիտալի Նաումկինը իրենց՝ համանախագահների, անունից փաստաթուղթը ներկայացրել են Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի իշխանութիւններին, հասարակական ու քաղաքական շրջանակներին եւ Մինսկի խմբին), որում հակամարտութեան կարգաւորման սկզբունքօրէն նոր մօտեցում է առաջարկւում: Փաստաթղթում հիմնաւորւում է այն գաղափարը, որ հակամարտութեան կարգաւորումը պէտք է սկսուի ժողովուրդների միջեւ վստահութեան ձեռք բերումից, ագրեսիւ քարոզչութեան դադարեցումից, միմեանց նկատմամբ հանդուրժողականութեան մթնոլորտի ստեղծումից, մի խօսքով՝ խաղաղութեան գործընթացից: Հիմնաւորւում է այն գաղափարը, որ առանց Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանի, Հայաստանի ժողովուրդների համաձայնութեան խնդրի կարգաւորման վերաբերեալ ստորագրուած որեւէ փաստաթուղթ իրական ուժ չի ունենայ եւ չի բերի ցանկալի հետեւանքների:

ԷԹՆԻԿ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԶՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Ադրբեջանի փոքրաթիւ բնիկ ժողովուրդների ողբերգական ճակատագիրը

Բենիամին ՄԻՐԶՈԵԱՆ

Կովկասում դարեր շարունակ կողք կողքի ապրել են էթնիկական տարբեր ծագում ունեցող ժողովուրդներ, որոնց քիչ թէ շատ ճիշտ թուաքանակն արտացոլուել է 1897 թ. մարդահամարի ժամանակ: Այսպէս, Կովկասեան լեզուի խմբերի մէջ լեզգիների (դաղստանցիների) ընդհանուր թիւը կազմել է 600 հազ., այդ թւում Ադրբեջանի ներկայ տարածքում, ինչպէս նշուած է Կ. Մամեդովի գրքում՝ 125,8 հազ. մարդ: Խորհրդային Միութիւնում, 1979 թ. առաւել արժանահաւատ մարդահամարի տուեալներով, Դաղստանի ժողովուրդների թուաքանակը կազմել է 1656,7 հազ. մարդ, այդ թւում Ռուսաստանի Ֆեդերացիայում՝ 1,4 մլն., որից Դաղստանի Ինքնավար Հանրապետութիւնում 1267 հազ., իսկ Ադրբեջանում 205,2 հազ. մարդ:

Այսպիսով, Ռուսաստանի կազմում գտնուող Դաղըստանի ժողովուրդների թուաքանակը 82 տարում աւելացել է 3 անգամ, իսկ այն մասում, որը կամայականօրէն բաժանուել եւ մտցուել է Ադրբեջանի կազմում, նոյն բնակչութեան թիւն աւելացել է 63 տոկոսով: Ընդ որում Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին դաղստանցիները պարզապէս փախել են Ադրբեջանից եւ նրանց թուաքանակը 1926 թ. մարդահամարով կազմել է ընդամէնը 71,3 հազ. մարդ եւ միայն 1939 թ. մարդահամարի տուեալներով վերականգնուել է 1897 թ. մակարդակը (127,4 հազ. մարդ):

Սա նոյն ազգին բռնի կերպով բաժանելու ցայտուն օրինակ է, որը վերաբերում է նաեւ օսերին, էլ աւելի մեծ չափով հայ ժողովրդին, որի ձգողական կենտրոնը դարձաւ Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւնը: Տըւեալ պարագայում Ռուսաստանի կազմում Դաղստանի եւ այլ ժողովուրդների համար ստեղծուեցին բոլոր անհրաժեշտ սոցիալ-տնտեսական եւ բարոյահոգեբանական պայմանները ազգային դաւանանքներն ու աւանդոյթները պահպանելու, տնտեսական ու մշակութային զարգացումն ապահովելու համար:

Ուշագրաւ է այն փաստը, որ լեզգիները, ոգեւորուած Ղարաբաղի հայութեան ազատագրական շարժումով, 1990 թ. յունուարի 14-ին Գուսարի քաղաքում բողոքի ցոյց կազմակերպեցին եւ պահանջեցին վերամիաւորուել Դաղստանի Ինքնավար Հանրապետութիւնում ապրող հայրենակիցների հետ: Սակայն նման ցոյցերը դաժանօրէն ճնշուեցին, խոստանալով լայն իրաւունքներ տալ Դաղստանի հպարտ ու ազատամիտ ժողովուրդներին: 1999 թ. մարդահամարով արդէն 178 հազ. բնակիչ իրենց համարեցին լեզգիներ եւ 51 հազ. աւարցիներ:

Թալիշները պարսկական ծագում ունեցող հնագոյն ժողովուրդ են: Յենուելով Կ. Մամեդովի գրքի 165-րդ էջում բերուած աղիւսակի տուեալների վրայ, նրանց թուաքանակը 1897 թ. կազմել է 35 հազ., 1926 թ.՝ 77 հազ., 1939 թ.՝ 87,5 հազ. մարդ: Նոյն աղիւսակում 1959 եւ 1970 թուականների մարդահամարի տուեալներով արդէն այդպիսի ազգութիւն չկայ: Նրանք «անհետացել են» նաեւ 1979 թ. մարդահամարի տուեալներով: Եւ յանկարծ 1999 թ. մար-

դահամարով պարզւում է, որ այդպիսի ժողովուրդ այնուամենայնիւ գոյութիւն ունի, որին ադրբեջանական իշխանութիւնները որոշել են «վերակենդանացնել»: Այս անգամ արդէն 76,8 հազ. մարդ իրենց հաշուեցին «թալիշներ»: Բանն այն է, որ նրանք նոյնպէս համարձակուեցին 1989 թ. դեկտեմբերի 29-ին Ջալալաբադ քաղաքում ցոյց կազմակերպել, պաշտպանելով իրենց իրաւունքները եւ արժանապատուութիւնը: Եղան արիւնահեղութիւններ:

Թաթերը նոյնպէս պարսկական սերունդ են, նրանց թուաքանակը, նոյն աղբիւրի համաձայն, 1897 թ. կազմել է 91,3 հազ., 1926 թ.՝ 28,4 հազ., 1970 թ.՝ 29,2 հազ. մարդ: Յետագայ մարդահամարներում նրանք չեն յիշատակւում: Փաստօրէն այդ ժողովրդի ասիմիլեացիան իրականացուել է Ադրբեջանի խորհրդայնացման առաջին տարիներին եւ աւարտուել 70-80-ական թուականներին: Միայն այդ ժողովրդի հաշուին ադրբեջանցիների թիւն աւելացել է առնուազն 500 հազ. մարդով:

Բնորոշ է նաեւ քուրդ ժողովրդի ողբերգական ճակատագիրն Ադրբեջանում: 1926 թ. մարդահամարի տուեալներով Ադրբ. ԽՍՀ-ում բնակւում էր 41,2 հազ., իսկ Հայկ. ԽՍՀ-ում՝ 12 հազ. քուրդ: Հայաստանը Ղարաբաղից տերիտորիալ կապերով անջատելու նպատակով կազմաւորուել էր քրդական ինքնավար օկրուգ: Սակայն արդէն 1939 թ. մարդահամարով Ադրբեջանում իրենց քուրդ են համարել միայն 6 հազ. մարդ: 1979 թ. մարդահամարի տուեալներով, ԽՍՀՄ-ում ապրող 116 հազ. քրդերից Հայաստանում բնակուել են 51 հազ. (44%), իսկ Ադրբեջանում նրանք նոյնիսկ չեն յիշատակւում ազգային փոքրամասնութիւնների կազմում:

Նման ասիմիլացումը ցեղասպանութեան քաղաքականութեան արտայայտման ակնառու ձեւերից է, որն անպատիժ եւ ամբողջ աշխարհի առջեւ կիրառուեց Խորհրդային Ադրբեջանում: Այդ երկրի պատմաբաններն ու ժողովրդագիրները մինչեւ հիմա էլ փորձում են «գիտականօրէն հիմնաւորել», որ փոքրաթիւ ազգերի ձուլման ընթացքը «օրինաչափ» երեւոյթ է:

Նոյն Կ. Մամեդովն ադրբեջանական մամուլում վայնասուն բարձրացրեց 1989 թ. Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի թերթերում իմ՝ ծաւալով փոքր «Ինչի մասին են ճչում թուերը» յօդուածի դէմ: Յատկապէս նրան վրդովեցրել էր այն եզրակացութիւնը, որ 1921-1978 թթ. ադրբեջանցիների թիւն Ադրբեջանում աւելացել է մօտ 5 անգամ, իսկ ազգային փոքրամասնութիւններինը՝ 70 տոկոսով եւ այդ ժամանակաընթացքում աւելի քան 1,5 մլն. մարդ դարձել են ադրբեջանցիներ կամ հեռացել են հանրապետութիւնից: Իրականում այդ թիւը կազմում էր աւելի քան 2 մլն. մարդ:

Նոյն հեղինակն Ադրբեջանում ասիմիլեացիայի բացայայտ քաղաքականութիւնը արդարացնում է լենինեան թուերով: Բայց օրինական հարց է առաջանում, թէ ինչո՞ւ նոյն լենինեան քարոզչութիւնն աշխարհով մէկ յայտարարում էր, որ Խորհրդային Միութիւնում աւելի քան 100 ազգեր ու ժողովուրդներ են բնակւում, այն էլ «համերաշխ մէկ ընտանիքում»: Ինչո՞ւ 1979 թ. մարդահամարով, հիւսիսի ժողովուրդների (ընդամէնը 158,3 հազ. մարդ) կազմում թուարկւում են 23 տարբեր ժողովուրդներ: Ինչո՞ւ պարսկալեզու ժողովուրդներն Ադրբեջանի կազմում դարձան թուրքալեզու ադրբեջանցիներ, իսկ Պարսկաստանում մինչեւ հիմա էլ, այսպէս կոչուած, ադրբեջանցիները մնում են թիւրքալեզու ժողովուրդ:

Այդ ինչպէ՞ս պատահեց, որ ընդամէնը 9 տարում (1970 եւ 1979 թթ. մարդահամարների միջեւ ընկած ժամանակում) Ադրբեջանում ադրբեջանցիների թիւն աւելացաւ 25 %-ով, իսկ միւս ազգերի ու ժողովուրդների թուաքանակը պակասեց 1,7 %-ով: Եւ դա այն դէպքում, երբ ալիեւեան այդ «հրաշք» հանրապետութիւնը 70-ական թուականներին պարգեւատրուեց Հոկտեմբերեան յեղափոխութեան, ժողովուրդների բարեկամութեան, Լենինի շքանշաններով եւ 10 անգամ ճանաչուեց համամիութենական սոցիալիստական մրցակցութեան յաղթող, միաժամանակ սահմանելով ռեկորդ «այլ ազգերին» արտաքսելու եւ ասիմիլացնելու գործընթացում:

Ադրբեջանի էթնոժողովրդագրական ընդհանուր պատկերը XX դարում

Կ. Մամեդովի գրքում, նշելով, որ Ցարական Ռուսաստանում ադրբեջանցիներին անուանում էին «անդրկովկասեան թաթարներ» կամ «թիւրքեր», չգիտես թէ ինչպէս է հաշուել ադրբեջանցիների թուաքանակը 1897 թ. մարդահամարի տուեալների հիման վրայ (1092,8 հազ. մարդ): Մինչդեռ թիւրքալեզու բնակչութեան թիւը (առանց

բաժանելու) Ցարական Ռուսաստանում 1897 թ. կազմել է 440,4 հազ. մարդ, չհաշուած կարապափախները, որոնք թիւրքալեզու չեն համարուել (30 հազ. մարդ) եւ թուրքերը (208,8 հազ. մարդ): (Տես Վ. Ի. Կոզլով, ԽՍՀՄ-ի ազգութիւնները, ռուս., Մ., 1982, էջ 37-38):

Նոյն աղբիւրի համաձայն, հայերի թիւը Ռուսաստանում 1897 թ. կազմել է 1173,8 հազ. մարդ: Անդրկովկասի 3 հանրապետութիւնների բնակչութեան թուաքանակը 1913 թ. հաշւում է 5940 հազ.: Եթէ անգամ ընդունենք, որ թուրքալեզու ադրբեջանցիների թիւն Անդրկովկասում 1913 թ. հասել է 800 հազ. մարդու, ապա նրանց տեսակարար կշիռը տարածաշրջանի ամբողջ բնակչութեան մէջ հազիւ կարող է հասնել 14-15 տոկոսի: Օրինական հարց է առաջանում, թէ այդ ի՞նչ հրաշքով 14-15 տոկոս կազմող քոչուոր ցեղերը դարձան Անդրկովկասի մօտ 50 տոկոս լաւագոյն մասի տէրն ու տիրակալը, իսկ XX դարի վերջին՝ գրեթէ միակ ազգութիւնը:

Դիտարկենք XX դարում անցկացուած մարդահամարի տուեալները Խորհրդային Ադրբեջանի տարածքում (հազ. մարդ, թուերը կլորացուած են):

Ազգութիւնները	1926	1939	1959	1970	1979	1989	1999
Ամբողջ ազգաբնակչութիւնը այդ թվում՝	2315	3205	3698	5117	6027	7021	7953
ադրբեջանցիներ	1438	1871	2494	3777	4709	5805	7205
%	62.1	58.4	67.4	73.8	78.1	82.7	90.6
հայեր	282	388	442	483	476	391	121
%	12.2	12.1	12.0	9.4	7.9	5.6	1.5
ռուսներ	221	528	501	510	455	392	142
%	9.5	16.5	13.5	10.0	7.9	5.6	1.8
այլ ազգութիւններ	374	418	261	347	367	433	485
%	16.2	13.0	7.1	6.8	6.1	6.1	6.1

Աղիւսակում բերուած պաշտօնական վիճակագրական տուեալները թոյլ են տալիս անել հետեւեալ եզրակացութիւնները:

1. Նախապատերազմեան տարիներին Ադրբեջանի բնակչութեան ազգային կառուցուածքում լուրջ փոփոխութիւններ չեն արձանագրուել: Պահպանուել է հայերի գրեթէ նոյն տեսակարար կշիռը բնակչութեան ամբողջ կազմում, իսկ ռուսներինը գրեթէ կրկնապատկուել է: Դա ունի իր բացատրութիւնը: Այդ շրջանում իրագործւում էր ամբողջ երկրի ինդուստրացման ստալինեան պլանը, մինչդեռ ադրբեջանցիները գերազանցապէս գիւղաբնակ ժողովուրդ էին, չունէին անհրաժեշտ գրագիտութիւն եւ անգամ որակեալ բանուորներ չէին կարող լինել: Բաւական է նշել, որ Բաքուի նաւթարդիւնաբերութեան բանուորների ազգային կազմում թիւրքերը 1913 թ. կազմել են ընդամէնը 9,2 տոկոսը:

2. Ադրբեջանի բնակչութեան ազգային կազմում կըտրուկ փոփոխութիւն է տեղի ունեցել 1939 եւ 1959 թուականների մարդահամարների միջեւ ընկած ժամանակամիջոցի ընթացքում: Զգացնել են տալիս պատերազմի նոյն բացասական հետեւանքները, որոնք յատուկ էին ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլեւ ամբողջ Ադրբեջանի հայութեան համար: Ադրբեջանցիների թիւը 20 տարում՝ 1940-1959 թթ. աւելանում է 33,3 %-ով, իսկ հայերինը՝ 13,9 %-ով: Այստեղ ժողովրդագրական գործօնը ոչ մի դեր չի խաղացել: Ինչպէս նշւում է Կ. Մամեդովի նոյն գրքում, ծննդի գործակիցը (1000 բնակչի հաշուով) Հայաստանում 1940 թ. կազմել է 41,2, իսկ Ադրբեջանում՝ 22,5 եւ 25,2: Ակնյայտ է, որ յետպատերազմեան շրջանում սկսւում է Ադրբեջանի հայերի զանգուածային արտահոսքը դէպի Հայաստան:

3. XX դարի 60-ական թուականներին եւ յատկապէս 70-80-ականների «ալիեւշչինայի» տարիներին հայերի ու ռուսների արտագաղթն աւելի ցայտուն ու ակնյայտ բնոյթ են ստանում: Այդ շրջանում գրեթէ լիովին աւարտւում է էթնիկ մուսուլմանական ժողովուրդների ասիմիլեացիայի ենթարկելու գործընթացը: Թէեւ 1989 թ. մարդահամարի տըւ-

եալներն արժանահաւատ չեն կարող լինել, սակայն անժխտելի է այն փաստը, որ այլեւս «բազմազգ» ու «ինտերնացիոնալ», ամէնուրեք գովերգուող Խորհրդային Ադրբեջանից գրեթէ ոչինչ չէր մնացել:

4. Ղարաբաղի ազատագրական շարժումը փաստօրէն առիթ հանդիսացաւ ամբողջ Ադրբեջանի տարածքում հրահրելու հայկական ջարդեր եւ ստեղծելու այնպիսի ազգամիջեան անառողջ մթնոլորտ, որ հանրապետութիւնից հեռանան նաեւ ռուսները, ուկրաինացիները, հրէաները, վրացիները: Անկասկած, այստեղ որոշակի դեր խաղաց նաեւ անցումային շրջանում սոցիալ-տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացումը: Ինչեւիցէ, «մէկ պետութիւն, մէկ ազգ» պանթուրքական յայտնի լոզունգը դարձաւ իրականութիւն:

5. Եթէ հիմք ընդունենք վերոյիշեալ աղիւսակում բերուած մարդահամարային տուեալները, ապա նախկինում «թիւրք» կոչուող ցեղերի թուաքանակը 7 տասնամեակում աւելացել է 5 անգամ, որը ռեկորդային ցուցանիշ է աշխարհում: Ակնյայտ է, որ այստեղ վճռական դեր է խաղացել փոքրաթիւ ժողովուրդների ասիմիլեացիան: Դա տարածքի էթնիկ ազգութիւնների «խաղաղ» բնաջնջման քաղաքականութեան արդիւնքն էր: Այն, ինչ չէր յաջողւում անգամ Թուրքիային, ասենք, քրդերին թուրքացնելու հետեւողական քաղաքականութեամբ, ադրբեջանական ազգամոլներին յաջողւում էր իրագործել լուռ ու մունջ, «խորհրդային միասնական ընտանիքի ու ժողովուրդների յաւերժ բարեկամութեան» քօղի տակ:

6. Դժուար չէ նկատել, որ վերջին (1999 թ.) մարդահամարի տուեալները կոպտօրէն կեղծուած են: Ամէնից առաջ աչքի է զարնում այն արտառոց փաստը, որ մարդահամարի մէջ մտցուել են նաեւ Լեռնային Ղարաբաղի հայերը, «օկուպացուած» տերիտորիայի «մէկ միլիոն փախստականները», Ադրբեջանից ժամանակաւոր հեռացած 2 մլն. ադրբեջանցիները, արդիւնքում ստանալով նախօրօք Հ. Ալիեւի յանձնարարած թիւը (8 մլն. բնակչութիւն, որի 91%-ը՝ ադրբեջանցիներ):

Մանրամասն վերլուծելով Ադրբեջանում 1999 թ. յունուարի 27-ին անցկացուած մարդահամարի նախնական տուեալները, ռուս յայտնի ժողովրդագիր Ալեքսանդր Արսենեւը «Նեզաւիսիմայա գազետա» թերթում յանգում է այն եզրակացութեան, որ բնակչութեան իրական թիւն Ադրբեջանում կազմում է 3,6-3,7 մլն. մարդ: Նա մատնանշում է նաեւ ադրբեջանական որոշ աղբիւրներ, օրինակ՝ Արիֆ Եունուսովին, որը նոյնպէս ստացել է «համանման թիւ»:

Ո՞ւմ է պէտք այդպիսի հրէշաւոր կեղծիքը: Այդ հարցին Արսենեւը պատասխանում է հետեւեալ կերպ. «ԱՀ-ի բնակչութեան թուաքանակի կեղծարարութիւնը Ադրբեջանի իշխանութիւնների կողմից գիտակցուած միջոցառում է, որի նպատակն է միջազգային հանրութեանը համոզել ԱՀ-ի հզօրութեան եւ մեծ ներուժ ունենալու մէջ, ինչպէս նաեւ «հարթել» այդ պետութիւնում երկար տարիների էթնիկական մաքրման հրէշաւոր արդիւնքները եւ ցեղասպանութեան գործողութիւնները»: («Գոլոս Արմենիի», 19.02.2000 թ.)

Ինչպէս է իրագործուել Ղարաբաղի հայաթափումը

Ադրբեջանի ազգամոլներին ձեռք չէր տալիս անգամ «լայն իրաւունքներով ինքնավար մարզի» կարգավիճակի առաջարկը: Պատահական չէ, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի Կենտգործկոմի որոշումն ընդունուեց միայն երկու տարի յետոյ՝ 1923 թ. յուլիսի 7-ին: Ընդ որում որոշման մէջ չմտցուեցին այնպիսի «մանրուքներ», ինչպիսիք «լայն իրաւունքներ» եւ «հայկական» բառերն էին:

Այնուամենայնիւ, այդ որոշման առաջին կէտում նշուեց. «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմաւորել ինքնավար մարզ, որպէս ԱԽՍՀ-ի բաղկացուցիչ մաս՝ Խանքենդ կենտրոնով»: Ի դէպ, ծնուել եմ այդ տարում (1923 թ.) եւ կարող եմ վկայել, որ ադրբեջանական գիւղեր մարզում հատ ու կենտ են եղել: Մինչդեռ ադրբեջանական ստախօսութիւնն այն աստիճանի հասաւ, որ ղարաբաղեան հակամարտութեան տարիներին յայտարարուեց. «1921 թ. Լեռնային Ղարաբաղի բնակչութեան 90 տոկոսը եղել են ադրբեջանցիներ» («Բակինսկի ռաբոչի», 07.06.1989):

Լեռնային Ղարաբաղի ազգային կազմի վերաբերեալ մարդահամարային տուեալները, որոնք արձանագրուած են ադրբեջանական պաշտօնական վիճակագրական ժողովածուներում, հետեւեալն են:

ԼՂԻՄ-ի ազգային կազմը (հազ.մարդ)

	1926		1939		1959		1970		1979	
	թվաք.	%	թվաք.	%	թվաք.	%	թվաք.	%	թվաք.	%
Ամբողջ բնակչությունը այդ թվում՝	125.3	100	150.8	100	130.4	100	150.3	100	162.2	100
հայեր	111.7	89.1	132.8	88.1	110.1	84.4	121.1	80.6	123.1	75.9
ադրբեջանցիներ	12.6	10.1	14.1	9.3	18.0	13.8	27.2	18.1	37.2	22.9
ռուսներ	0.6	0.5	3.2	2.1	1.8	1.4	1.3	0.9	1.3	0.8
այլ ազգեր	0.4	0.3	0.7	0.5	0.5	0.4	0.7	0.4	0.6	0.4

«Լղիմ-ը 50 տարի խորհրդային բարեկամական ընտանիքում» ոչնչացուած վիճակագրական ժողովածուի տուեալներով, որի մէկ օրինակը պահպանել ենք, Լեռնային Ղարաբաղի նոյն տարածքի վրայ 1913 թ. բնակւում էր 176 հազ. մարդ: Այստեղ նշւում է մարզի բնակչութեան թուաքանակի փոփոխութիւնն ըստ շրջանների (հազ. մարդ):

Շրջաններ	1913	1926	1939	1959	1970
Ստեփանակերտ	30	29	40	40	50
Մարտակերտ	26	32	41	38	44
Մարտունի	28	29	32	25	26
Հադրութ	33	25	27	17	16
Շուշի	59	10	11	10	14
Ընդամէնը	176	125	151	130	150

Երկու աղիւսակների տուեալները թոյլ են տալիս անել հետեւեալ եզրակացութիւնները

1. 1913-1926 թթ. միջեւ ընկած ժամանակաընթացքում Լեռնային Ղարաբաղի ներկայիս տարածքի բնակչութեան թուաքանակը պակասել է 29 տոկոսով: Դա ամբողջովին տեղի է ունեցել հայկական ջարդերի ու արտագաղթի հետեւանքով: Դժուար չէ նկատել, որ Շուշիի շրջանի բնակչութիւնը կրճատուել է մօտ 6 անգամ: 1920 թ. մարտին մուսավաթական ու թուրքական հրոսակախմբերը հիմնովին հրկիզում են քաղաքի հայկական մասը, գազանաբար սպանում հազարաւոր անմեղ մարդկանց: Այդ պատճառով 1926 թ. մարդահամարով շրջանում մնում են 10 հազ. մարդ, որոնք գերազանցապէս ադրբեջանցիներ էին:

Դժուար չէ նաեւ նկատել, որ Շուշին բոլորովին էլ ադրբեջանական «հնագոյն քաղաք» չի եղել: Ինչպէս նշում է պատմաբան Վ. Պոտտօն, «Վարանդայի հզօր Մելիք Շահնազարը... սերտ դաշն է կապում Փանահ խանի հետ, նրան իրաւունք տալիս իր տարածքում կառուցելու Շուշի ահեղ բերդը»: Ցարական Ռուսաստանի տիրապետութեան ժամանակ (1813-1917 թթ.) Շուշին դառնում է Անդրկովկասի արդիւնաբերական ու մշակոյթի խոշոր կենտրոններից մէկը, որտեղ 1913 թ. բնակւում էր 42,6 հազ. մարդ:

2. Նախապատերազմեան ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի բնակչութեան թուաքանակը, եթէ հիմք ընդունենք 1923 թ. յիրաւի աւելի արժանահաւատ գնահատականը գրեթէ չի աւելացել: Համեմատութեան համար նշենք, որ 1921-1940 թթ. Ադրբեջանի բնակչութեան թիւն աւելացել է մօտ 70, իսկ Հայաստանինը՝ 83 տոկոսով:

Նման խիստ տարբերութեան հիմնական պատճառը ստալինեան ինդուստրացման ու կոլեկտիւացման քաղաքականութիւնն էր: Մարզում նոյնիսկ չվերականգնուեց լիովին կործանուած տեքստիլ արդիւնաբերութիւնը: Տնտեսութեան եւ այլ ոլորտներում զբաղուած բանուոր-ծառայողների թիւը 1940 թ. կազմում էր ընդամէնը 13,7 հազ. մարդ: Կոլտնտեսական գիւղացին սովից խուսափելու համար սկսեց աշխատանք որոնել քաղաքներում: Այդ տարիներին հաղորդակցական կապերը Հայաստանի հետ թոյլ էին: (Երկաթգծով Երեւան հասնելու համար 1940 թ. երկու օր էր պահանջւում, որպէսզի ես ուսումս կարողանայի շարունակել Երեւանի պետական համալսարանում): Միգրացիոն գործընթացները կրում էին գերազանցապէս ներհանրապետական բնոյթ: Հարկ է նաեւ նշել, որ քանի դեռ գոյութիւն ունէր Անդրֆեդերացիան, սոցիալ-տնտեսական ու ազգամիջեան քաղաքականութեան մէջ ցայտուն չէր զգացւում ազգային խտրականութիւնը:

3. Հայրենական պատերազմը եւ դրա հետեւանքները խիստ բացասական ազդեցութիւն ունեցան Լեռնային Ղարաբաղի եւ յարակից բոլոր հայկական շրջանների հայութեան ճակատագրի վրայ: 1939 եւ 1959 թթ. մարդահամարների միջեւ ընկած ժամանակամիջոցում մարզի հայերի թիւը պակասեց 17,1 տոկոսով՝ այն դէպքում, երբ ադրբեջանցիներինն աւելացաւ 27,7 տոկոսով: Դրա հիմնական պատճառն այն էր, որ ադրբեջանական իշխանութիւնները հայկական բոլոր շրջաններում իրագործեցին համընդհանուր մոբիլիզացում: Միայն ԼՂԻՄ-ից պատերազմի դաշտ ուղարկուեց շուրջ 45 հազ. մարդ, կամ բնակչութեան 30 տոկոսը: Նրանց կէսից աւելին զոհուեց, իսկ կենդանի մնացածները հեռացան հայրենիքից, աշխատանք որոնելով Ադրբեջանի եւ Հայաստանի նոր արդիւնաբերական կենտրոններում (Մինգեչաուր, Սումգայիթ, Աբովեան, Չարենցաւան եւ այլն):

4. Սկսած 60-ական թուականներից Լեռնային Ղարաբաղը եւ բոլոր հայկական շրջանները հայերից մաքրելու քաղաքականութիւնն ընդունում է բացայայտ ու պաշտօնական բնոյթ: Տեսէք, 1959-1970 թթ. մարզի հայերի թուաքանակը դեռեւս աճի միտում է ունեցել (մօտ 10 %, ադրբեջանցիները՝ 51,5 %), մինչդեռ ալիեւշչինայի առաջին տասնամեակում (1970-1979 թթ.) հայերի թիւն աւելանում է ընդամէնը 1,7, իսկ ադրբեջանցիներինը՝ 38,6 %-ով: 1989 թ. մարդահամարի տուեալները անց են կացուել արդէն հակամարտութեան, հայկական ջարդերի ու փախուստի պայմաններում: Ուստի դրանք արժանահաւատ չեն կարող լինել: Իրականութիւնն այն է, որ մարզում 80-ական թուականներին հայերի արտագաղթն ու ադրբեջանցիների ներգաղթն առաւել ինտենսիւ բնոյթ են ստացել:

«Լեռնային Ղարաբաղ (վիճակագրական մտորումներ)» ընդարձակ յօդուածում, որը լոյս է տեսել Հայկական ԽՍՀ Գիտութիւնների ակադեմիայի տեղեկագրում (1988, N 7) եւ հրատարակուել անգլերէն լեզուով Նիւ Եորքում (1990 թ.), մենք մանրամասն վերլուծել ենք սոցիալ-տնտեսական ու բարոյա-հոգեբանական մեխանիզմները, որոնք հետեւողականօրէն կիրառուել են ինքնավար մարզում՝ հայերից լրիւ մաքրելու նպատակով:

Դրանք համառօտ հետեւեալն են:

Լաւ հասկանալով, որ հայերն ընդունակ ու տեխնիկական հակում ունեցող ժողովուրդ են, Ադրբեջանի իշխանութիւնները Լեռնային Ղարաբաղում եւ հայկական յարակից շրջաններում գրեթէ ոչ մի արդիւնաբերական քիչ թէ շատ խոշոր ձեռնարկութիւն չեն կառուցել: Ահա մի քանի վիճակագրական տուեալներ: Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը 1913 թ. կազմել է Ադրբեջանի 7,5 %-ը, գրեթէ նոյնքան էլ եղել է նրա տեսակարար կշիռը արդիւնաբերական արտադրութեան մէջ, ներառեալ Բաքուի հզօր նաւթային արդիւնաբերութիւնը: Մարզը 1972 թ. թողարկել է հանրապետութեան արդիւնաբերական արտադրանքի 2,3 %-ը: Համապատասխանօրէն կրճատուել է նաեւ հայ բնակչութեան տեսակարար կշիռը՝ 2,4 %, չնայած Ղարաբաղի հայերն աչքի են ընկել ծնելիութեան ու երկարակեցութեան բարձր ցուցանիշով: Մարզում 1970 թ. արդիւնաբերա-արտադրական անձնակազմի թիւը կազմել է ընդամէնը 6543 մարդ, որոնք հիմնականում կենտրոնացուած էին Ստեփանակերտում: Ոչ մի գիտահետազօտական ու կոնստրուկտորական կազմակերպութիւն, ինչպէս նաեւ բարձրագոյն ուսումնական հիմնարկ:

Մարզի բաժինը հանրապետութեան կապիտալ ներդրումների մէջ 1940 թ. կազմել է 0,3, իսկ 50-ական թուականներին՝ 0,6 %: Բնակչութեան մէկ շնչի հաշուով տարբերութիւնը կազմել է 12-14 անգամ, իսկ առանց Բաքուի՝ 6 անգամ: Ղարաբաղեան «հրաշքի» գովերգման ժամանակ

(1968-1979 թթ.) մարզի կապիտալ ներդրումները մնացել են նոյն մակարդակի վրայ (տարեկան 24-26 մլն. ռուբ.), որի աւելի քան 50 տոկոսը ծախսուել է Սարսանգի ջրամբարի կառուցման վրայ: Մինչդեռ այդ ջրամբարի ոռոգման ջրի 98 տոկոսը օգտագործել են հարեւան ադրբեջանական շրջանները: Եւ դա այն դէպքում, երբ 70-ական թուականների սկզբներին մարզը տալիս էր Ադրբեջանի գիւղատնտեսութեան համախառն արտադրանքի 6 տոկոսը:

Տնտեսական ճնշման գործօնները թէեւ որոշիչ են, բայց բաւարար չէին մարզի ժողովրդագրական պատկերը հիմնովին փոխելու համար: Բանն այն է, որ մինչեւ 70-ական թուականները ադրբեջանցիների հաշուին բնակչութեան աճը տեղի էր ունենում հիմնականում տարերայնօրէն: Սակայն Հ. Ալիեւը մարզի ադրբեջանացման նման գործընթացը համարեց երկարատեւ եւ անարդիւնաւէտ: Դրա համար որոշուեց մարզի հայութեանը զրկել նաեւ հոգեւոր սննդից: 1975 թ. մարտին գումարուեց մարզկոմի կուսակցական պլենումը, որտեղ Բ. Կեւորկովի ձեռքով կազմակերպուեց հայկական կադրերի ջարդը, մեղադրելով նրանց «ազգայնամոլութեան» մէջ: Իրաւապահպանական եւ տնտեսական, անգամ բժշկական ոլորտներում աշխատանքի են ընդունւում միայն Բաքուից նշանակուած ադրբեջանցիները: Արգելուեցին Երեւանից ռադիոհաղորդումները: Մշակութային կապերը Հայաստանի հետ հիմնովին խզուեցին:

Միաժամանակ ալիեւեան պրոպագանդան ամբողջ աշխարհով մէկ տարածում էր այն հեքիաթը, որ Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական ցուցանիշները շատ աւելի բարձր են, քան անգամ ամբողջ Միութիւնում: «Ղարաբաղեան իւրաքանչիւր գիւղ փոքրիկ շքեղ քաղաք-այգի է: Որպէս կանոն, իւրաքանչիւր ընտանիք ապրում է 4-6 սենեակից բաղկացած սպիտակաքար երկյարկանի առանձնատնում... Իւրաքանչիւր գիւղում կան մշակոյթի տուն եւ պալատ, ակումբ, կինոթատրոն, դպրոց, աւտոմատ հեռախօսային կապ»: («Իզվեստիա», 28.09.1979): «Այստեղ ճանապարհները եւրոպականից վատը չեն» («Սովետսկի վոին», 1976, N 12): «Շատ ցուցանիշներով, այդ թւում հազար մարդուն ընկնող բժիշկների թուով Լեռնային Ղարաբաղը վաղուց անցել է զարգացած կապիտալիստական երկրներից» (Բ. Ս. Կեւորկով, «Միասնական ընտանիքում», ռուս., Բաքու, 1978, էջ 82):

Եւ այդ ամէնն ասւում էր մի ինքնավար մարզի մասին, որտեղ 1926-1980 թթ. քարտէզից անհետացել են 85 գիւղ: Ընդ որում Լեռնային Ղարաբաղում «մեռել են» ոչ միայն գիւղեր, այլ ամբողջ շրջաններ, օրինակ՝ Հադրութի շրջանը, որտեղ բնակչութեան թիւը կրճատուել է աւելի քան 2 անգամ: Վերցնենք թէկուզ նոյն անունով 2 շրջաններ: Հայաստանի Մարտունու շրջանում, որը գտնւում է ծովի մակերեւոյթից 2-3 հազ. մետր բարձրութեան վրայ, 1926 թ. մարդահամարով բնակւում էին 27 հազ., իսկ 1970 թ. մարդահամարով՝ 62 հազ. մարդ: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի տափաստանային ու արգաւանդ հողերով Մարտունիի շրջանում, համապատասխանաբար՝ 29 հազ. եւ 26 հազ. մարդ: Մեկնաբանութիւնները, թւում է, աւելորդ են:

Ազգամիջեան բախումների ակունքները

Հարաւային Կովկասում ազգամիջեան բախումների հիմնական պատճառը ստալինեան տխրահռչակ «աւտոնոմիզացիան էր», որով արտացոլւում էին տարածաշրջանի ազգային-տերիտորիալ խառնաշփոթ ու բռնի սահմանազատումները: Ընդ որում, արհեստականօրէն կազմաւորուած 5 ինքնավար միաւորումները բոլշեւիկները «նուիրեցին» Ադրբեջանին ու Վրաստանին, որոնց «տերիտորիալ ամբողջականութիւնն» այսօր եռանդագին պաշտպանում են եւրոպական կառոյցները:

Արժէ նաեւ յիշեցնել, որ ինքը՝ Ի. Ստալինը դեռեւս 1923 թ. ՌԿ(բ)Կ 12-րդ համագումարին տուած հաշուետւութիւնում ստիպուած էր խոստովանել, որ Վրաստանում եւ Ադրբեջանում «պաշտպանողական ազգայնամոլութիւնը փոխարկուել է յարձակողականի», որը հիմնականում ուղղուած էր հայերի դէմ: Ազգայնամոլութիւնը (շովինիզմը) ֆաշիստական գաղափարախօսութիւն է, որը ստալինեան ռեժիմի օրօք դեռեւս այնպիսի բացայայտ ու պաշտօնական բնոյթ չէր կրում, ինչպէս, ասենք, բրեժնեւեան լճացման տարիներին: Այդ հանրապետութիւններում ստեղծուեց այնպիսի անհանդուրժողական ու մոլի ազգայնամոլական իրավիճակ, որ անգամ ռուսների արտագաղթն ընդունեց զանգուածային բնոյթ:

Թւում է, այսօր էլ բացառիկ հետաքրքրութիւն են ներկայացնում հետեւեալ աղիւսակի տուեալները:

Մարդահամարային նոյն տուեալները ցոյց են տալիս, որ 20 տարուայ ընթացքում տեղի է ունեցել Ռուսաստանի Ֆեդերացիայից ռուսների զգալի արտագաղթ դէպի Ղա-

Բնակչութեան թուաքանակի յաւելածը

1959 եւ 1979 թուականների մարդահամարների միջեւ ընկած ժամանակաընթացքում (տոկոսներով)

	ԽՍՀՄ	ՌԽՖՍՀ	Հայկական ԽՍՀ	Ադրբեջ. ԽՍՀ	Վրաց. ԽՍՀ
Ամբողջ ազգաբնակչութիւնը այդ թվում՝	25.5	16.9	72.3	63.0	3.5
ռուսներ	20.4	15.9	25.6	-5.2	-8.9
հայեր	48.9	42.4	75.6	7.5	1.1
ադրբեջանցիներ	86.3	114.6	49.2	88.8	67.8
վրացիներ	32.6	44.2	-	20.0	31.5
այլ ազգեր	29.1	64.1	72.0	42.0	10.5

զախստան, Ուկրաինա, Բելոռուսիա, Մոլդաւիա, միջինասիական ու մերձբալթեան հանրապետութիւններ (4,5 մլն. մարդ), այն դէպքում, երբ Ադրբեջանում եւ Վրաստանում նրանց պոտենցիալ թիւը պակասել է 250 հազ., իսկ հայերինը՝ 400 հազ. մարդով: Այլ ազգերին դուրս մղելու եւ ասիմիլեացիայի ենթարկելու հետեւանքով Ադրբեջանում ադրբեջանցիների տեսակարար կշիռը հանրապետութեան ամբողջ բնակչութեան թւում 20 տարուայ ընթացքում բարձրացել է մօտ 11 տոկոսային կէտով (67,4-ից մինչեւ 78,2 %):

Չնայած նոյն ժամանակաընթացքում հարեւան հանրապետութիւններից Խորհրդային Հայաստան են արտագաղթել 400 հազ. հայեր, նրանց տեսակարար կշիռը հանրապետութեան բնակչութեան ամբողջ կազմում բարձրացել է ընդամէնը 1,6 տոկոսային կէտով (88-ից մինչեւ 89,6 %, 1926 թ.՝ 84,6 %): Յատկանշական է, որ անգամ Բաքուից ու Թբիլիսիից ռուսախօս հայերը սկսեցին տեղափոխուել Երեւան, դրանով իսկ հերքելով այն միակ անհեթեթ «տնտեսական հիմնաւորումը», որով Լեռնային Ղարաբաղը կամայականօրէն մտցուեց Ադրբեջանի կազմի մէջ:

Այս կապակցութեամբ արժէ յիշեցնել, թէ որքան անհեռատես էին որոշ յայտնի հայ բոլշեւիկներ, օրինակ, Ա. Ի. Միկոյեանը, որը 1919 թ. մայիսի 22-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմին եւ Վ. Ի. Լենինին յղած մի գրութիւնում նշում էր. «Դաշնակները՝ հայկական կառավարութեան գործակալները, ձգտում են հասնել Ղարաբաղի միացմանը Հայաստանին, բայց դա Ղարաբաղի բնակչութեան համար կը նշանակէր զրկել իրենց կեանքի աղբիւր Բաքուից եւ կապուել Երեւանի հետ, որի հետ երբեք կապուած չեն եղել...» (ՄԼԻ-ի ԿԿԱ, ֆ. 461, գործ 4542, թ. 6):

Նոյն Ա. Միկոյեանը խրուշչովեան շրջանում, լինելով Միութեան երկրորդ դէմքը, կարող էր բարձրացնել եւ դրականօրէն լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը, օգտուելով նոյն այն առիթից, որ Ն. Խրուշչովը հէնց այնպէս Ղրիմը «պարգեւեց» Ուկրաինային: Անգամ ստալինեան դաժան ռեժիմի օրօք Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Յարութիւնովը համարձակուեց դիմել Ի. Ստալինին, հիմնաւորելով ղարաբաղեան հարցի լուծման կարեւորութիւնը հայ ժողովրդի ճակատագրի համար:

Խորհրդային Միութիւնում առաջացել էր ազգամիջեան բախումներով յղի իրավիճակ: Սակայն 1977 թ. ընդունուած սահմանադրութիւնում պահպանուեցին 40 տարի առաջ ստալինեան սահմանադրութեան նոյն անհեթեթ ու բազմաստիճան ազգային կազմաւորումները, չնայած արուել էին շատ, այդ թւում նաեւ տողերիս հեղինակի հիմնաւորուած առաջարկութիւնները: Պատահական չէ, որ Խորհրդային Միութիւնը պայթեց հէնց ազգամիջեան բախումների պատճառով, առաջացնելով միանգամայն նոր միջազգային իրաւական յարաբերութիւններ:

ԱԼԼԻԿՅԵԼԻ ՔԱՐԻՆՏԱԿԸ

1992-Ի ՅՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ԵՍԻՄՈՐԴՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Աշոտ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Յունուարի 26-ին Քարինտակի հերոսամարտի 16-րդ տարեդարձն է: Յաճախ է գրուել այդ նշանաւոր իրադարձութեան մասին, սակայն համեմատաբար քիչ է յայտնի, թէ ինչպէս է գոյատեւել բնակավայրը մինչեւ այդ պահը: Քարինտակի առաջնորդ եւ հրամանատար, ԼՂՀ Ազգային խորհրդի պատգամաւոր Վաղարշակ Առուշանեանը յիշատակագրութիւն է թողել մեծահռչակ բնակավայրի գոյատեւման մասին, որի համառօտագրութիւնը ներկայացնում ենք ընթերցողներին:

Սոյնին նախորդող փաստաթուղթը Քարինտակի «Նիկոլ Դուման» ջոկատն ընդգրկող դաշնակցական՝ ՀԸԱԿ սկզբնական կազմակերպութեան ժողովների արձանագրութիւնից է: Դրանք ընդամէնը 9 հատ են, 10-րդը մնացել է կիսատ: Կարծում եմ, ընթերցողին կը հետաքրքրեն «Նիկոլ Դուման» ջոկատի առաջին ժողովների արձանագրութեան հատուածները:

Արձանագրութիւն թիւ 3

Որոշեցին.

1. Վարդանին նշանակել ՀԸԱԿ-ի գիւղի կազմակերպութեան նախագահ. 8 անդամների քուէարկութեամբ:
2. Պաշտպանութեան պետ նշանակել Ջիւանին եւ պետի տեղակալ՝ Սերոբին:
3. Կազմակերպութեան քաղղեկ նշանակել Կորիւնին:
4. Կազմակերպութեան գանձապահ նշանակել Կայծակին:

Նախագահ՝ Վարդան (ստորագր.)

Քարտուղար՝ Կայծակ

Թիւ 4 արձանագրութիւնից.

Ընկեր Ջիւանի խօսքից. ուժեղացնել պահակակէտերի հսկողութիւնը, գիւղի երիտասարդութեանը կազմակերպել եւ ընդգրկել ինքնապաշտպանութեան գործին, իւրաքանչիւրին իր ուժերի չափով:

Կարգը խախտողների նկատմամբ կիրառել միջոցներ, խմածներին թոյլ չտալ ներկայանալու պահակէտ:

Որոշեցին.

Յանձնարարել Ջիւանին ուշադրութեան կենտրոնում պահել գիւղի պաշտպանութեան վիճակը, կանխել անասնագողութեան դէպքերը:

Խստագոյն միջոցներ կիրառել ժամապահութիւնից խուսափողների նկատմամբ:

Նուիրեալ երիտասարդներին ներգրաւել սոյն աշխատանքի մէջ:

Կուսակցութեան անդամների փոխյարաբերութեան վիճակի մասին զեկուցում է Վարդանը, շեշտում կարգապահութեան դերը:

Կարծիք յայտնեցին Կորիւնը, Կայծակը, Սերոբը:

Թիւ 5 արձանագրութեան մէջ նշուած են կազմակերպութիւն ընդունուած նոր ընկերների անունները՝ Աղասի, Վազգէն, Սամսոն, Վահագն, Արտաւազդ:

Վեցերորդ ժողովին արդէն մասնակցում են 13 անդամներ, մէկը՝ յարգելի բացակայ:

Ջիւանի խօսքից պարզւում է, որ կան թերացող ընկերներ, նշուած է Կայծակի անունը, որը գլխաւորում է թիւ 2 պահակէտը (ֆերման): Նշուած է նաեւ թիւ 7 տեղամասը (կամուրջը):

Կայծակը նկատողութիւն է ստանում:

Թիւ 7 արձանագրութիւնից տեղեկանում ենք, որ չնայած նկատողութեանը՝ Կայծակը ծախողել է իր պարտականութիւնը, եւ ֆերմայից գողացել են 34 գլուխ անասուն: Այս ժողովը տեղի է ունեցել նոյեմբերի 9-ին (հաւանաբար 90 թուականի):

Վարդանը նշեց, որ նոյեմբերի 2-ի երեկոյեան ժամը 10-ից մինչեւ գիշերուայ 1-ը Շուշիի թուրք աւազակների կողմից գիւղը ենթարկուել է գնդակոծութեան, որի հետեւանքով վնասուել են շատ տների տանիքներ: Զոհեր չկան: Գնդակոծութիւնը շարունակուել է եւս 4 օր, տարբեր ժամերի:

8-րդ ժողովին Ջիւանը զեկուցում է. «Շուշիի կողմից կատարուող ամենօրեայ հրաձգութիւնները, յատկապէս գիշերային ժամերին, մեծ անհանգստութիւն են առաջացնում գիւղի բնակչութեան մէջ, առաւել եւս՝ փոքրերի մօտ: Շրջանի պարէտատունը ոչնչով չի խանգարում այդ գործին եւ հանդէս է գալիս դիտորդի դերում: Բնակչութեան շրջանում անհրաժեշտ է եռօրեայ բացատրական աշխատանք կատարել նրան պրովոկացիաներից զերծ պահելու համար: Արդիւնքի մասին զեկուցել առաջիկայ նիստում, որ պիտի ներկայացնի Սերոբը:

Թիւ 9 արձանագրութիւնը հաղորդում է Շուշիի շրջանում թուրքերի եւ զինուորականների կամայականութեան, ամենօրեայ յարձակումների, պրովոկացիաների մասին: Նշուած է ամենաթարմ փաստը՝ յունուարի 11-ի դէպքի մասին, երբ թուրք ՕՄՕՆ-ականները յարձակուել եւ սպանել են բերդաձորցի վարորդին եւ նրա ընկերոջը: Առաջարկում է գիւղից դուրս եկող ճանապարհը պահել հսկողութեան տակ:

Սերոբը տեղեկացնում է, որ բոլոր ընկերները բարեխղճօրէն կատարել են յանձնարարուած աշխատանքները, որի արդիւնքում գիւղի բնակչութիւնը առաւել լաւ է մասնակցում ինքնապաշտպանական աշխատանքներին:

Թիւ 10 արձանագրութիւնը մնացել է անաւարտ:

Քաղուածք Վաղարշակ Առուշանեանի յուշերից



Դէպքերն սկսուեցին այսպէս:

88-ի յունուարի 19-ին ինձ զանգեցին Շուշիից: Ոստիկանապետն էր: Նա դժգոհեց գիւղի որոշ երիտասարդներից, որոնք սպիտակ դրօշներ են ծածանել շրջանի տարբեր վայրերում:

Այդ օրից գիւղի բնակչութեան եւ շրջանի թուրք ղեկավարների միջեւ եղած հակասութիւնը բացայայտ բնոյթ կրեց: Առանձին անհատների նկատմամբ դատ չյարուցուեց, սակայն ոմանց առան տեսադաշտի տակ: Շրջանի հայ բնակչութեանն արգելուեց գնալ շրջկենտրոն:

1988-ի փետրուարի 18-ին սկսուեց ընդհանուր գործադուլ: Յաջորդ օրը շրջաններում, նաեւ Ստեփանակերտում, կայացան գործկոմի նստաշրջաններ:

Ի հակադրութիւն այդ ժողովների, որոնց նպատակն էր հրաւիրել Մարզային Խորհրդի համաժողով՝ Մարզը Հայաստանի հետ միաւորելու որոշում ընդունելու համար, փետրուարի 15-ին Շուշիում գումարուեց Շրջանի ակտիւի, այսինքն՝ ղեկավարների եւ աչքի ընկած մարդկանց համաժողովը, որի ընթացքում բազմաթիւ ծախու հայերի բերանով դատապարտուեց հայութեան՝ իր շահերի եւ ազատութեան համար սկսուած պայքարը: Առանձնապէս աչքի ընկաւ Մարզկոմի քարտուղար Կեւորկովը, որը հաւաստեց իր անսահման հաւատարմութիւնը ադրբեջանական ժողովրդին եւ Ադրբեջանին. «Ես իմ ամբողջ գործունէութիւնը, ամբողջ եռանդս մատաղ եմ տալիս Շուշիի թուրք բնակչութեանը եւ միշտ պատրաստ եմ պաշտպանել Շուշիի ադրբեջանցի բնակչութեանը»: Իսկ Կիրովի սովխոզի տնօրէն Գրիշա Սարգսեանը այսպէս արտայայտուեց. «*Ես զարմանում եմ Յանրապետութեան ղեկավարների անտարբերութեան վրայ, թէ ինչպէս են թոյլ տալիս Մարզի բնակչութեանը փակելու հիմնարկ-ձեռնարկութիւնները եւ ինչու մեր յարգելի Կեւորկովը այս երկու օրուայ մէջ չի բանտարկել բոլոր մեղաւորներին*»:

(Մարզի մէջ սկսւում են ծանր օրերը: Ստեղծւում է «Կռունկ» կազմակերպութիւնը, որի ղեկավար Արկադի Մանուչարովին բարձր գնահատական է տալիս յուշերի հեղինակը:)

Այժմ փետրուարի 20-ի նստաշրջանի եւ նրա հետ կապուած դէպքերի մասին:

Իմանալով առաջիկայ նստաշրջանի մասին, Ադրբեջանի կառավարութիւնը փակել էր Ստեփանակերտ մըտնող բոլոր ճանապարհները: Ամէն ոք, ով մտնում էր մարզային կենտրոն, ուժեղ հսկման էր ենթակայ: Յադրութի շրջանի ճանապարհը փակել էին Ֆիզուլիի ոստիկանութիւնը եւ կատաղած ամբոխը: Այդ շրջանի մարզային խորհրդի 17 դեպուտատները ոտքով են անցնում ամբողջ ճանապարհը մինչեւ Ստեփանակերտ: Նրանք գալիս են անտառների միջով: Քարինտակից 40 երիտասարդներ Աւանի կիրճի հետիոտնի ճանապարհով հասնում են Ստեփանակերտ: Չորով անցնելու ժամանակ Շուշիից քարեր են գլորում նրանց վրայ: Հրաշքով մնում են անվնաս: Մազէ կամրջի մօտի պահակազօրը նրանց ետ է տալիս, սակայն նրանք անցնում են անտառի շրջանցիկ ճանապարհով:

Հրապարակի վրայ ասեղ գցելու տեղ չկար: Չնայած ճանապարհների փակ լինելուն, մօտիկ բնակավայրերից Ստեփանակերտ էին հասել մօտ 60 հազար մարդ:

Նստաշրջանը սկսուեց 1988-ի փետրուարի 20-ին: Հարցը մէկն էր՝ Ղարաբաղը հանել Ադրբեջանի կազմից եւ միացնել Հայաստանին: Այդպէս էլ արւում է:

Օրեցօր իշխանութիւնների խստավարութիւնը փոխւում է դաժանութեան: Վիճակն առանձնապէս ծանրացաւ Արցախի ծայրամասային բնակիչների եւ Շուշիի շրջանի հայ բնակչութեան համար:

Անտանելի էր Բերդաձորի եւ Քարինտակի վիճակը: Ամենօրեայ հրաձգութիւնը բերդի գլխից եւ ժայռեր տրաքացնելը դարձան սովորական երեւոյթ: Յիշարժան է 1989-ի մայիսի 17-ը, երբ Շուշիի հայերը քերծի կաձանով իրենց մի կերպ գցեցին Քարինտակ: Նրանք վերեւում էին թողել իրենց ունեցուածքը:

Ես ծանր էի տանում այդ վիճակը, որովհետեւ մայրս պատմել էր 1920-ի մարտի 28-ի դէպքերի մասին, երբ Շուշիի ողջ մնացած բնակչութիւնը իրեն մի կերպ հասցրել է Քարինտակ: Այն ժամանակ քաղաքի 48.275 հայերից փրկուել են հազիւ 7000-ը: Մնացածը կոտորուել են նահանգապետ Սուլթանովի հրամանով: Փողոցներում արեան առուներ են գոյացել, քաղաքը թալանուել է մի ամբողջ շաբաթ:

Ես 8 տարուայ կոմունիստ էի: Զգացի այդ անդամատոմսի կեղծութիւնը եւ հրաժարուեցի այդ կուսակցութիւնից:

Շուշիից այս անգամ իջել էին 743 մարդ: 3 օր շարունակ թալանուել է հայ Շուշին: Շուշեցի հայերը գիւղում մնացին 17 օր:

Ամառը համեմատաբար հանգիստ անցաւ, բայց սեպտեմբերի 18-ին խժդժութիւնները վերսկսուեցին: Սեպտեմբերի 22-ին Շուշուայ վերջին հայերը լքեցին քաղաքը: Նոյն օրը յայտարարուեց պարէտային ժամ:

Վերջապէս համայն աշխարհի հայութիւնը ցնծաց, երբ 1989-ի դեկտեմբերի 20-ին Հայաստանի Գերագոյն խորհուրդը եւ Արցախի Ազգային խորհուրդը հպատեղ նստաշրջան գումարեցին եւ որոշում կայացուեց Արցախը Հայաստանի կազմի մէջ միաւորելու մասին: Բայց ինչ անես, որ նորից մնաց թղթի վրայ: (Յաջորդում են մի քանի անընթեռնելի տողեր:)

Եթէ հարիւր որոշում էլ լինի, արցախցիներս մեր հարցը պէտք է մե՛նք լուծենք: Թուրք հարեւաններն աւելի կատաղեցին Հայաստանի եւ Արցախի միացեալ որոշումից: Օր չէր լինում, որ սպանութիւն չլինի: Սակայն աւելի կատաղած էին ռուս զինուորականները:

1990-ի յունուարի 20-ին հաստատուեց Յատուկ կառավարման կոմիտէն: Մինչեւ յուլիսի 11-ը համեմատաբար հանգիստ էր: Այդ օրը ճանապարհները կրկին փակուեցին: Առաւել վատացաւ Շուշիի շրջանի հայ գիւղերի վիճակը: Մարզի կապը Բերդաձորի գիւղերի հետ լրիւ կտրուեց: Կարճ ժամանակում մենք ճանապարհ սարքեցինք եւ կապուեցինք Շօշ գիւղի հետ, որով եւ՝ Ստեփանակերտի:

1990-ի մարտի 22-ին երբ արթնացանք՝ գիւղը շրջապատուած էր ռուս զինուորներով: Ամէն ինչ տակնուվրայ արին, մի առանձին բան չգտան, սակայն դա չխանգարեց նրանց 3 հոգու բանտարկելու: Նրանք 80 օր տանջուեցին Ասկերանի Ուղղիչ տանը: Գիւղի պաշտպանութիւնն աւելի դժուարացաւ: Օղակն աւելի էր սեղմւում:

Ապրիլի 22-ին բանտից տղաներին բաց թողեցին եւ պատրաստւում էինք նշել այդ ուրախութիւնը, սակայն այն խաթարուեց: Ապրիլի 23-ին հաւաքական ուժերով կարտոֆիլ էինք հաւաքում Մուքելբեկ հողամասում: Մեր տղաները բոլոր պահակէտերի վրայ տեղեկացուած էին: Սակայն ժամը 12-ին լուրը հասաւ, որ Վահանը չկայ, գնացել է կարտոֆիլ հանելու եւ թուրքերը առեւանգել են: 15 րոպէ անց հասանք դէպքի վայր: Բոլոր ճանապարհները դէպի Զարիսլու փակեցինք, բայց ուշ էր արդէն: 7 հոգով հասանք Զարիսլուի մօտ: Հեծեալներն արդէն գիւղ էին մտել եւ կրակ բացեցին մեզ վրայ: Չկարողացանք ազատել Վահանին: Այդ դէպքի մասին գրում եմ 10 ամիս յետոյ, Աւետարանոցի էլեկտրաաղացում (91-ի փետրուար- Ա. Պ.): Այսօր տակաւին տեղեկութիւն չկայ Վահանից:

Սկսուեց է՛լ աւելի վատթարը՝ Պոլեանիչկոյի կառավարման խստակարգը: Այս ռուսախօս թուրքը աւելի վտանգաւոր է, քան մէկ այլ բարձրաստիճան թուրք: Նա Արցախին մեծ վնասներ պատճառեց:

Յուլիսի 11-ին ժամը 17-ին սկսուեց յարձակումը Քարինտակի վրայ: Այդ եղաւ այսպէս: Ամբողջ 7 օր գիշեր-ցերեկ վերեւի ժայռից մղանակիր մեքենաներով հսկայ քարեր էին գլորում եւ բեկորները զարնւում էին տներին: Անդադար հրակոծում էին եւ ահաբեկում երեխաներին: Որոշ գիւղացիների հետ հեռախօսով կապւում էին եւ ասում, որ թողնենք գիւղը, հեռանանք: Յորդորում էին

այդ ստորները գիւղից հեռացնել երեխաներին եւ կանանց: Սակայն մենք լաւ էինք հասկանում, թէ այդ խօսքերի տակ ինչ կայ: Գտնուեցին փոքրոգի մարդիկ, որոնք դուրս բերեցին երեխաներին՝ Ստեփանակերտ: Կարողացանք այդ սադրանքների առաջն առնել եւ համոզել, որ դրանք թուրքի կողմից նախապատրաստուած քայլեր են:

Յուլիսի 20-ից վիճակը մի քիչ մեղմացաւ: Այդ ծանր օրերին գիւղ եկան Ժաննա Գալստեանն ու Ռոլես Աղաջանեանը: Նրանց այցը շատ կարեւոր էր մեզ համար, յուսադրող: Խաղաղուելուց յետոյ շատ տեղերից եկան, շատ օգնեցին, սակայն ոչ մի բան չփոխուեց: Ես այդ օրերին հասկացայ, որ հազար գրութիւն մէկ փամփուշտ չարժէ: Ողորմի քո հոգուն, Խրիմեան Հայրիկ: Այնուհետեւ յարձակումներ էին գրեթէ ամէն օր լինում կա՛մ ադրբեջանցիների, կա՛մ ռուս-ադրբեջանցիների կողմից:

Յուլիսի 22-ին մեկնեցի Երեւան, իսկ Հենրի Ամիրջանեանը, որի գործունէութեան մասին վերջում պիտի առանձին էջեր գրեմ, մնաց գիւղում որպէս ներկայացուցիչ: Նրա եղբօր որդին՝ փոքրիկ Դաւիթը, երբ եկել էին իրեն տանելու քաղաք, հրաժարուեց. «Եթէ մեզ տանում են, մեր տունը թուրքերից ո՞վ պիտի պաշտպանի»:

Այսպիսով բոլորը մնում են գիւղում: Գիւղի պաշտպանութեան վիճակը ինչ-որ չափով բարելաւուեց: Երիտասարդութիւնը կանգնեց Ազգի սուրբ նպատակները իրագործելու: Գիւղում կան մարդիկ, ովքեր ուզում են իրենց անհատ շահերի համար մեզ խանգարած լինեն, բայց ես հաստատ գիտեմ, որ չեն կարող, որովհետեւ մենք կանգնած ենք ամուր հիմքերի վրայ եւ մեր տղաները պատրաստ են անգամ կեանքի գնով իրագործելու կուսակցութեան նպատակը: Կուսակցութեան պատասխանատու ընկերները եկան ստուգեցին մեր գործերը եւ միանգամայն գոհ մնացին մեր բռնած դիրքից եւ մեր կատարած աշխատանքներից:

Աշնան ամիսները Արցախի համար եղան արիւնոտ: 1990-ի սեպտեմբերից դեկտեմբեր Արցախը շատ կորուստներ ունեցաւ: Հոկտեմբերի 26-ից սկսուեցին Բերդաձորի դէպքերը: Հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 2-ը Շուշիի օմօնականները քաղաքի խուժանի հետ տասնեակ հազարաւոր փամփուշտներ դատարկեցին Քարինտակի վրայ: 21-ի գիշերը գիւղի վրայ յարձակուեցին երեք ճակատով: Դժուար էր մեզ համար, սակայն այդ կռուից էլ պատուով դուրս եկանք: Նոյեմբերի 9-ին զոհուեցին երկու հիանալի տղաներ, որոնք եկել էին Բերդաձորից. Վաղարշակը (Թալինի Աշնակ գիւղից) եւ Սամուէլը (ծննդով Բերդաձորից, Ստեփանակերտի բնակիչ): Իրենց հարազատ հողը պաշտպանող տղաները զոհ դարձան ռուսական զէնքին:

Յաւօք, չունենք Վաղարշակ Առուշանեանի յուշագրութեան ամբողջական բնագիրը: Վաղարշակից յետոյ Քարինտակի ինքնապաշտպանութեան հրամանատար Արթուր Առաքէլեանի հետ անտառում շատ որոնեցինք այդտեղ թաքցրած փաստաթղթերը, սակայն չգտանք: Յուսանք, որ այն մի օր կը գտնուի:

Ի յաւելումն գրուածի, ասենք, որ Քարինտակը միակ բնակավայրն էր, որի հետ Բերդաձորը կապ էր պահպանում: Այս իմաստով շատ կարեւոր էր Քարինտակ-Սղնախ-Շօշ ճանապարհը, որը կառուցւում է ցանկալի արագութեամբ, երբ Շուշին փակում է ճանապարհը դէպի Ստեփանակերտ:

Երկրորդ հանգամանքը դաշնակցական ուժեղ կազմակերպութիւնն էր 45-ամեայ Վաղարշակ Առուշանեանի գլխաւորութեամբ, որը կազմում էր ինքնապաշտպանութեան կորիզը: Մեր պատկերացմամբ ըստ արժանւոյն գնահատուած չէ այս մարդու անունը հայութեան մէջ, ով անկասկածելի նուիրեալ էր եւ մեծ հեղինակութիւն էր վայելում ամբողջ Արցախում:

Այդ ժամանակ գիւղը ունէր 700 շունչ եւ չնայած դիրքի աննպաստութեանը, ժողովրդի միաբան հոգեբանութեամբ շատ կարեւոր կէտ էր Արցախում հայ-ադրբեջանական պայքարի ռազմագօտում:

Մինչեւ 1992-ի յունուարի 26-ը բնակավայրը բախտորոշ պահեր էլի է ունեցել, իսկ այս բախումը ազդարարում է պատերազմի առաջին շրջանի մեր յաջողութիւնների սկիզբը: Քարինտակի յաղթանակը մեծ վստահութիւն ներշնչեց, որ մօտ ապագայում Շուշին մերն է լինելու: Քանզի Քարինտակը հսկայական մի ական էր Շուշիում հաստատուած ադրբեջանցիների համար: Քարինտակը Շուշի-Լաչին ճանապարհի հզօր խոչընդոտն էր, որ այդպէս էլ մնաց անշրջանցելի: Քարինտակցիները ոչ թէ խեղճութեամբ պարփակուել էին իրենց ցածրադիր բնակավայրում, այլ սպառնում էին Շուշիի ջրմուղին եւ էլեկտրաշտարակին: Իրօք յաջողւում է պայթեցնել թէ ջրմուղը եւ թէ Շուշին էլեկտրաէներգիայով սնուցող աշտարակը: Քարինտակը Շուշիի համար նաեւ անմիջական սպառնալիք էր: 1991-ի ապրիլի 23-ի գիշերը Վաղարշակի գլխաւորու-

թեամբ Արցախի ինքնապաշտպանութեան խորհրդի հրահանգով Կապին քերծի վրայ տեղադրուած «Ալազանով» 25-ից աւելի հրթիռ է արձակւում Շուշիի վրայ:

Յաջորդ առաջադրանքը լինում է Քարինտակից հիւսիս գտնուող Նաբիլար բնակավայրից թուրքերի վտարումը: Դա պիտի կատարուէր 48 ժամուայ ընթացքում: Թուրքերը սպանուածներ թողնելով՝ հեռանում են բնակավայրից: Հսկայական տարածքներ հրետակոծութեան տակ պահող Շուշին ինքն է ընկնում շրջապատման վտանգի տակ:

Ադրբեջանցիները այդ վիճակից դուրս գալու համար ձեռնարկում են Քարինտակը գրաւելու վճռական լայնածաւալ գործողութիւն յունուարի 26-ին: Քարինտակի պաշտպաններն ունէին 41 աւտոմատ եւ երկու գնդացիր, որ տեղադրւում են Առաջին (Խաչինսըռ—Կանաչ Սուրբ) եւ երկրորդ պահակէտերում: Առաջին պահակէտի գնդացրորդը եւ պատասխանատուն Ալեոշա Վարդանեանն էր (վիրաւորուել է պահակէտում եւ մահացել ճանապարհին): Այդտեղ էին նաեւ իր եղբայր Արտիշան, Գառնիկ Առստամեանը, Ալեքսանդր Վարդանեանը, Ալբերտ Աբալեանը (վիրաւորուել է եւ խփուել ճանապարհին), Արթուր Աբալեանը (զոհուել է Մարտակերտում), Արթուր Յարութիւնեանը, Գագիկ Սարգսեանը (Գիւմրիից):

Այս պահակէտի վրայ թուրքերի գրոհը սկսուել է ժամը 5.45-ին մինչեւ 11.30-ը: Այստեղ դաժան կռիւներ են եղել եւ պահակէտը տիրելու համար շատ թուրքեր են կոտորուել, սակայն 2-րդ պահակէտից ժամը 8-ին օգնութեան են հասել Արթուր Առաքէլեանը, Գարիկ Առաքէլեանը (զոհուած), Լեովա Առուստամեանը, Վագիֆ Պետրոսեանը, Ռոմիկ Մարգարեանը (երկուսն էլ զոհուել են Աղդամի շրջանում):

Երկրորդ պահակէտում են եղել նաեւ Կարո Առուշանեանը (Վաղարշակ Առուշանեանի եղբօր որդին, Երեւանից, զոհուել է նոյն օրը), Լեովա Առուշանեանը, Կարո Բաղիրեանը (զոհուել է Աղդամում), եղբայրներ Արմէն եւ Արթուր Առուշանեանները (Արթուրը զոհուել է հրադադարից յետոյ), Գարիկ Առաքէլեանը (վիրաւոր), Անդրանիկ Սարգսեանը, Ալեքսանդր Գասպարեանը, Լեոնեա Առաքէլեանը, Նորիկ Յարութիւնեանը (Երեւանից, զոհուել է նոյն օրը), Սահակ Յակոբեանը, Արծուիկ Սարգսեանը (Բժիշկ), Սամուէլ Յարութիւնեանը, Գառնիկ Աբալեանը, Սերգեյ Ամիրջանեանը:

Նշեալների մի մասը նշանակուած են եղել 4-րդ եւ 5-րդ պահակէտերում, սակայն այդ օրը ըստ անհրաժեշտութեան կռուել են 2-րդ պահակէտում: Ունեցել են մէկ գնդացիր, մէկ նռնականետ եւ աւտոմատներ: Այստեղ զոհուել են Կարո Առուշանեանը, Նորիկը, Միշա Յովսէփեանը: Այս տարածքում է զոհուել նաեւ Վաղարշակը: Երկրորդ պահակէտի պատասխանատուն Արթուր Առաքէլեանն էր, որը եղել է նաեւ պահակէտերի ընդհանուր պատասխանատուն, այսինքն՝ Վաղարշակի տեղակալը:

3-րդ պահակէտ. Հենրիկ Ամիրջանեան (պատասխանատու), Գարեգին Բաղդասարեան, Արշաւիր Մարգարեան, Ալեքսանդր Բաղդասարեան, Արամ Յարութիւնեան, Մարտին Ամիրջանեան, Վլադիկ Պետրոսեան, Վագիֆ Առըստամեան, Վոլոդեա Համբարձումեան (զոհուել է նոյն օրը), Մայիս Պետրոսեան: Ունեցել են ինքնաշէն ԱԳՍ, որը մի քանի զարկից յետոյ լռուել է: Ունեցել են նաեւ 5-6 աւտոմատ:

Թուրքերը մեծ քանակութեամբ ունեցել են այն բոլոր զէնքերից, որոնք անհրաժեշտ են ժամանակակից հետեւազօրին:

4-րդ եւ 5-րդ պահակէտերում կռուել են որսորդական հրացաններով: Ունեցել են մէկ-երկու աւտոմատ: Ամէն պահակէտում եղել են 10 մարտիկ՝ երկու հերթափոխով:

Այս պահակէտերի ուղղութեամբ թուրքերը վախեցել են ակտիւանալուց, քանզի բաց տարածք էր:

Գիւղի պաշտպանութեան մէջ մեծ ներդրում են ունեցել Հենրիխ Ալավերդեանը, Արթուր Առաքէլեանը եւ երեւանաբնակ Կարո Առուշանեանը, որը զէնք ձեռք բերելու եւ մատակարարելու համար մեծ ջանքեր է գործադրել: Վերոնշեալ քաջերից երեքը ընկան յունուարի 26-ի ճակատամարտում: Վաղարշակի զոհուելուց յետոյ հրամանատարութիւնը վստահեցին Արթուր Առաքէլեանին: Գիւղը պաշտպանող հիմնական ուժը եղել է տեղիս ջոկատը (75 մարտիկ): 25 հոգի է եղել Վաչոյի ջոկատը եւ 10 հոգի Սըզնեքի ջոկատը: Ճակատամարտի օրը ուշացած օգնութեան են հասել Ասկոլկա Աշոտն իր խմբով, Շօշի Ագոն եւ այլ ուժեր, երբ մարտի լարուածութիւնը թուլացած է եղել: Հիմնական ծանրութիւնն ընկել է տեղիս մարտիկների եւ ժողովրդի վրայ: Այդ ճակատամարտից յետոյ թուրքերը զգացին, որ այստեղ իրենց ոտքերի տակ ամուր յենարան չունեն:

Այդ օրը մէկ անգամ եւս հաստատուեց, որ ազատագրական պատերազմ մղող ժողովրդի համար կարեւորագոյն գործօնը ոչ թէ աշխարհագրական դիրքն է, մարդաքանակը, զինուածութեան աստիճանը, այլ պայքարելու ոգին, բնակավայրը ամէն կերպ պահելու վճռականութիւնը: Քարինտակը կարծես նախագուշակը լինէր Շուշիի յաղթանակի:

Վահագն ԴԱՎԹԵԱՆ

Անդրանիկ Յարութիւնեանի յիշատակին

Ոչ լեռան արծիւ ու ոչ դիւցազուն,
Ոչ կաղնեբազուկ, ոչ բոցամորուս,
Վտիտ ես, բարակ, որպէս լոյսի սիւն,
Եւ գունատ, որպէս տառապեալ Յիսուս:

Քո մկրտութեան սուրբ ծէսն են արել
Կապոյտ լեռները անառ Արցախի,
Քո կնքահայրը վրէժն է ահեղ,
Եւ քո մեռոնը՝ լեղին մեր ցաւի:

Քեզ շատ են փորձել արծիծ ու կրակ,
Բայց նահանջել են ոգուդ ցոլանքից,
Լոյսի սուրբ սիւնը որքան էլ բարակ,
Բայց զորաւոր է ական ու արկից:

Դու՝ նոր Անդրանիկ, նոր Աղբիւր Սերոբ,
Աչքերիդ խորքում շանթն է նոյն տենդի,
Դու՝ դեռ անանուն, դեռ անյայտ հերոս,
Բայց շուտով պիտի փոխուես լեգենդի...

Գունատ ես, որպէս տառապեալ Յիսուս,
Վտիտ ու բարակ, որպէս լոյսի սիւն,
Բայց դու՝ կորովի ու բոցամորուս,
Դու՝ լեռան արծիւ, դու՝ նոր դիւցազուն...

1993

Սիփան ՇԻՐԱԶ

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Ազատամարտիկ Արթուր Ղարիբեանի
(Տուդուլի) յիշատակին

Իմ հոգու համար ես ունեմ ժամհար,
Իմ կեանքի համար ես ունեմ ժամեր,
Դու հեռանում ես կեանքից հեռահար,
Դու – կեանքի նման – կրակ հագած սէր:

Կրակ հագած լոյս, սեւ հագած մի սէր,
Փառապանծ երկիր – անկտուր տանիք,
Ու յետոյ – կապոյտ նարնջի թեւեր –
Բանաստեղծութիւն, յետոյ Հայրենիք:

Մենք՝ հոգի հագած թափառականներ,
Մենք – տրտմութիւններ – լուսէ մահարշան.
Մենք – մահուան աչքում – մենք դառնում ենք սէր,
Իսկ մեր օրերը աղօտ յուշ դարշան,
Ու վերադարշան ժամերը նիհար,
Եւ Հայրենիքը դարշաւ տրտմութիւն:
Ես աղօթում եմ իմ հոգու համար,
Իսկ իմ կեանքը այս – նա դառնում է թոյն:

Եւ ես նայում եմ մահացող հեռուն.
Մենք մահանում ենք, յետոյ, դառնում սէր,
Մենք մահանում ենք,
Ուրուականներ ենք՝ հագած տրտմութիւն.
Մենք՝ ՀՈԳԻ ԱՌԱԾ ԹԱՓԱՌԱԿԱՆՆԵՐ:

1993

Հրաչեայ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՈԳԵԿՈՉՈՒՄ

Շահէն Մեղրեանի և միւսների յիշատակին

Կը մեղմանան ցաւերը, կը սպիանան վերքերը,
Կը կանաչեն կացնահար ծառերը մի օր,
Կը մոռացուեն որբութեան ու ողբութեան երգերը,
Կը ղօղանջեն վանքերի զանգերը բոլոր:

Կը շշնջան հովերը, ետ կը դառնան հաւքերը,
Ու կը խայտան ջրերը լանջերից դարչի,
Ամէն տեսակ մահերից վեր կը հառնեն կեանքերը,
Լոկ չեր կեանքը, մեր կեանքը կը մնայ անծին:

Դեղին փոշի կը թափուի երեկոյեան երկնքից,
Առաւօտեան կը լուայ անչրեւը քաւող,
Եւ մայրական արցունքը լիճ կը դառնայ մորմոքի,
Եւ հայրական հառաչքը կը դառնայ հողմ:

Կեանքում միայն կը յիշուի չեր ծննդեան լոյս օրը
Ու չեզ համար չի հնչի եւ ոչ մի մահերգ,
Կը ծերանան բոլորը, կը վերանան բոլորը,
Դուք աշխարհում կը մնաք յաւիտեան ջահել:

1993, Երեւան

ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Գրիգոր ՋԱՆԻԿԵԱՆ

* * *

Բօթը Արցախի Մարտունու շրջանի Մարզիլուի դիրքերից նոյն օրը Բէյրութ՝ հայկական Բուրջ Համուդ թաղամասի Ամանոս փողոցը հասաւ: Վատ լուրը շուտ է տեղ հասնում: Նախ հօրը դուրս կանչեցին, որքան հնարաւոր է մեղմ, երկչոտ մանրամասները տեղեկացրին:

- Ափսո՜ս,- թառանչեց սասունցի հայրը,- շատ շուտ էր...

Կարծում էին որդու ապրած քսանվեց տարիները, ուղիղ մէկ տարի առաջ ամուսնացած լինելը, աւարտած, բայց չպաշտպանած ատենախօսութիւնը նկատի ունի, մինչդեռ նա չոր աչքերով հեծեծաց, աւելացրեց.

- Միերս դեռ շատ անելիքներ ունէր իր ազգի, Հայրենիքի համար...

* * *

Դա ասում էր՝ «Այն ազգը, որ երազանքներ չունի, երազել չգիտի, մահուան է դատապարտուած»: Ու հաւատում էր, որ հէնց իրենց սերունդը պիտի իրականացնի համայն հայութեան երազանքները: Այդ հաւատը նրան հաղորդել էին մինչեւ մահ Սասուն վերադառնալուն սպասող պապը, Բէյրութի «Նաւասարդեան» պատանեկան, ապա եւ «Ռաֆֆի» երիտասարդական միութիւնները, վերջապէս Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որի եռագոյն դրօշի առջեւ նախքան «Դէպի Երկիր» կոչին անսալը ծնկաչոք երդուել ու մինչեւ նահատակուելը տուած երդմանը, ուխտին հաւատարիմ էր մնացել:

Միեր Ջուլիաճեանը հայրենասիրութեան, աւելի ճիշտ՝ հայրենանուիրումի մասին իր ուրոյն, կայուն պատկերացումներն ունէր, անգամ այն տարիներին, երբ գլխաւորում էր «Բաբկէն Սիւնի» պատանեկան միութիւնը, հռետորական քարոզչութիւնն ու յատկապէս աղմկարարութիւնն ատում էր:







Նրանք բոլորն էլ Երեւանի պետական համալսարանի սաներ էին: Անցեալ տարի բացուեցին Թաթուլ Կրպէեանի, Վարդան Բախշեանի, այս տարուայ սեպտեմբերին Պետրոս Ղեւոնդեանի Պետոյի, Վարդան Ստեփանեանի Դուշմանի, Սամուէլ Գեւորգեանի, Վարդան Յովհաննիսեանի, Տիգրան Սարգսեանի անուան լսարանները: Բոլորովին վերջերս երկրաբանական կրթաճիւղի հայցուոր Միեր Ջուլիաճեանինը: Ոգեկոչման արարողութեանը ելոյթներ ունեցան կրթութեան ու գիտութեան նախարար Լեւոն Մկրտչեանը, պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնեանը, երկրաբանական կրթաճիւղի դեկան Մարատ Գրիգորեանը, մարտական ընկերը Հարմիկ Յովսէփեանը: Բացման արարողութեանը մասնակցելու համար Բէյրութից ժամանած քոյրը փորձեց կարդալ նախօրօք պատրաստած ելոյթը, ձայնը դողդողաց: Դժուարութեամբ աւարտեց...

Նա ասում էր՝ «Եթէ ուզում ենք արժանապատիւ ազգ լինել, վերահաստատել մեր ոտնահարուած իրաւունքները, մեզ հասանելիք արդարացի տեղը գրաւել աշխարհի քարտէզի վրայ, պիտի հաւատարիմ մնանք «Յարատեւ կռուի» սուրբ պատուիրանին»: Ինքը՝ ամաչկոտ թուալու չափ լռասէր ու խոնարհաբարոյ Միերը, կռւում էր դեռեւս Բէյրութի «Սուրէն Խանամիրեան» ազգային վարժարանում սովորած տարիներին. աշակերտական պայուսակով դպրոցից տուն վերադառնալիս իրենց Ամանոս փողոցի որեւէ հայի տնից հէնց թուրքական երաժշտութիւն էր լսում, առանց դուռը թակելու խուժում էր ներս, անջատում նուագարկիչը, սեղանին ազգային-ազատագրական, ժողովրդական երգերի ձայներիզ էր դնում, հեռանում: Իսկ երբ սկսուեց Լիբանանի քաղաքացիական պատերազմը՝ քրիստոնեայ ու իսլամ արաբների միջեւ, նա տասներկու տարեկան էր. «Կալաշնիկովով» կրակել սովորեց, համազարկային համակարգերից, հրանօթներից, տարբեր տրամաչափի հրետանային զէնքերից տեղացող 4-5 հազար արկերի տարափի ներքոյ վիրաւորներ հիւանդանոց տեղափոխել, հրդեհներ հանգցնել, նկուղներում ապաստանած հայրենակիցներին հաց ու ջուր հասցնել սովորեց: Գիշերներն էլ զէնքը վերցնում, ինքնապաշտպանական ջոկատի կազմում հայկական թաղերի անվտանգութիւնն էր ապահովում:

Հէնց պատերազմի թոհուբոհում էլ նրանք հանդիպեցին իրար: Դժուար է ասել, թէ առաջինն ո՞վ ում նկատեց: Այժմ, այդքան տարի անց, Կարինը խոստովանում է. «Արեւելեան Բէյրութից հայկական պարախումբ էր ելոյթի եկել մեր՝ արեւմտեան մասը: Մի մօրուքաւոր, հրայրքոտ երիտասարդ անմիջապէս գրաւեց ուշադրութիւնս, բայց, հասկանալի է, որեւէ կերպ չզգացրի: Դրա համար էլ շատ զարմացայ, երբ յաջորդ օրը ռմբակոծութիւնն ու հրետակոծութիւնն արհամարհելով, կեանքը վտանգելով, ինձ տեսութեան եկաւ: Աւելի ուշ, կարծում եմ՝ ինձ յաճախ հանդիպելու համար, Ամերիկեան համալսարան ընդունուեց, որը մեր՝ արեւմտեան մասում էր գտնւում: Պարապմունքները երբեմն շատ ուշ էին աւարտւում, զինուորական պարեկները երկուստեք արգելափակում էին անցակէտերը, ու Միերն ստիպուած հանրակացարանում էր գիշերում: Ես, մենակ չթողնելու համար, այցելում էի նրան, մենք երկար զրուցում էինք: Յաճախ՝ մինչեւ լոյսը բացուելը...»:

Բնագիտութեան կրթաճիւղի 20-ամեայ ուսանողը Կարինի հետ, որքան էլ արտասովոր, նոյնիսկ արտառոց թուայ, ոչ թէ սիրոյ, իր երազած Հայաստանի մասին էր խօսում, պատմում, որը պապերի Սասունից սկսւում, Արցախով ընդհուպ Զաւախք ու Նախիջեւան էր հասնում: Ամօթխած բէյրութցի պատանին դառնում էր սասունցի ֆիդայի՝ յամառ, վճռական, ըմբոստ, ասես իրեն առարկում էին, ժամերով վիճաբանում էր ազգային գաղափարաբանութեան, ռազմավարութեան հիմնահարցերի շուրջ:

Նա ասում էր՝ «Պատերազմում յաղթում է նա, ով արդարութեան համար է կռւում, արդարութեանը հաւատացող, արդարութեան ձգտող ոգին ամրապնդւում, անկոտրում է դառնում»:

Յետոյ վրայ հասաւ Սպիտակի արհաւիրքը, ու Միերը Հայաստանի մասին խօսելով չբաւականացաւ, հոգով, սրտով, էութեամբ տեղափոխուեց Հայաստան: Արդէն աւարտել էր Բէյրութի Ամերիկեան համալսարանը, բնական գիտութիւնների պսակաւորի վկայական ստացել, բայց անսպասելի որոշեց ուսումնառութիւնը շարունակել երկրաբանական բաժանմունքում ու հէնց երկրաբնագիտութեան ճիւղն ընտրեց, որն ստորերկրեայ ցնցումների, երկրաշարժերի հետ անմիջական առնչութիւն ուներ: Սիրած աղջկան նստեցնում էր համալսարանական փորձասենեակում, պատմում Հայաստանի սողանքները կանխելու, ընդերքի տատանումները կանխազգալու ու կանխարգելակելու իր ծրագրերը:

«Ես նրա ասածներից շատ բան չէի հասկանում, բայց չէի էլ ձանձրանում: Նրա ոգեւորութիւնն ինձ էլ էր համակում: Բայց, դրանից գրեթէ անմիջապէս յետոյ, սկսուեց արցախեան գոյապայքարն ու ինձ թուաց, թէ հիմա էլ թնդանօթների համակարգչային կառավարման մասնագէտ եմ դառնալու»:

Միերն իր երկրաբնագիտական ուսումնասիրութիւնները չէր դադարեցրել, բայց, միաժամանակ, սկսել էր լրջօրէն մտորել նուազագոյն մարտական հրետանիով առաւելագոյն արդիւնքի հասնելու հնարաւորութիւնների մասին: Նրա վերջնական նպատակը տարբեր դիրքերում գտնուող թնդանօթների հարուածները համակարգչով համադրելն էր, նոյն թիրախին ուղղելը: Այլ կերպ ասած՝ ամենայն լրջութեամբ արցախեան պատերազմում թնդանօթային կառավարման ծրագիր էր մշակում:

Կարինը որտեղի՞ց իմանար, թէ ինչ է մտորում, որոշում պաշտած տղան: Նա, նոյնիսկ, իրենից գաղտնիքներ ունէր, նոյնիսկ իրեն չասաց, որ նախնական հաշուարկումները,

նախագծումներն աւարտել է: Մի ուշ երեկոյեան, երբ տուն էր ուղեկցում, փլատակուած Բէյրութի խաւարամութ խաչմերուկում կանգնեցրեց, ասաց.

-Կարին, պատրաստուիր, պիտի պսակադրուենք, ամուսնական ճանապարհորդութեան մեկնենք: Որքան շուտ, այնքան լաւ:

Աղջիկը նախ լսածին չհաւատաց, յետոյ ենթադրեց, որ, անսպասելի, արտասահմանեան շրջագայութեան էժանագին ուղետոմսեր է ձեռք բերել: Կարինը երազել սիրում էր, անակնկալների հաւատում էր: Նրա հայեացքի առջեւ ուրուագծուեցին ամերիկեան Մայամիի, ֆրանսիական Մոնակոյի, Ֆիջի կղզու արեւոտ լողափերը: Բռնեց տղայի ձեռքը.

-Հոգուս հետ մի խաղայ, Միեր, ասա՛, թէ որտե՞ղ ենք անցկացնելու մեր մեղրամիսը:

-Հայաստանում:

Հայաստանո՞ւմ, որտեղից ամէն օր արտագաղթողներ էին հասնում ու ահաւոր մանրամասներ պատմում սովի, սառնամանիքի, Արցախի զոհերի մասին: Ճամփաբաժանում Կարինը որոնեց ու չգտաւ սիրած տղայի աչքերը: Չնայած հասկացաւ, որ չի կատակում: Խոր հոգոց հանեց.

- Որտեղ դու, այնտեղ էլ ես:

* * *

Դրանից ճիշտ մէկ տարի անց, նոյն օրը, նոյն ժամին Միերը Մարզիլուի դիրքերից մարտական ընկերների, մոտոհրաձգային գումարտակի հրամանատար Մերուժան Մոսիեանի հետ նրանց տունը մտաւ: Նա քսան օր արդէն այդ հարկի տակ էր ապրում, բայց օգոստոսի 22-ի գիշերը հրամանատարի կնոջը՝ տիկին Գենեային տարօրինակ թուաց: Բոլորի նման յոգնած, քաղցած էր, բայց լուացուելուց յետոյ սեղանին չմօտեցաւ, հեռախօսով այնքան համարներ հաւաքեց, մինչեւ կապուեց Երեւան, ընկերներին խնդրեց յաջորդ օրը, իրենց ամուսնութեան առաջին տարեդարձի կապակցութեամբ, ծաղիկներ մատուցել Կարինին:

Յաջորդ օրը ընկերները կատարեցին Միերի խնդրանքը: Բայց նա արդէն ողջ չէր:

* * *

Դա ասում էր՝ «Յանուն Հայրենիքի նահատակութիւնը գերագոյն այն զոհողութիւնն է, առանց որի ազգը չի կարող գոյատեւել, առաւել եւս՝ յարատեւել»:

* * *

Հայաստանում Միերը իր նման շատ Միերների հանդիպեց: Նրանք տարբեր տեղերից էին եկել, տարբեր անուններ էին կրում, բայց դա ոչ մի նշանակութիւն չունէր: Չունեցաւ: Առաջին Միերը Երեւանի պետական համալսարանի երկրաբանական կրթաճիւղի դեկան Մարատ Գրիգորեանն էր: Նրա հայրը ծնուել էր Վանի Գործութ գիւղում, գաղթի ժամանակ բոլոր հարազատներին կորցրել, Գիւմրիի ամերիկեան որբանոցում էր մեծացել: Բայց այնքան ուշիմ էր եղել, որ մանկավարժական բարձրագոյն կրթութիւն էր ստացել, Արտաշատի շրջանի Այգեշատ գիւղի դպրոցի տնօրէն նշանակուել: Նման մանկութիւն ունեցող մանկավարժը կարո՞ղ էր սաներին չպատմել Վանի ինքնապաշտպանութեան, կամաւորականների յաղթանակների, ռուսական բանակի անսպասելի նահանջի, կոտորածի, նախճիրների, բռնագաղթի արհաւիրքների մասին: Բայց այդքանը բաւական էր եղել, որ նրան «ժողովրդի թշնամի» համարեն՝ 17 տարով Ուզբեկստանի, Կարագանդայի, Կրասնոյարսկի ճամբարներն աքսորեն: Ինքը՝ Մարատը 1965 թուականին մասնակցել էր պետական համալսարանի ուսանողների ապրիլքսանչորսեան անդրանիկ քայլերթին, Մոսկուայում, ասպիրանտական տարիներին, դարձեալ Ապրիլի 24-ի կապակցութեամբ, հրապարակային ոգեշունչ ելոյթներ էր ունեցել, Վազգէն Մանուկեանի, Ալեքսանդր Թամանեանի, Նիկոլայ Ենիկոլոպեանի, Լեւոն Դատիվանեանի, Տաւրոս Դաշտենցի, Արսէն Խաչոյանի, Արամ Մատնիշեանի, Ալբերտ Յովհաննիսեանի, Արամ Շահինեանի, Ալբերտ Յարութիւնեանի, միւս հայ ուսանողների հետ թուրքական դեսպանութեան առաջ ցոյց, հայկական գերեզմանոցում՝ հանրահաւաք էր կազմակերպել:

Մարատ Գրիգորեանը ծանօթացաւ Միերի անձնական գործերին, հետը զրուցեց, գիտելիքներով հիացաւ: Ու առաջին իսկ գիտական արշաւախմբով Գառնի՝ Ողջաբերդ տարաւ, որտեղ Միերը մասնակցեց դաշտային հետազօտութիւններին, սողանքներն ուսումնասիրեց, նկարահանումներ կատարեց: Գիտական ղեկավարը գոհ էր, հայցուորը կատարում էր իր յանձնարարութիւնները, սակայն մերթ ընդ մերթ, ընդ որում երկար ժամանակով, անհետանում էր ու յայտնւում կոշտացած մատներով, սպիներով, անգամ վէրքերով: Բայց քանի որ չէր ասում, թէ որտեղ է լինում, ինքն իրեն թոյլ չէր տալիս հարցնել:

Վերջին անգամ Միերը դեկանի առանձնասենեակը մտաւ

ու սպասեց, որ միւս այցելուները դուրս գան, երկուսով մնան: Երեխայի նման աղերսում էր.

-Պարոն Գրիգորեան, եկել եմ խնդրելու, որ ինձ տարկէտում տաք:

-Ինչո՞ւ:

-Ատենախօսութիւնս երբ էլ լինի՝ կպաշտպանեմ: Հիմա աւելի կարեւոր գործեր ունեմ:

Դեկանը հասկացաւ նրան, ոտքի ելաւ, ձեռքը ուսին դրեց.

-Գնա՛, Միեր, բայց զգոյշ եղիր, դու գիտութեանն էլ ես պէտք: Շատ ես պէտք:

Երկրորդ Միերը՝ Հարմիկ Յովսէփեանը Պարսկաստանից էր: Կարճ ժամանակով Հայաստան էր եկել, որ ոսկերչութեամբ զբաղուի, գործիքներն աշխատասեղանին թողել, Գիւլիստանի անտառներում կամաւորական խմբեր էր մարզում: Յետոյ զգաց, որ պատերազմը երկարելու է, հեռագրեց, ընտանիքն էլ բերեց: Վերջնական: Նա հիացմունք յարուցելու չափ տիրապետում էր տարբեր զէնքերին, բայց այն բոլոր ջոկատներին, որոնց հետ մարտական պարապմունքներ էր անցկացնում, նախ եւ առաջ լաւատեսութեամբ էր առինքնում:

- Տղերք,- ասում էր,- մենք անպայման յաղթելու ենք, ով կասկածում կամ չի հաւատում, թող վաղուանից զինավարժութեան չգայ:

Հարմիկն ու Միերը ծանօթացան Բիւրականի զօրավարժարանում, որտեղ համալրում էին պատրաստում Շուշիի առանձնակի գումարտակի համար: Միերը թէ՛ նորակոչիկներին մարզում եւ թէ՛, քանի որ Արցախում կարիք էր զգացւում, հմտանում էր թնդանօթային հաշուարկի ասպարէզում: Երբ լիովին տիրապետեց, Հարմիկի հետ Շուշի՝ գումարտակի ռազմակայեան գնացին: Ըստ նախնական պայմանաւորուածութեան նա պիտի մնար ռազմակայեանում, արցախցի զինուորներին սովորեցնէր թնդանօթային հաշուարկի նրբութիւնները, բայց մի գիշեր հազիւ դիմացաւ: Յաջորդ օրը գնաց Մարտունի, որտեղ դիրքային կարեւորագոյն մարտեր էին մղւում: Գնաց ու ետ չեկաւ...

* * *



Այժմ Միեր Զուլիաճեանի անունով են կոչւում Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան, Արցախի պետական համալսարանի, Շուշիի «Արամ Մանուկեան» վարժարանի համակարգչային կենտրոնները, Երեւանի կայազօրի զինուորական հիւանդանոցի, Լիբանանի «Զաւարեան» ուսանողական միութեան գրադարանները, «Ռաֆֆի» երիտասարդական միութեան սրահը, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կանադայի պատանեական միութիւնը:

Հայաստանում, Արցախում, աշխարհի բոլոր այն երկրներում, որտեղ հայկական համայնքներ կան, Միերներ են ծնւում:

Նա ասում էր՝ «Հայրենիքի ազատութեան համար նահատակուելը իւրաքանչիւր անհատի գոյութեան բնականոն շարունակութիւնն է, բայց ոչ երբեք աւարտը»:

Շքեղ ծաղկեփունջը, որ ամուսնութեան առաջին տարեդարձի կապակցութեամբ ստացել էր Կարինը, թօշնել էր: Երբ Միերի ծնողներին ու հարազատներին համոզեց եւ ամուսնու մարմինը արարատահայեաց Եռաբլուրում հողին յանձնեցին, թառամած ծաղիկները չորացրեց, շարեց իր ու Միերի ամենասիրած բանաստեղծի միհատորեակի էջերում, Արցախ գնաց: Նա մասնագիտութեամբ հոգեբան էր, ամոքում էր պատերազմական սերնդի արցախցի մանուկների սարսափների հետեւանքները, տարբեր հոգեցնցումները:

ՀԱՅ-ՀՈՌՄԷԱԿԱՆ

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ



ԸՍՏ ԽՈՐԵՆԱՑՈՒ

Արտեմ ՍԱՐԳՍԵԱՆ

(Վարկած)

Այսօրուայ գլոբալացման գործընթացն արդիական է դարձնում քաղաքակրթութիւնների միջեւ առնչութիւնների, նրանց ինքնութեան, տարբեր մշակոյթների առաջ ծառացող քաղաքակրթական կողմնորոշման հարցերի լուսաբանումը, ինչպէս նաեւ անցեալում նոյնատիպ երեւոյթների հետ զուգահեռների անցկացումը: Հնուց ի վեր քաղաքակրթութիւնների խաչման գօտում գտնուող Հայաստանի պատմութիւնն այս առումով կարող է մեծ հետաքրքրութիւն ներկայացնել:

Հայոց միջնադարեան պատմագրութեան մէջ բացառիկ տեղ է զբաղեցնում Մովսէս Խորենացին, որի «Հայոց պատմութիւնը», ի թիւս այլ արժանիքների, ունի քաղաքագիտական մեծ արժէք: Նրանում սերտօրէն միակցուած են երկու ռազմավարական խնդիր՝ հայոց պատմական անցեալի ամբողջացումը եւ ժամանակակից (Ե դար) պահանջներին համապատասխան քաղաքական ծրագրերի առաջ քաշումը: Հայոց թագաւորութեան անկումը, հասարակական-քաղաքական ճգնաժամը եւ պարսկական տիրապետութեան հաստատումը նոր մարտահրաւէրներ նետեցին Հայաստանի ինքնութեանը: Վարդանանց կրօնական պատերազմը (450-451 թթ.), չնայած նրա բարոյական մեծ նշանակութեանը, ցոյց տուեց, որ ուժացման վերահաս վտանգի դէմ պայքարի միայն քաղաքական միջոցները չէին կարող ունենալ մեծ հեռանկար: Աւելի արդիւնաւէտ կարող էր լինել հայոց քաղաքակրթական ռեսուրսների մոբիլիզացիան եւ մտաւոր անդուլ աշխատանքը, որի նպատակը հայ համակեցական տեսակի նորովի վերահաստատումն էր: Այդ ուղղութեամբ կատարուելիք գործնական քայլերն առաջին հերթին պահանջում էին տեսական հիմնաւորում, նոր արժեհամակարգ, նոր կողմնորո- շիչներ: Համակեցական կեանքի կարգաբերումն անհրաժեշտաբար ենթադրում էր ազգային անցեալի ամբողջական պատկերի ստեղծում, որը պէտք է լինէր ստոյգ, պատճառաբանուած ու արժեւորուած: Ընդսմին, պատմական այդ կառոյցում ինչպէս ներքին յարաբերութիւնները պէտք է դիտարկուէին օրգանական ամբողջութեան մէջ, այնպէս էլ այդ ամբողջութիւնը պէտք է ներկայացուէր միջազգային յարաբերութիւնների համակարգում: Միայն այս պարագաներում պատմութիւնը կարող էր ունենալ իրական արժէք: Դեռ դասական Յունաստանի (Ք. ա. Ե դար) քաղաքացիական համայնքներում պատմա-փիլիսոփայական միտքն ի յայտ էր եկել որպէս համակեցական կեանքի կարեւոր բաղադրատարր, որի պրիզմայով հասարակական կեանքի իրողութիւնները վերլուծում ու գնահատում էին: Ուստի (տեսականօրէն) կազ-

Վանի թագաւորների մարտակառքի բարձրաքանդակային պատկերը բազալտէ սալիկի վրայ:
VIII -VII դ. դ. մ. թ.ա.
Վան, Հնագիտական թանգարան

մակերպւում էին եւ ուղղորդում: Հայաստանում քրիստոնէութեան ընդունումից եւ մանաւանդ հայոց գրերի գիւտից յետոյ, մի խումբ գործիչների (եւ ամենից շատ Խորենացու) մտաւոր ճիգերով անտիկ աշխարհի այս հոգեւոր գանձը դարձաւ նաեւ հայութեան սեփականութիւնը:

Ասուածի տրամաբանութեամբ՝ յօդուածում անդրադարձել ենք Մովսէս Խորենացու մօտ Հայաստանի արտաքին քաղաքական եւ քաղաքակրթական կողմնորոշման խնդրի արտացոլմանը, որը սերտօրէն կապուած էր իր ժամանակի վերոյիշեալ ներքաղաքական խնդիրների հետ: Մենք հնարաւորինս ձեռնպահ ենք մնացել Խորենացու ներկայացրած դէպքերի եւ պատմական իրականութեանը դրանց համապատասխանութեան հարցը շօշափելուց: Մեր հետաքրքրութեան շրջանակում կարեւորը պատմահօր վերաբերմունքն է իր նկարագրած իրադարձութիւնների նկատմամբ, այն խորհուրդը, որ պատմիչը, մեր ենթադրութեամբ, տեսնում էր դրանց մէջ:

* * *

Թէեւ Խորենացու «Պատմութեան» նիւթը հայոց պատմական անցեալն է, կարելի է պարզորոշ նկատել, որ պատմահօր համար անցեալը համաշխարհային իրադարձութիւններից կտրուած եղելութիւն չէ: Խորենացին ոչ միայն մեծ ուշադրութիւն է դարձնում Հայաստանի արտաքին ակտիւ յարաբերութիւններին, առանց որոնց անհնար է հասկանալ երկրի ներքին կեանքի բազմաթիւ իրողութիւններ: Աւելին, Խորենացիական հայոց պատմութիւնը պատկերուած է համաշխարհային պատմական կառոյցի համատեքստում: Այդ կառոյցն ունի իր ընդհանուր տարածա-ժամանակային չափումները, որոնցում կենտրոնական տեղը յատկացուած է ամենեւին ոչ Հայաստանին: Խորենացիական «տիեզերքի» աշխարհագրական կենտրոնը (Ա եւ Բ գրքերում) Միջագետքն է, իսկ նրա բնիկ տիրակալների եւ նրան տիրացած օտար թագաւորների ժամանակագրութիւնն ընկած է հայոց նահապետների ու թագաւորների թուագրման հիմքում: Միջագետքի՝ որպէս Արեւելքում քաղաքակրթութեան առաջին օջախի ու կենտրոնի գաղափարը Խորենացուն աւանդուած էր, ակնյայտօրէն, Աստուածաշնչից, հելլէնիստական ու վաղքրիստոնէական պատմիչներից (Դիոդորոս Սիկիլիացի, Յովսէփոս Փլաւիոս, Մար Աբաս Կատինա, Եւսեբիոս Կեսարացի): Այդ գաղափարին համապատասխան՝ հայոց պատմութիւնը սկսւում է Միջագետքից (Բաբելոն) ու Բելի ժամանակներից, իսկ բուն հայկական հողի վրայ՝ Միջագետքին անմիջապէս յարող Կադմեան տնից: Միջագետքը նաեւ առաջին աշխարհակալութիւնների (Բաբելոն, Ասորեստան) հայրենիքն է: Յետագայում էլ բաբելացիներին ու ասորեստանցիներին փոխարինելու են գալիս այն աշխարհակալ ժողովուրդները, որոնք տիրանում են Միջագետքին՝ որպէս կանոն այն դարձնելով իրենց տերու-

թիւնների կենտրոնը. մարեր, մակեդոնացիներ, պարթեւներ, պարսիկներ:

Միջագետքը եւ յանձին նրա՝ Արեւելքը «Պատմութեան» մէջ ընդհանուր առմամբ մարմնաւորում են ոչ միայն հզորութիւնը, այլեւ բռնապետութիւնը՝ իր բոլոր անարդարութիւններով հանդերձ: Բռնի ուժն Արեւելքին սկզբունքօրէն ներհատուկ իրողութիւն է. դրա վրայ է յենւում կայսրութիւնների ստեղծումը՝ Բելի տէրութիւնից սկսած: Մովսէսի երկում վերջինս բացում է պատմական հերոսների մի ամբողջ շարք, որոնք բռնութեամբ են տիրանում իշխանութեան սեփական ու հարեւան ժողովուրդների վրայ, կամ առնուազն այդպիսի փորձ են կատարում. Նինոս, Ծամիրամ, Զրադաշտ, Նիւքար Մադես, Բարշամ, Պայապիս Քաղեայ, Աժդահակ: Ընդսմին, նրանց անուններին պատմահայրը կցում է բացասական մակդիրներ՝ շեշտելով նրանց բարոյական թերութիւնները: Իսկ Արեւելքում կայսրութեան գոյութեան այլընտրանք ներկայացուած է նոյն ինքն բռնութեան վրայ յենուող քաոսը: Երկու իրավիճակների (արեւելեան իշխանութիւն եւ քաոս) գլխաւոր տարբերութիւնն այն է, որ առաջինը ենթադրում է մէկի բռնութիւն բոլորի նկատմամբ, իսկ երկրորդը՝ բոլորի բռնութիւն բոլորի նկատմամբ:

Բռնութիւնը եւ աշխարհակալ իշխանութեան ամփոփումը մէկի (բռնակալի) ձեռքում շարունակ յղի է անկայունութեամբ. դաւադրութիւններ ու խռովութիւններ, մի կայսրութեան փոխարինում միւսով, վերջապէս՝ կարգի եւ համընդհանուր անկարգութեան մշտական հերթագայում: Արեւելեան բռնապետութիւններն ու արեւելեան քաոսը որպէս վնասաբար դիպուածներ շարունակ ներխուժում են նաեւ Արեւելքի «ընտանիքի» մասը կազմող հայութեան կեանքի մէջ, խաթարելով նրա բնականոն զարգացումը:

Հայոց պատմութեան հենց սկզբից այդ դիպուածների չեզոքացումը մնում էր Հայկեանների առջեւ ծառացող կարեւոր խնդիրներից մէկը: Հարեւան բռնակալների դէմ նրանց պայքարին Խորենացին տալիս է ընդգծուած բարոյական երանգ: Հայկեանները հակադրուած են ոչ միայն արեւելեան տիրակալներին, այլեւ վերջիններիս դէմ ըմբոստացող այլ ուժերին: Ի տարբերութիւն սրանց, Հայկեաններին պայքարն ուղղուած է ընդդէմ բռնութեան ընդհանրապէս, եւ ոչ թէ մի բռնութիւնը միւսով փոխարինելուն: Սակայն, ըստ Մովսէսի հայեցակարգի, Հայաստանն ընդհանուր առմամբ այնքան հզօր չէր, որքան իր հարեւանները: Առաւել եւս չունէր դարաւոր աշխարհակալական աւանդոյթներ (այս առումով Արամի ու Տիգրանի նուաճումները եզակի բացառութիւններ են, որոնք առաջ են բերում պատմահօր հիացմունքը): Չնայած ժամանակ առ ժամանակ ձեռք բերուող յաղթանակներին, Հայաստանի համար աւելի սովորական էր այս կամ այն աշխարհակալութեան մաս կազմելն իբրեւ երկրորդական գահի երկիր: Ինչպէս Մովսէսն է խոստովանում. «մեր նախնիները [քաղդէացիների, ասորեստանցիների եւ պարսիկների] գործակալներն են եղել՝ նրանց կողմից նշանակուելով մեր երկրի վերակացուներ ու կուսակալներ»: Պատմութեան կերտման ու պատմագրութեան միջեւ նրբին կապը գիտակցող պատմահօր համար, թերեւս, նոյնքան կարեւոր է նշել, որ հայոց պատմական անցքերը հենց հարեւան աշխարհակալների դիւաններում են արձանագրուել, ինչը նոյնպէս Խորենացու աչքում մեր նախնիների համեմատաբար համեստ պատմական դերի վկայութիւն է: Այստեղ էլ հենց բացայայտւում է անցեալում նրանց ցուցաբերած գլխաւոր թուլութիւնը. գիտութեան ու իմաստնութեան հանդէպ սիրոյ բացակայութիւնը, անմտութիւնը: Դրա հետեւանքը հին Հայաստանում համակեցական կարգուկանոնի (բառիս ամենալայն իմաստով) բացակայութիւնն էր, ինչը նուազագոյնի էր հասցնում վնասարար դիպուածի դէմ պայքարելու հնարաւորութիւնները: Այս իրողութեան գիտակցմամբ է Խորենացին ամփոփում «Պատմութեան» առաջին գիրքը. «...որովհետեւ խառնակութիւններ եւ շփոթութիւններ լինելով՝ մէկը միւսից առաջ էր վազում մեր երկրին տիրելու»:

Հայաստանի աշխարհաքաղաքական իրադրութիւնը փոխւում է, երբ պատմութեան ասպարէզ են իջնում Արշակունիները: Յունամակեդոնական նուաճողների դէմ յաղթական պատերազմների արդիւնքում նրանց մի ճիւղը հաստատւում է Իրան-Միջագետքում, միւսը (կրտսերը)՝ Հայաստանում: Մովսէսը յարում է աստուածաշնչեան բարեպաշտ

Աստվածուհու քանդակ: Վանի թագաւորութիւն, VIII դ.մ.թ.ա. Լոնդոն, Բրիտանական թանգարան



նահապետ Աբրահամից նրանց սերած լինելու տեսակէտին՝ ցանկանալով հակադրել Արշակունիներին եւ Արեւելքի նախկին աշխարհակալներին: Ի տարբերութիւն վերջիններիս՝ Արշակունեաց մօտ իշխանութիւնը կազմակերպուած է առաւելապէս ազնուապետական աւանդոյթների վրայ՝ ենթադրելով միապետի ու տոհմիկ աւագանու համագործակցութիւն: Բոլորովին նոր բնոյթ են կրում նաեւ Հայաստանի եւ Պարթեւական (Պարսից) տէրութեան միջեւ յարաբերութիւնները՝ կառուցուած հիմնականում բարեկամական սիրոյ վրայ: Արեաց տէրութեան համակարգում Հայաստանին, ինչպէս եւ նախորդ աշխարհակալութիւնների պարագայում, յատկացուած է երկրորդական գահը: Սակայն դա նշանակում է ոչ թէ Հայաստանի հարկադրեալ ենթակայութիւն, այլ ինքնուրոյնութիւն՝ զուգակցուած հայերի ու պարթեւների երկուստեք բարոյական պարտաւորութիւններով: Դրանք են փոխադարձ օգնութիւնը եւ, անհրաժեշտութեան դէպքում, հարստութեան երկու ճիւղերի իշխանութեան շարունակականութեան փոխադարձ ապահովումը: Ըստ էութեան, Մովսէսը որոշակի կապ է տեսնում Իրանում եւ Հայաստանում Արշակունեաց թագաւորութեան ամրութեան միջեւ:

Արշակունիների օրօք ստեղծուած նպաստաւոր արտաքին քաղաքական իրավիճակը բարերար ազդեցութիւն է թողնում հայոց աշխարհի ներքին կեանքի վրայ՝ հնարաւորութիւն տալով թագաւորներին (Վաղարշակ, Արշակ Ա, Աբգար, Արտաշէս Բ) իրականացնելու իմաստուն բարեկարգութիւններ: Դրանց նպատակը պէտք է լինէր հայ համակեցութեան վերածումը քաղաքակիրթ ու արուեստագործական միջավայրի՝ կազմակերպուած ըստ Բարիքի եւ ճշմարիտ Գիտելիքի: Խորենացու համար միանգամայն ակնկալելի էր այդ զարգացումների (գոնէ մասնակի) տեսականացումը ի դէմս Մար Աբաս Կատինայի եւ նրա պատմական երկի:

Հայաստանի ներքին ամրապնդումը պէտք է ունենար նաեւ իր արտաքին դրսեւորումը. յանձին Արտաշէս Ա արքայի Հայաստանի համար հնարաւորութիւն էր ստեղծում դառնալու համաշխարհային կայսրութիւն: Հայոց թագաւորների գործունէութեան պսակը պէտք է դառնար Աբգարի կողմից քրիստոնէութեան հռչակումը պաշտօնական կրօն: Եթէ Արտաշէսի եւ Աբգարի ձեռնարկումները համադրուէին (Հայաստանը՝ քրիստոնէութեան համաշխարհային կենտրոն), դա Մովսէսի համար, թերեւս, կը լինէր Հայաստանի պատմական զարգացման իդէալական տարբերակ: Դրա իրատեսակ խորհրդանիշ պէտք է դառնար Սուրբ հողում (Պաղեստին եւ Երուսաղէմ) հայոց իշխանութեան հաստատումը:

Սակայն պատմութիւնն այլ ըն-

թացք ստացաւ: Հայ Արշակունիներն ընդհանուր առմամբ այնքան էլ հետեւողական չգտնուեցին հայոց աշխարհի բարեկարգման գործում, չապահովեցին պատմական ծակատագրի հետ արդիւնաւէտ համագործակցութիւն եւ բանական-բարոյական արժէքների նպատակամիտուած ու շարունակական կրկնութիւն, վերջիններիս չհաղորդեցին հզօր լիցք: Արդիւնքում Հայաստանում քրիստոնէութեան ընդունումը յետաձգուեց շուրջ երեք հարիւրամեակով: Իր շարունակութիւնը չստացաւ Կատինայի իմաստասիրական ձեռնարկումը: Կայսրութեան ստեղծումն էլ հայերի ուժերից վեր գտնուեց. երկիրը նախ կորցրեց աւագութիւնն Արեաց տէրութիւնում, ապա յայտնուեց կախեալ վիճակում Արեւմուտքում զօրացող Հռոմից: Վերջինիս զիջուեց համաշխարհային տէրութիւն դառնալու, Սուրբ հողին տիրելու եւ քրիստոնէական հաւատքը համաշխարհայնացնելու պատիւը:

Առաւել եւս պարթեւ Արշակունիները չբռնեցին պատմութեան քննութիւնը: Նրանք վերջին հաշուով չշարունակեցին հարստութեան հիմնադիր Արշակ Ա-ի բարի աւանդոյթները եւ չկարողացան ստեղծել ներքուստ ամուր պետութիւն: Ուստի զոհ գնացին Սասանեանների կազմակերպած յեղաշրջմանը:

Պարթեւ Արշակունիների տապալմանը յաջորդում է հայ Արշակունիների եւ Սասանեանների բախումը: Առաջիններիի նպատակն ազգակից հարստութեան վերականգնումն էր Արեաց տէրութիւնում, Սասանեանների նպատակը՝ Հայաստանի ենթարկումը: Հայկեանների ժամանակից ի վեր Հայաստանի արտաքին քաղաքական պատմութիւնը նորից կրկնւում է: եւ այս անգամ պայքարը երկուստեք ընդունում է վճռական բնոյթ: Խորենացու համար այն ունի թէ՛ քաղաքական, թէ՛ քաղաքակրթական նշանակութիւն, եւ դրա հնարաւոր արդիւնքները միանգամայն պարզ են. մէկընդմիշտ զատուել Արեւելքից (Սասանեան Իրանից) կամ կորչել վերջինիս յորձանուտներում, նորովի վերագտնել սեփական ինքնութիւնը կամ բոլորովին զրկուել նրանից:

Սասանեանների իշխանութեան հաստատումը (Ք. հ. 220-ական թթ.) նշանակում էր արեւելեան բռնակալութեան ամենավատ աւանդոյթների վերածնում: Այս ըմբռնմամբ է Խորենացին պատկերում Իրանի կերպարը. պարսիկները՝ բարբարոս, նրանց կրօնը՝ անմաքրասէր, կրօնի հիմնադիր Զրադաշտը՝ բռնակալ ու առասպելաբանող, պարսից թագաւորները՝ սեփական տէրերի (պարթեւ Արշակունիների) հանդէպ անհաւատարիմ եւ ուրիշների հանդէպ անհանդուրժողական, չար ու խստասիրտ, նենգ ու երդմնազանց, դաժան ու վրիժառու, անարգ ու սրբապիղծ:

Այդ ամէնին միանգամայն համապատասխան է Սասանեանների վերաբերմունքը Հայաստանին: Նրանք հայոց երկրի դէմ ոչ միայն շարունակ պատերազմող, այլեւ քայքայիչ ուժ են: Իրանը Հայաստանի ներսում հակապետական դաւերի ու խառնակութիւնների սադրիչ է, հակաքրիստոնէական ու անջատողական տարրերի ապաւէն, Հայաստանի դէմ հիւսիսային վայրենիներին գրգռող, ի վերջոյ՝ հայոց պետականութեանը կործանում բերող: Որքան պատկերաւոր են Սահակ եպիսկոպոսապետի խօսքերն Արեաց արքայի մասին. «առողջ գազան, որի առողջութիւնը մեզ համար պատուհաս է»:

Պատմահայրը գիտակցում է, որ միայնակ Հայաստանն ի զօրու չէ դիմակայել Սասանեանների հուժկու գրոհին: Դրա համարժէք հակակշիռ կարող է լինել, ըստ նրա, Հռոմէական կայսրութիւնը: Վերջինս, Մովսէսի պատկերացմամբ, սոսկ պատմութեան թատերաբեմի վրայ յայտնուած հերթական մի տէրութիւն չէ, այլ Արեւմուտքում ձեւաւորուած այլընտրանքային մի աշխարհ՝ սեփական տարածա-ժամանակային եւ քաղաքակրթական չափումներով:

Այդ աշխարհի ակունքները Խորենացին տեսնում է «իմաստից մայր կամ դայեակ» Յունաստանում: Վերջինիս պատմութեան գլխաւոր լծակն, ի հակադրութիւն Արեւելքի, լուսաւորութիւնն էր, սերը դէպի իմաստնութիւն: Տեսական-իմաստասիրական եւ գործնական-քաղաքական ոլորտների տրամախոհական փոխազդեցութեամբ այստեղ ապահովում էր համակեցական կեանքի շարունակական եւ վերընթաց վերարտադրութիւնը: Այս առումով պատմահօր աչքում





Գինու կարասներ:
VII դ.մ.թ.ա.,
Կարմիր բլուր

մեծապես գովելի է «յունաց թագաւորների» իմաստասէր բարքը, որոնք ուսեալ մատենագիրների հետ միասին յանձն առան ապագայ սերունդներին աւանդել իմաստուն քաղաքական կարգերի սկզբունքները: «Քաղաքական կարգերի» իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է դիմել Արիստոտելեսին, որի ձեւակերպմամբ դա համակեցության մէջ միաւորուած մարդկանց առաքինի գործերի ամբողջությունն է՝ նպատակամիտուած հանուր Բարիքին: Ուստի քաղաքացու եւ առաւել եւս պետական գործչի գլխաւոր քաղաքական կապիտալը նրա առաքինությունն է (որ նոյն ինքը Գիտելիքն է): Դրան համարժէք՝ իրաքանչիւրը գտնում է իր տեղը համակեցության մէջ՝ պատասխանատուության սեփական բաժինն ունենալով հանուր բարօրության համար: Ապագայ սերունդների հետ յունաց թագաւորների ու մատենագիրների հոգեւոր-համակրական կապին Սովսեսը տալիս է մանկավարժական-ճանաչողական երանգ՝ նրա համար աներկբայ է անտիկ յոյացքը հասարակական կրթանքի առանցքային նշանակության վերաբերեալ, որը կոչուած էր մարդու մէջ դաստիարակել քաղաքացիական առաքինություն:

Արեւելքում աշխարհի սահմաններն ունեն ֆիզիկական բովանդակություն, եւ այս կամ այն տերության ռազմական նուաճումները յանգեցնում են դրանց սոսկ տարածական ընդլայնման: Այլ կերպ է Արեւմուտքում, ուր տերությունների ձեւաւորումն արտացոլում է սեփական հոգեւոր աշխարհի ծաւալումը մինչեւ օյկումենիկ սահմանները: Յատկանշական է Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության պատմական փորձը՝ ստեղծել տարբեր ժողովուրդների միասնական հանրություն՝ իր ընդհանուր հաստատություններով ու արժէքներով: Այդ նոր հանրությունում յունարէնին յատկացուած էր տարբեր մշակոյթներ մէկ համակարգի մէջ շաղկապողի դեր, իսկ «հելլէն» հասկացությանը՝ կիրթ (քաղաքակիրթ) մարդու իմաստ: Այդ համակարգում յունական իմաստասիրությունն ըստ արժանւոյն զբաղեցրեց կենտրոնական տեղ՝ շնորհիւ իր հիմնական յատկանիշների. ճշմարիտ-յարամնայի բացայայտում, համամարդկային ընդգրկունություն եւ մանկավարժական աւանդոյթ, որոնցով այն հարազատանում է իրեն ժառանգելու եկած քրիստոնէությանը: Խորենացու համար գնահատելի են ինչպես հելլէնական աշխարհի այդ արժանիքները, այնպես էլ ուրիշ ժողովուրդների լաւագոյն ներկայացուցիչների փոխադարձ ձգտումը՝ մաս կազմելու հոգեւոր այդ նոր համակարգին: Նշանաւոր մատենագիրների՝ եգիպտացի Մանեթոնի, քաղդէացի Բերոսոսի, հրեայ Յովսէփոսի անունները դրա վկայությունն են:

Վերջիններիս պատմասիրական ձեռնարկումների ոգուց հեռու չէր իբրեւ թէ Ալեքսանդր Մեծի հրամանով քաղդէերէնից յունարէն թարգմանուած երկը, որի՝ Հայաստանի անցեալին վերաբերող մասն աւելի ուշ վերամշակեց եւ

լրացրեց Կատինան: Դրա շնորհիւ կարծես թէ հայոց պատմութիւնն էլ ներառւում էր տարբեր ժողովուրդների այն ընդհանուր պատմական համակարգի մէջ, որ ձեւաւորուեց հելլէնիզմի գործիչների ձիգերով: Խորենացու համար մանաւանդ ուրախալի է, որ Կատինայի պատմական երկում ինքը երբեմն զուգահեռներ է գտնում հայոց եւ յունաց պատմութիւնների միջեւ: Խօսքը վերաբերում է մի քանի նահապետների ու թագաւորների (մանաւանդ Տիգրանին եւ Արտաշէս Բ-ին), որոնց պատմահայրը, աւել կամ պակաս չափով, ձգտում է պատկերել պլատոնական իմաստունին բնութագրող գծերով:

Արեւմուտքի իմաստասէր աշխարհին Մովսէսը հակադրում է Իրանի հոգեւոր աշխարհը, որի պատմական (ընդհանրապէս գիտական) գրուածքները ոչ պիտանի են քաղաքական կարգեր ուսուցանելու, ոչ էլ արժանի են սկզբնաղբիւր ծառայելու: Այս հակադրման արտայայտիչ օրինակ է, Մովսէսի վկայութեամբ, պարսից արքայ Ծապուհի կանգնեցրած սիւնը, որի վրայ քանդակուած պատկերում Սասանեան Իրանը մարմնաւորող առիւծը (այսինքն ֆիզիկական բիրտ ուժը) ոտնակոխ է անում գիտութիւն պարունակող գիրքը, որ խորհրդանշում է Հռոմեական տէրութիւնը:

Վերջինիս կազմաւորումը յունա-հռոմեական աշխարհի աստիճանական կայացման յաջորդ փուլն էր եւ, ըստ էութեան, ժողովուրդների վերոյիշեալ մշակութային ինտեգրման պետական-քաղաքակրթական ձեւակերպումը: Ըստ այդմ էլ, հետեւելով անտիկ մտքին ու Աւետարանին, Խորենացին մի տեղում հռոմեացիների կայսրութիւնը նոյնացնում է աշխարհին (քաղաքակիրթ աշխարհին) ընդհանրապէս: Ինքը Հռոմն էլ, բնականաբար, այդ աշխարհի կենտրոնն էր: Խորենացու օրօք այդ դերում նոր Հռոմն է՝ կայսրութեան նոր մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը: Հետեւելով իր ժամանակի հռոմեական (բիւզանդական) չափումներին՝ Խորենացին նրան կցում է «տիեզերական մայրաքաղաք», «թագաւորական քաղաք» (այսինքն՝ քաղաքների թագուհի) մակդիրները:

Հռոմի հետ Արշակունիների յարաբերութիւններն ի սկզբանէ հակասական են եղել: Կարծատեւ բարեկամութիւնը, որ հաստատուել էր մակեդոնացիների դէմ պայքարի ժամանակ, շուտով փոխարինուել է թշնամանքով, երբ իրար են բախուել երկու կողմերի աշխարհակալական նկրտումները: Տեւական պատերազմներում հայ-պարթեւական ուժերի պարտութիւնից յետոյ Հայաստանը հռոմէական աշխարհակարգի մաս է կազմել: Բայց վստահութեան յարաբերութիւններն էլ միանգամից չեն ձեւաւորուել: Հռոմը շարունակում էր կասկածանքով վերաբերուել հայ-պարթեւական դրացիութեանը, խրախուսում էր հրէից արքայ Հերովդէսի անբարեացակամութիւնը Հայաստանի հանդէպ, հետեւողական էր հարկապահանջութեան մէջ: Փոխարէնը հայոց թագաւորները երբեմն ապստամբում կամ ապստամբութեան փորձեր էին կատարում հռոմէական տիրապետութեան դէմ: Մի երկու անգամ (Արտաշէս Բ-ի, Տիգրան Վերջինի օրօք) հայկական զօրքերը պարթեւների հետ նոյնիսկ ասպատակեցին Հռոմէական կայսրութեան սահմանները:

Պտղաբերութեան և արհեստների աստուածուհի: Վանի թագաւորութիւն VII դ.մ.թ.ա. Երեւան, պատմութեան թանգարան

Հայ-հռոմէական հակամարտութեան ֆոնի վրայ Խորենացին բացայայտում է Հռոմի սկզբունքային տարբերութիւնն արեւելեան աշխարհակալութիւններից եւ յատկապէս Սասանեան տէրութիւնից: Հռոմից չի բխում հայութեան ստրկացման կամ, առաւել եւս, նրա ինքնութեան վերացման սպառնալիք: Սասանեանների քինախնդրութեանը պատմահայրը հակադրում է հռոմեացի-

ների գթասրտությունն ու ներողամտությունը ժամանակ առ ժամանակ ըմբոստացող եւ անյաջողության մատնուող հայերի նկատմամբ: Իրանում սասանեան յեղաշրջումից յետոյ Խորենացին Հռոմին է վերապահում Հայաստանի ապաւէնի (ժամանակակից լեզուով ասած՝ նրա ինքնուրոյնության, անվտանգության ու տարածքային ամբողջականության երաշխաւորի) դերը՝ երբեմն դրան վերագրելով յիրաւի փրկչական նշանակութիւն: Այդպէս եղաւ, երբ հայոց Խոսրով թագաւորի սպանութիւնից յետոյ Հայաստանը յայտնուեց սասանեան լծի վտանգի առաջ: Այդպէս եղաւ նաեւ Տրդատ Մեծի մահուանից, նաեւ Արշակ Բ-ի կալանաւորումից յետոյ: Ըստ էության, պարթեւ Արշակունիների անկումից յետոյ հռոմէական կայսրերին է անցնում հայոց թագաւորական իշխանության շարունակականության ապահովումը: Նրանց այդ առաքելությանն է հակադրուած պարսից Արտաշիրի քայլը՝ նուաճուած Հայաստանում ջնջել հայոց թագաւորների անունը՝ ամէն բանում հաստատելով սեփականը:

Հռոմէական կայսեր եւ Հայոց թագաւորի (վերջինիս բացակայության դէպքում՝ Հայոց նախարարության) յարաբերությունները Խորենացին ներկայացնում է որպէս տիրոջ եւ հաւատարիմ (իդէալում) հպատակի յարաբերություններ: Դրանք դիկտատի ու բռնության միավեկտոր յարաբերություններ չեն, այլ ունեն հոգեւոր բովանդակութիւն ու յետադարձ կապ, բնորոշւում են «սիրով ու մտերմությամբ»: Համակրական այդ յարաբերությունները երկու կողմերին օրգանապէս միահիւսում են ընդհանուր տիեզերական կառոյցի մէջ, որի առողջ վիճակը բնութագրւում է «բարեկարգութիւն» տերմինով: Յիշեալ կառոյցում Հռոմն ու Հայաստանը յարաբերւում են հիերարխիկ սկզբունքով. բարեկարգությունը Հռոմում նշանակում է խաղաղութիւն Հայաստանի շուրջ, Հռոմի հզորությունը՝ Հայաստանի անվտանգութիւն: Այստեղից՝ Խորենացու ուշադրությունը Հռոմի ներսում կամ հեռաւոր սահմաններին կատարուող իրադարձությունների, որոնք առաջին հայեացքից ընդհանուր ոչինչ չունեն հայոց պատմության հետ: Իրականում կառոյցի օրգանական միասնությունը ենթադրում է, որ նրա մի հատուածում կատարուող փոփոխություններն անդրադառնում են միւս հատուածների վրայ: Ուշագրաւ է, որ Հռոմում երբեմն տեղի ունեցող խռովությունները ժամանակագրօրէն համընկնում են հայ-հռոմէական յարաբերությունների վատթարացման հետ, իսկ եւրոպական բարբարոսների (գոթեր, ղանկվարտ-լանգոբարդներ) ակտիւացումը Դանուբի վրայ՝ Մերձաւոր Արեւելքում հերթական քաղաքական ճգնաժամի հետ: Հայ-հռոմէական աշխարհի միասնությունը նշանակում է նաեւ նրա սահմանների ընդհանրություն: Ուստի Խորենացու համար հասկանալի է ոչ միայն հռոմեացիների մասնակցությունը Իրանի դէմ Հայաստանի սահմանների պաշտպանությանը, այլեւ հայերինը (յանձին Տրդատի կամ Վարազդատի)՝ Հռոմի սեփական սահմանների պահպանմանը: Մովսէսի «Պատմությունում», ընդհանրապէս, նկատւում է որոշակի միտում՝ զուգակշռելու եւ սինխրոնիզացնելու հայոց ու հռոմէական պատմությունը. Արշակունիներն ու Հռոմէական տէրությունը միաժամանակ են պատմության ասպարէզ իջնում, միաժամանակ են կանգնում արտաքին լուրջ վտանգների առաջ, ընդհանրապէս՝ այնպիսի խնդիրների առաջ, որոնք ընդհանուր են երկուսի համար էլ: Այլեւ՝ միաժամանակ կամ գրեթէ միաժամանակ են հաղորդակից դառնում անտիկ քաղաքակրթության գլխաւոր ժառանգությանը՝ քրիստոնէությանը, ենթարկում այն հալածանքների եւ, ի վերջոյ, ընդունում:

Քրիստոնէությունը հանդիսանում էր յունահռոմէական աշխարհի իմաստասիրական հակումների եւ ընդհանրապէս նրա հոգեւոր ինքնակայացման ամբողջացումը: Խորենացու ժամանակներում Հռոմէական պետության եւ քրիստոնէության յարաբերակցության մասին եղած պատկերացումն ըմբռնելու համար հարկ ենք համարում մի փոքր անդրադառնալ այն տեսությանը, որ մշակուեց Գ դարի երկրորդ կէսին - Դ դարի առաջին կէսին (վերջնականապէս՝ Կոստանդին Ա կայսեր հեղինակաւոր պալատական աստուածաբան Եւսեբիոս Կեսարացու ջանքերով) եւ ստացաւ պաշտօնական ընդունելություն քրիստոնեայ աշխարհում: Եւսեբիոսի ներկայացրած պատմասիրական հայեցակարգում քրիստոնէական հաւատքն ամենեւին կոչուած չէր խաթարելու հռոմէական աւանդոյթները, այլ ճիշտ հակառակը՝ լրացնելու եւ ամրապնդելու դրանք: Խորհրդան-

Արծաթեայ սկահակ:
Հայաստան, V դ.մ.թ.ա.
Փարիզ, Լուվր:

շական էր, որ կայսրությունն ու նոր կրոնը առաջ էին եկել գրեթե միաժամանակ եւ ունեցել համընթաց զարգացում. կայսրության հզորացումն ուղեկցում էր քրիստոնեության տարածմամբ եւ հակառակը: Հռոմեական կայսրերի բարեացակամ (կամ առնուազն հանդուրժողական) վերաբերմունքը Քրիստոսի հաւատքի նկատմամբ կարգ էր, հալածանքները՝ բացառություն: Իրենք՝ հալածանքները ոչ թէ արտայայտել են պետության, որպէս այդպիսին, հետեւողական ու մշակուած քաղաքականությունը, այլ արդիւնք են եղել մի քանի մանրախնդիր կայսրերի ստոր բարքի, որոնք դաժան բռնակալներ են եղել ամբողջ հռոմեական հասարակության նկատմամբ: Ընդհանրապէս, ուղղափառությանը վտանգ սպառնում էր ոչ այնքան իշխանություններից, որքան բազմազան աղանդներից, որոնց թում՝ Պարսկաստանից ներմուծուած սուտ ու պիղծ ուսմունքից՝ մանիքեությունից: Քրիստոնեությունը հռոմեական կոսմիկական կառոյցի ներդաշնակ ու անհրաժեշտ մասն էր: Ուստի նրա դէմ հալածանքների եւ Հռոմը պատող ժամանակաւոր քաոսների զուգադիպումը պատահական չէր (հմմտ. 303-313 թթ. հալածանքների նկարագրումը Եւսեբիոսի մօտ, որոնք ուղեկցում էին բոլորի համար ընդհանուր արհաւիրքներով՝ քաղաքացիական պատերազմներ, հասարակության դէմ անիրաւություններ, համատարած սով ու ժանտախտ, բնական աղէտներ): Փոխարէնը՝ քրիստոնեության ընդունումը նշանակում էր Հռոմեական ներդաշնակության վերականգնում՝ կայուն հիմքերի վրայ: Ըստ այդմ, Հռոմեական կայսրությունը հանդիսանում էր Աստծոյ երկնային թագաւորության երկրային պատկերը: Իր հերթին, «բարեպաշտ» ու «մարդասէր» կայսրն ընկալւում էր որպէս Աստծոյ նմանակն ու բոլոր հաւատացեալների «հոգեւոր հայրը», ողջ քրիստոնեայ աշխարհում բարեկարգության աղբիւրն ու երաշխաւորը:

Ընդունելով այս մօտեցումները որպէս ելակէտ՝ Խորենացին դրանք անց է կացնում հայ-հռոմեական յարաբերությունների պրիզմայով: Ըստ այդմ, քրիստոնեական հաւատքը Հայաստանը Հռոմի հետ միաւորող ոչ թէ լրացուցիչ, այլ գլխաւոր գործօնն է: Հաւատքի ընդհանրությունը երկու կողմերի միջեւ կապը վեր է ածում «հոգեւոր մտերմության ու հարազատության», որն ակնյայտ առաւելություն ունի նոյնիսկ պարթեւ Արշակունիների հետ հայոց թագաւորների ազգակցական կապի նկատմամբ: Այդ հոգեւոր հարազատության ձեւաւորումը սկիզբ է առնում ոչ թէ Տրդատ Մեծի եւ Կոստանդին կայսեր օրօք, այլ հենց Քրիստոսի ժամանակներում, երբ Տիրոջ ուսմունքին ծանօթացած Աբգարն ու Տիբերիոս կայսրը ճանաչում են Յիսուսի աստուածային էությունը եւ դատապարտում հրէայ հոգեւորականությանը: Հետեւաբար, երեք դար յետոյ Կոստանդինի եւ Տրդատի միջեւ սահմանուած ուխտը հին

ակունքներ ունեցող մտերմութեան նորովի հաստատումն է: Մովսէսի եւ Եւսեբիոսի հայեցակարգերը համադրելիս բացայայտւում է այն հիերարխիան, որ կառուցւում է Հայաստանի ու Հռոմի միջեւ նաեւ քրիստոնէութեան հետ կապուած հարցերում: Այսպէս, աստուածային տնօրինութեամբ Հայաստանը դառնում է Հերովդէսին պատժող գործիք՝ Յովհաննէս Մկրտչի սպանութեան համար, Հռոմի միջոցով էլ պատժւում է ողջ Իսրայէլը՝ Քրիստոսին խաչելու համար. Հռոմին են վիճակւում Ա դարի ամենանշանաւոր քրիստոնէական գործիչները՝ Պետրոսն ու Պօղոսը, Հայաստանին՝ Թադէոսն ու Բարդուղիմէոսը: Վերջապէս՝ Դ դար. աստուածասէր միապետներ Կոստանդին եւ Տրդատ. նրանցից առաջինը քրիստոնեացնում է մի ամբողջ աշխարհ, երկրորդը (Գրիգոր Լուսաւորչի հետ)՝ աշխարհի համեմատաբար փոքր մի հատուած: Մասշտաբների այսպիսի յարաբերակցութիւնը, բնականաբար, ենթադրում է, որ Հռոմէական կայսրութիւնը քրիստոնէութեան համաշխարհային պատուարն է. նրա հզօրութիւնից ու նրա հետ սերտ կապերից ոչ քիչ չափով կախուած է Հայաստանում հաւատքի ամրութիւնը:

Դաւանակից լինելու հանգամանքը Խորենացին դիտարկում է որպէս կարեւոր գործօն՝ ամուր հողի վրայ դնելու յունա-հռոմէական լուսաւորեալ ու մարդասիրական արժէքների արտաբխումը դէպի Հայաստան: Կրկին ու կրկին՝ այդ գործընթացին Խորենացին վերապահում է ընդգծուած ուսուցողական երանգ. «իսկական ճեմարանի» կենսարար աղբիւրից են փոխառում իմաստասիրութիւնն ու յունական գրագիտութիւնը, սուրբ հայրերի բարի ուսմունքը, Ներսէս եւ Սահակ եպիսկոպոսապետերի նորամուծութիւնները. Յունաստանի հետ խորհրդաւոր ձեւով է կապուած նաեւ հայոց գրերի գիւտը: Այս արժէքներն ու հաստատութիւնները կոչուած են տիեզերական բարեկարգութիւնը տարածելու հայոց համակեցութեան վրայ եւ ազնուացնելու այն՝ բարբարոսական-հեթանոսական այլանդակութիւնը փոխարինելով քաղաքացիական պարկեշտութեամբ:

Այսպիսով. Խորենացու համար ակնյայտ է Արեւմուտքն ամփոփող Հռոմի եւ Արեւելքը մարմնաւորող Սասանեան Իրանի ներհակութիւնը, որին պատմահայրը տալիս է դիալեկտիկ բնոյթ. «մէկի վախճանը միւսի սկիզբն է»: Մովսէսը սոկրատեան-պլատոնական տրամախոհութեան ոգով երկու աշխարհները հետեւողականօրէն ենթարկում է, համապատասխանաբար, հաստատման եւ մերժման. քրիստոնէական հաւատք, իմաստասիրութիւն, իրաւականութիւն, բարեկարգութիւն, ընդհանրապէս ճշմարիտ արժէքներ ընդդէմ ստի, անհեթեթութեան, բռնակալութեան, աստուածամերժութեան: Ի վերջոյ, քաղաքակրթուածութիւն ընդդէմ հեթանոսական բարբարոսութեան կամ վայրենութեան: Ուստի միանգամայն հասկանալի է Հռոմի եւ Իրանի նշանակութիւնը Հայաստանի համար. առաջինը երախտիքների աղբիւր է, երկրորդը՝ չարեաց: Որպէս խօսուն օրինակ պատմիչը նկարագրում է հռոմէացիների պետական աջակցութիւնը Հայոց աշխարհի արեւմտեան բաժնում հայ դպրութեան արմատաւորմանը՝ այն պարագայում, երբ պարսիկները հիմնաւեր էին անում Հայոց պետութիւնը:

Հայ-հռոմէական յարաբերութիւնների վերը նկարագրած պատկերն աւելի շատ իդեալական, քան իրական բովանդակութիւն ունի: Եւ գործնականում Խորենացին դա չի էլ թաքցնում: Հռոմ-Իրան հակադրութեան կողքին պատմահայրը Հռոմի հետ (բացայայտ կամ թաքուն) բաղդատում է նաեւ հայոց համակեցութիւնը՝ շարունակ բացայայտելով նրա պատմական ինքնակարգաբերման անհետեւողականութիւնը:

Այս առումով նա առանձին ուշադրութիւն է դարձնում Հայոց պատմութեան ամենադրամատիկ շրջանին՝ Դ-Ե դարեր: Այդ ժամանակաշրջանը սկսւում է Հայաստանում քրիստոնէութեան պաշտօնական ընդունումից: Վերջին հանգամանքը երկրին տեսականօրէն խոստանում էր «կեանքի ճանապարհ», լուսաւորում յունա-հռոմէական «գրքի» իմացական արժէքներով: Սակայն, Խորենացու խոստովանութեամբ, քրիստոնէութիւնն սկզբից ի վեր մնաց անընթեռնելի տեքստ հոգու խորքում հեթանոս հայութեան համար: «Անբան, թուլամիտ ու վայրենի» հայերի մէջ Խորենացին

դժուարանում է տեսնել ճշմարիտ կրօնի խոր արմատներ, չի գտնում դրան պատուանդան ծառայող յունական իմաստասիրության սկզբունքները, յանուն որոնց ինքը զրկանքների արժանացաւ: Նման պայմաններում որքան ցաւալի, նոյնքան էլ հասկանալի էր հայոց պատմության վերջին հատուածի վարընթաց ուղին՝ ընդհուպ մինչեւ պետության անկումը: Այսպէս, քրիստոնէու-թեան ընդունումը հանդիպեց «խստասիրտ ու ամբարտաւան, անօրէն ու ամբարիշտ» մարդկանց ընդդիմությանը, ապա հետեւեցին Տրդատ արքայի եւ Արիստակէս եպիսկոպոսապետի սպանությունը, հեթանոս-նախարարների անջատամտությունն ու կրօնական պատերազմները: Իրենց հերթին՝ Տրդատի յաջորդները չդրսեւորեցին քրիստոնեայ միապետներին վայել բարք: Դարձի եկած նախարարներն էլ մոռացության տուեցին հաւատարմությունը սեփական տերերի հանդէպ եւ չար միաբանությամբ երկիրը մատնեցին թշնամու ձեռքը: Անօգնական գտնուեց հաւատքի պատուար եկեղեցին՝ յայտնուելով տգէտ եւ օտարին շողոքորթող հոգեւորականների ձեռքը: Զախողուեց հայ-հռոմէական համագործակցությունը, եւ Հայաստանը յայտնուեց հռոմէական ներդաշնակ տիեզերքի սահմաններից դուրս՝ հենց հայ թագաւորների կարծամտության ու երախտամոռության հետեւանքով: Խանգարում ու անհետանում էր հայոց բարեկարգությունը...

Հաստատուած համակեցական քաոսի յաղթահարումը Մովսէս Խորենացին տեսնում է ոչ այնքան քաղաքական գործողությունների, որքան հոգեւոր փոխակերպման, մշակութային ակտիւ ինքնարարման մէջ, որը, հետազօտողներից մէկի դիտողությամբ, ակնյայտ առաջնություն ունէր նոյնիսկ պետության վերականգնման նկատմամբ: Այստեղ, ըստ էության, խօսքը գնում է յունա-հռոմէական (իսկական քրիստոնէական) աշխարհի լուսաւորեալ ու առաքինի յարացոյցներով հայոց ամբողջ համակեցական տեսակն արմատականօրէն վերակառուցելու մասին: Ընդհանրացուած ձեւով, վերակառուցումը ենթադրում էր սեփական հեթանոսական վայրենության վճռական փոխարինում քաղաքակիրթ կեցությամբ, այդ ուղղությամբ նախկինում ձեռնարկուած առանձին քայլերի հետեւողական շարունակում եւ ամբողջացում: Քաղաքակրթուածության խորենացիական բանաձեւումը որքան պարզ է, նոյնքան էլ հանճարեղ. մարդակենտրոնությունը՝ հասարակական պատկերացումների առանցք, բանականությունը՝ մարդու բնութագրական, առաքինությունը՝ դրա կատարելություն: Անհատի ու հասարակության ներհայեցողության պարագայում դա նշանակում է իմաստասիրական բարք, արտաքին կողմնորոշման հարցում՝ յունա/հռոմէասիրություն: Հռոմը, կրկնենք, Խորենացու համար սոսկ մի կայսրություն չէ. դա Արեւմուտքի քաղաքակրթական ձեռքբերումների եւ արժանիքների ամբողջությունն է ու մարմնաւորումը: Ուստի յունա/հռոմէասիրությունը ոչ այնքան քաղաքական, որքան հոգեւոր կողմնորոշում է: Այդպիսի կողմնորոշման հնարաւոր հետեւանքները Մովսէս Խորենացուն միանգամայն ակնյայտ են Եգիպտոս. Ալեքսանդրիա՝ անտիկ ու քրիստոնէական աշխարհի խոշորագոյն հոգեւոր կենտրոն. այստեղ իդէալական հոմէոստասիսի մէջ են բնությունը, մարդու ճարտար միտքն ու հոգեւոր արժէքները: Այլեւ Կարին՝ Հայոց աշխարհի այն սակաւաթիւ հատուածներից, որ թագաւորության կործանումից յետոյ մնացին հռոմէացիների իշխանության տակ: Այստեղ բնության տարրերը չեն փոխել իրենց բնոյթը, ինչպէս Պարսկահայաստանում, այլ մեղմ է ու առատ բնությունը: Չկայ հողերի անբերրիություն ու անասունների անաճելիություն, այլ արգաւանդ դաշտերը, լեռներն ու գետերը լի են սերմատու բոյսերով ու պարարտ կենդանիներով, ձկներով ու թռչուններով: Ջրերն անօգուտ չեն աւելանում ու չափազանց չեն քչանում, այլ բխում են մաքուր աղբիւրներ՝ կենարար ջուրը հասցնելով գաւառին: Բարեբեր քաղաքներն ու ամրոցները չեն առնում ու քանդում, այլ ճարտարությամբ կառուցում են՝ ի ապաւինություն հայերի ու հռոմէացիների: Տիրում է իշխանների, գործակալների ու քահանաների միաբանություն ու բարեպաշտություն, որոնք, «ասես աստուածային ձայնին հետեւելով», ձեռնարկում են ուսուցման գործը...

ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐԸ

(1943թ. 18-25 օգոստոս)

Սիմոն Վրացեանի անձնական արխիւին մէջ պահուած են Հայաստանի Ա. Հանրապետութեան վերջին վարչապետին տարբեր տարիներու օրագրութիւնները, որոնց մէջ ան կ'անդրադառնայ քաղաքական, ազգային, մշակութային, կուսակցական եւայլն կեանքը շօշափող այլազան իրադրութիւններու եւ երեւոյթներու, որոնց բոլորի նկատմամբ հեղինակը կը դրսեւորէ ուրոյն դիրքորոշումներ եւ հայեացքներ:

Ընթերցողի ուշադրութեան յանձնուած նիւթը կը վերաբերի Համաշխարհային Բ. պատերազմի ընթացքին՝ 1943 թուականին գրի առնուած մէկ օրագրութեան, աւելի ճիշդ անոր առաջին մասին, որ ինքնին ամբողջութիւն մը կը կազմէ պատերազմի խառնափնթոր ու անորոշ պայմաններուն մէջ՝ Հայաստանի, հայ ժողովուրդի եւ ընդհանրապէս հայկական դատին դիմագրաւած խնդիրներուն: Հետաքրքրական է յատկապէս ծանօթանալ հեղինակի ունեցած խոր ծանօթութեանց ռուսական իրականութեան եւ այդ պետութեան՝ ցարական թէ խորհրդային վարչաձեւերու տակ, վարած քաղաքականութեան, եւ, այդ լոյսին տակ Հայ Դատին առջեւ բացուող հեռանկարներուն, որոնք նոյնպէս կ'ենթարկուին փորձառու քաղաքագէտին խորազնին քննութեան, առիթ դառնալով յաճախ առանձնայատուկ հայեացքներու եւ մտորումներու պարզումին:

ՍՎ. 77-1 համարը կրող փաստաթուղթը խորագրուած է «Քաղաք. Օրագիր, Օգ. 1943 – Նոյ. 1944» եւ բաղկացած է 57 ձեռագիր էջերէ: Հրատարակութեան տրուած բաժինը, ինչպէս նշուեցաւ, առաջին մասն է (30 էջ), Օգոստոս 18-25ի գրառումը: Մնացեալը ընթացիկ օրագրութիւն է, որ ըստ էութեան կապ չունի առաջին մասին մէջ շօշափուած հարցերուն հետ:

Ե. ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

Լինենք իրատես և ականջ դնենք ժամանակի նշանախոսքերին, որոնց մեջ, ավա՜ղ, ազգերի ինքնորոշման և անկախության պահանջներ չկան: Մարդկությունը ավելի վատ է, քան մենք միամտորեն կարծում էինք: Աշխարհիս երեսին տիրողը մեծերի շահն է և գազանական գիշատիչ բնազդը: Մեծ ձկները ուտում են փոքր ձկներին, իսկ բնությունը մեզ ստեղծել է, դժբախտաբար, փոքր ձուկ: Լողանք այն ջրերում, ուր ամենից քիչ հավանականություն կա կուլ գնալու...

Օգ. 1943 – Նոյ. 1944

18 Օգոստոս. Նանթասքէթ.– Եկել եմ հանգստանալու ովկիանոսի ափին: Արեւն ու տաք աւազը եւ ովկիանոսի անհունութիւնը կազդոյր են տալիս մարմնիս, բայց միտքս հանգիստ չէր: Եւ ինչպէ՞ս կարելի է հանգստանալ, երբ աշխարհ հրդեհի մէջ է, եւ ռումբերի արձագանգները, ամէն րոպէ, վրդովում են եւ այս խաղաղ անկիւնը: Լրագիր, ռատիօ, երեկոյեան խաւարումը, ամենօրեայ խօսակցութիւններն անվերջ պատերազմ են յիշեցնում: Գնա՛ ու հանգստացիր:

Ռուզվէլթ-Չըրչիլի տեսակցութիւնը, այս պահուս, Քուէբեքում, ռազմավարութեան յառաջիկայ ծրագիրներից դուրս, քաղաքական ահաւոր հարցեր է յարուցանում: Ի վերջոյ, ամերիկեան-անգլիական ոյժի ընթացքից է կախուած աշխարհի ապագան, մինչեւ նոր ցնցումներ ու փլուզումներ: Այսօր այլեւս պարզ է, որ գալիք խաղաղութիւնը պիտի լինի Ամերիկայի եւ Անգլիայի խաղաղութիւն:

Ի՞նչ սկզբունքներ են գերիշխելու վաղուայ խաղաղութեան մէջ: Վերսա՞յլ: Չեմ կարծում: Վերսայլը փորձեց 20րդ դարում յաւերժացնել 19-րդ դարու գաղափարները՝ լիբերալ տէմոկրասիի, ազգերի բացարձակ ինքնորոշման, մեծ ազգերի գերիշխանութեան եւ ազատ մրցակցութեան աշխարհը: Եւ ձախողեց: Ինչո՞ւ: Որովհետեւ կեանքը ցոյց տրուաւ, որ այդ գաղափարները այլեւս ապրած են իրենց կեանքը եւ այլեւս համապատասխան չեն նոր պայմաններին: Քսաներորդ դարը նոր պայմաններ ու նոր պահանջներ է ստեղծել, որոնց պէտք է գոհացում տրուի, այլապէս աշխարհը չի խաղաղի:

Եւ Ռուզվէլթ-Չըրչիլի տեսակցութիւնները, անկասկած, նաեւ այս նպատակը ունին.– որոշել ու ձեւաւորել պատերազմի նպատակները եւ այդ նպատակներին հասնելու միջոցները: Այլ խօսքով՝ պատերազմից յետոյ կառուցուելիք աշխարհի յատակագիծը: Միամտութիւն չէ՞ պատերազմի ընթացքին ապագայ աշխարհի կարգ ու սարքի գուշակութիւններն անել: Թերեւս: Անշուշտ, գրեթէ միշտ պատերազմի սկզբի նպատակները վերջը հիմնովին փոխւում են: Այդպէս չեղա՞ւ առաջին համաշխարհային պատերազմի վերաբերմամբ. սկիզբը պարզ խնդիր կար դրուած՝ խորտակել փրուսական ռազմապաշտութիւնը եւ Գերմանիան իր տեղը դնել՝ ապահովելով Երրեակ Համաձայնութեան պատկանող պետութիւնների աշխարհակալական ծրագիրների գործադրութիւնը: Բայց վերջը ի՞նչ դուրս եկաւ. ռուսական յեղափոխութիւնը եւ Ամերիկայի մասնակցութիւնը պատերազմին հիմքից ձեւափոխեց սկզբնական բոլոր նպատակները: 1914-ին ո՞վ կարող էր մտածել Ազգերի Դաշնակցութեան, կամ ճնշուած ազգերի անկախութեան մասին:

Նոյնը, բնականաբար, կը լինի եւ այս անգամ: Այն ինչ որ գծւում է այսօր, վաղը, ամենայն հաւանականութեամբ, կը դառնայ անպէտք: Առաջ կը գան նոր նպատակներ ու նոր ծրագիրներ՝ նայելով թէ ինչպէս կը վերջանայ պատերազմը եւ ուժերի ինչ դասաւորութիւն կը ստեղծուի պատերազմից յետոյ:

Սակայն, ինչ եւ լինին ապագայ ծրագիրները, մի բան թւում է անվիճելի. Վերսայլի գաղափարներն ու Վերսայլի ոգին պիտի չլինին ստեղծուելիք իրաւակարգի հիմքը: Դէպքերը կարելի չէ անտեսել: Վերսայլի հիմքում դրուած էին լիբերալ դեմոկրասիի գաղափարները՝ քաղաքական եւ տնտեսական ազատութիւնների 19-րդ դարի ըմբռնումներով: 19-րդ դարը քաղաքական լիբերալիզմի եւ դրամատէր դասակարգի տիրապետութեան դար էր: Laissez-faire, laissez-passer տնտեսութեան մէջ եւ մեծ պետութիւնների ուժերի հաւասարակշռում՝ քաղաքական ասպարէզում: Տնտեսական պայքարի դար իւրաքանչիւր երկրում, երբ իշխանութիւնը դեռ անվիճելի կերպով գտնւում էր բուրժուազիի ձեռքում:

Քսաներորդ դարում, մանաւանդ, առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, տեղի ունեցաւ տնտեսական եւ քաղաքական ուժերի հիմնական տեղաշարժ: Եւրոպական ցամաքի մեծ մասի վրայ եւ Ասիայի որոշ մասերում բուրժուազին կորցրեց ոչ միայն իր ոտքի տակի հողը, այլեւ գոյութեան իրաւունքը: Ռուսաստան, Իտալիա, Գերմանիա վերջ տըւին դրամատիրական կարգին եւ որդեգրեցին տնտեսական նոր՝ ապադասակարգային դրութիւն, իւրաքանչիւրը իրեն յատուկ ձեւով: Դրամա-

տիրական երկրներում էլ, ինչպէս Անգլիա, Սկանդինաւեան երկրներ, վերջին պահուն նաեւ Ֆրանսա, աշխատաւոր զանգուածների գրոհի տակ, ստիպուած եղան ոչ միայն քաղաքական ղեկավարութեան մէջ մտցնել ընկերվարականներին, այլեւ արմատական փոփոխութիւններ կատարել իրենց տնտեսական դրութեան մէջ՝ սահմանափակելով դրամատէր դասակարգի իրաւունքները: Տնտեսական լիբերալիզմի ամէնէն տիպար երկիրը՝ Ամերիկան եւս, Ռուզվէլթի նախագահութեան օրով, միացաւ Եւրոպային: Այսպիսով, հետզհետէ ծնունդ է առնում մի նոր աշխարհ, որի մէջ բուրժուազին այլեւս մենատէր տիրապետող չէ, այլ իշխանակից է աշխատաւոր դասակարգի հետ, իսկ որոշ տեղեր՝ բոլորովին հեռացած է ասպարէզից: Լիբերալ դեմոկրասիի տիրապետութեան յաջորդում է տնտեսական դեմոկրասին՝ իր ուրոյն աշխարհահայեացքով եւ ուրոյն կարգերով ու աշխարհավարութեամբ, որ հիմնապէս տարբերւում է նախավերսայլեան սկզբունքներից:

Ներկայ եւ գալիք աշխարհը նախավերսայլեան աշխարհից տարբերւում է եւ ուրիշ բանով: Գիտութեան խելայեղ նուաճումները, օդագնացութեան եւ ռատիոյի արագ զարգացումը ծայր աստիճանի կրճատեցին տարածութիւնները եւ արագացրին մարդկային փոխյարաբերութիւնները: Երկրագունդը փոքրացաւ: Կարինից Սուրբ Կարապետ ուխտի երթալը այժմ աւելի ժամանակ է պահանջում, քան Լոնդոնից Նիւ Եորք ճամբորդելը: Մեկուսացած խնդիրներ այլեւս գոյութիւն չունեն: Ովկիանոսները չեն ապահովում ազգերի խաղաղութիւնը: Աշխարհ դարձել է մէկ միաւոր: Երկիրները աւելի մօտեցել են իրար, ազգերի կեանքը աւելի շաղկապուել իրար հետ: Հաղորդակցութեան միջոցների կատարելագործումն ու արագացումը տնտեսական տեսակէտից էլ երկրագունդը դարձրել է մէկ միաւոր: Աւելի քան երբեք մեր երկրի կեանքը կապուած է ուրիշ երկրների կեանքի հետ:

Սրանք բոլորը նոր երեւոյթներ են: Այս երեւոյթների լուսով պէտք է դիտել աշխարհի գործերը եւ նրանց համեմատ պատրաստել ապագայի ծրագիրները: Եւ ինչ էլ լինեն այդ ծրագիրները, այդ նոր երեւոյթներն են, որ պիտի թելադրեն ապագայ խաղաղութեան ծրագիրը եւ ապագայ իրաւակարգը:

Եւ ահա մի հիմնական հարց, որ չի կարող չզբաղեցնել մտածող անհատի, մանաւանդ հայ մարդու ուղեղը: Ի՞նչ դեր է վերապահուած ապագայ աշխարհում ազգութեան հարցին, որ նոյնպէս 19-րդ դարի ժառանգութիւն է: 19-րդ դարը նաեւ ազգութեան եւ ազգայնութեան դար էր: Գերման փիլիսոփայութիւնը, Ֆիխտէի եւ Շլեգելի ազդեցութեամբ, գիտականօրէն ձեւակերպեց ազգութեան խնդիրը, որ Ֆրանսական մեծ յեղափոխութիւնը հրապարակ էր դրել, իբրեւ ազգային ազատութիւնների պահանջ, եւ որ ազատամիտ մարդկութեան համար դարձել էր օրուայ քաղաքական նշանաբան: 19-րդ դարի յեղափոխութիւնները տեղի ունեցան ազգերի ազատութեան դրօշակի տակ: Թէ լիբերալ բուրժուազին եւ թէ աշխատաւոր զանգուածները ազգերի ազատութեան պահանջը իւրացրին ամենայն ջերմութեամբ եւ դարձրին իրենց քաղաքական դաւանանքի կէտերից մէկը: Նախագահ Ուիլսընը ազգերի ազատութեան հարցը դարձրեց «գործունէութեան հրամայական մի սկզբունք» – «իւրաքանչիւր ժողովուրդ իրաւունք ունի ընտրելու իրեն համար գերիշխանութիւն, որի ներքոյ ուզում է ապրել»: Այս սկզբունքը դարձաւ քաղաքական գործ Վերսայլի դաշնագրով եւ Ազգերի Դաշնակցութեան հիմնադրութեամբ, մասնաւորապէս Եւրոպայի մէջ: Վերսայլի դաշնագրի համաձայն Եւրոպայում եւ Ասիայում ստեղծուեցին ազգային նոր պետութիւններ եւ տեղի ունեցաւ սահմանների սրբագրութիւն, ցեղային միաւորներ ստեղծելու համար: «Եւրոպայի քաղաքական սահմանները Ուիլսընեան են, ասում է Եւրոպայի պատմութիւնը գրող Ֆիշէրը, եւ այնպէս են գծուած, որ եւրոպական մայր ցամաքի բնակչութեան 3%ը միայն ապրում է օտար տիրապետութեան տակ: Ինքնորոշման տեսակէտից եւրոպական նախկին ոչ մէկ սահման այսքան գոհացուցիչ չի եղել»:

Եւ, սակայն, ի՞նչ եղաւ արդիւնքը: Կատարեալ ձախողանք: Ի զուր է պատճառաբանելը, թէ այդ սահմանները գծուած էին ոչ թէ ազգային ինքնորոշման սկզբունքով, միայն նոր ստեղծուող պետութիւնների շահերը աչքի առաջ ունենալով, այլ յաղթական մեծ պետութեանց շահերի համար: Աւելորդ է ասել, թէ յետագային էլ մեծ պետութիւնները շատ բան արին իրենց իսկ ձեռքով շինուած տունը քանդելու համար: Փաստն այն է, որ ազգային ինքնորոշման սկզբունքի գործադրութիւնը ձախողեցաւ, եւ այդ ձախողութիւնը այսօր հիմք է դարձել ուրանալու ազգային անկախութեան արժէքը, եւ առհասարակ, դիւանագիտութեան շուկայից դուրս հանելու ազատազուրկ ազգերի ազատութեան պահանջը: Ապացոյց՝ Ատլանտեան Չարթըրի եզովպոսեան լեզուն եւ Չըրչիլի ու Ստալինի մաքիաւելական մեկնաբանութիւնները. Ատլանտեան Չարթըրը չի վերաբերում Նորին Բրիտանական Կայսրութեան հողերին. Ատլանտեան Չարթըրը չի վերաբերում նաեւ Խորհրդ. Միութեան: Չի վերաբերում, ի հարկէ, եւ Թուրքիային – «ազատատենչ» եւ «ասպետական» Թուրքիային – որ դաշնակից է Անգլիոյ ու Խորհրդ. Միութեան: Ո՞ւմ է վերաբերում հապա Ատլանտ-

եան Չարթըրը – Գերմանիոյ եւ Իտալիո՞յ: Բայց դրա համար ի՞նչ պէտք կար Չարթըր յօրինելու. նացիզմի ու ֆաշիզմի փլուզումից յետոյ արդէն իսկ նրանց լծի տակ գտնուող ազգերը պիտի ազատուէին:

Այսպէս թէ այնպէս, երեւոյթներից դատելով, ազգերի ազատութեան խնդիրը մեծ վտանգի տակ է: Դժուար է ենթադրել, որ պատերազմից յետոյ, եթէ ուժերի դասաւորութիւնը մնայ ինչ որ այսօր է, մի շարք ազգեր, ինչպէս բալտեան ազգերն են, վերստանան իրենց անկախութիւնը: Մի շարք ազգերի անկախութիւնն էլ կը լինի սահմանափակուած՝ շրջանային միութիւնների ստեղծումով: Ներկայ ժամանակների քաղաքական միտումը եւ քաղաքական «ռէալիզմը» աւելի խոշոր միաւորներ ստեղծելու մէջ են: Ո՛չ թէ նոր ազգային միաւորներ առաջ բերել, ինչպէս արաւ Վերսայլը, ո՛չ թէ գոյութիւն ունեցող մեծ միաւորներից առանձին ազգեր անջատել, ազգերի կորցրած անկախութիւնը վերականգնել, այլ եղած անկախութիւններն էլ, եթէ հնարաւոր լինի, կրճատել եւ աւելի խոշոր միաւորներ հաստատել: Վերսայլի ապակենտրոնացման տեղ կիրառել համախմբման ու կենտրոնացման քաղաքականութիւն:

Եւ, պէտք է ասել, իրերի տրամաբանութիւնը ա՛յդ ուղղութեամբ է զարգանում: 20-րդ դարը կենտրոնացման դար է, մեծ ուժերի եւ մեծ ձեռնարկների, համաշխարհային գործերի դար: Ազգային մեկուսացումներն ու առաջուայ իմաստով անկախութիւններն այլեւս անհնար են: Արդէն այսօր էլ անկախ պետութիւն գրեթէ գոյութիւն չունի: Փոխադարձ կախումը ակներեւ է նոյնիսկ Անգլիոյ եւ Ամերիկայի պէս պետական վիթխարի ուժերի համար, իսկ միջակ ու փոքր պետութիւնները ամբողջապէս խաղալիք են միջազգային քաղաքական տարերքի ձեռքին:

Նոր ժամանակների անկախութիւնը սահմանափակ անկախութիւն է լինելու: Ազգերի Դաշնակցութեան սնանկութիւնը պատճառ չի լինելու, որ միջազգային նոր մի միաւորի գաղափարը վերանայ: Ընդհակառակը՝ Ազգ. Դաշնակցութեան թերութիւնները պիտի սրբագրուին եւ ազգերը աւելի սերտօրէն միացնող մի կազմակերպութիւն պիտի ստեղծուի:

Ինչո՞ւ ձախողեց Ազգ. Դաշնակցութիւնը: Ըստ իս, Ազգ. Դաշնակցութեան հեղինակները մի հիմնական սխալ էին արել. նրանք ուզեցին երկու անհաշտելի գաղափարներ հաշտեցնել իրար հետ – միջազգայնութիւնը եւ բացարձակ անկախութիւնը: Ուիլսընեան գաղափարախօսութիւնն էր՝ ամէն ազգ իրաւունք ունի բացարձակ անկախութեան եւ ազգային գերիշխանութեան: Այս գաղափարը իւրացնելով՝ եւրոպական պետական մարդիկ օգտագործեցին նրան իրենց նեղ ազգային շահերի համար, եւ Ազգ. Դաշնակցութեան կանոնագրից դուրս ձգեցին այն ամէնը, որ կարող էր նկատել ազգային գերիշխանութեան ժխտում: Որով Ազգ. Դաշնակցութիւնը դարձաւ անբովանդակ եւ անշունչ մի մարմին եւ չկարողացաւ կատարել իր դերը՝ չնայած որ ժամանակները անհրաժեշտ էին դարձնում նրա գոյութիւնը: Ազգութեան պրիմատը կործանեց միջազգայնութեան սկզբունքը:

Այսօր այդ սխալը թւում է գիտակցուած: Ազգ. Դաշնակցութեան պէս մի կազմակերպութեան մասին վէճ չկայ.

ամէնքը ընդունում են նրա պէտքը պատերազմից յետոյ: Այս անգամ, սակայն, անհրաժեշտ է նկատում ազգային գերիշխան իրաւունքներն ու շահերը ստորադասել միջազգային իրաւունքներին ու շահերին:

Նոր Ազգ. Դաշնակցութիւնը նախատեսւում է իբրեւ պետութիւնների պետութիւն, գերպետութիւն, որ իր մէջ պէտք է ունենայ պետութեան բոլոր ստորոգելիները, միջազգային գետնի վրայ, եւ իրեն պիտի ենթարկէ ազգային պետութիւնները: Այս անգամ էլ փայտը հակառակ ուղղութեամբ է ծռւում – նախկին ազգայնականութեան տեղ ծայրայեղ միջազգայնականութիւն: Հետաքրքրական է հետեւիլ այս նիւթին վերաբերեալ նոր գրականութեան – ինչքա՜ն հակառակ է նա առաջին համաշխարհային պատերազմի օրերի գրականութեան: Կաթից այրել են բերանը, այժմ մածունին էլ են փչում...

Ենթադրելով, որ պատերազմը պիտի վերջանայ Միացեալ Ազգերի յաղթանակով եւ ենթադրելով նաեւ, որ Խորհրդ. Միութիւնը պիտի մնայ դաշնակից Միացեալ Ազգերի (թէեւ այս կէտը ինձ համար դեռ որոշ չէ. հնարաւոր է Միացեալ Ազգերի յաղթութիւն եւ Խորհրդ. Միութեան պարտութիւն)՝ կարելի է ասել, թէ, պատերազմից յետոյ ստեղծուելիք նոր աշխարհի մէջ ազգութեան հարցը այլեւս առաջնակարգ տեղ չի գրաւելու, ինչպէս գրաւեց առաջին համաշխարհային պատերազմից յետոյ: Այս անգամ փոքր ազգերը բաց ու համարձակ կերպով պիտի զոհուին մեծերի շահերին. ի հարկէ, միշտ յանուն բարձր գաղափարների: Այս պարագան չի կարող անհանգստութեամբ ու վշտով չլեցնել ամէն մի գիտակից հայի սիրտը:

Ի՞նչ պիտի լինի մեր «փոքր ածու»-ի վիճակը: Ինչի՞ պէտք է ձգտենք մենք, ինչո՞վ պէտք է առաջնորդուինք, ի՞նչը պէտք է համարենք լաւագոյն ելք հայ ժողովրդի եւ Հայաստանի համար:

Հայութեան մէջ այսօր տիրող են երկու հիմնական տեսակէտներ եւ սրանց համեմատ երկու հիմնական քաղաքական ուղղութիւններ, հակառակ որ հայ քաղաքական միտքը դեռ եւս խարխափումների մէջ է եւ վերջնականապէս բիւրեղացած չէ.–

Ա.- Միացեալ եւ Անկախ Հայաստան:

Բ.- Միութիւն Ռուսաստանի հետ:

Այս երկու բեւեռների շուրջ է համախմբուած հայ քաղաքական միտքը եւ նրանց շուրջ տեղի է ունենում գաղափարական պայքար:

Քսան տարի առաջ եւ նոյնիսկ մինչեւ ներկայ պատերազմի նախօրեակին, այս տեսակէտների տեսակարար կշիռը բոլորովին տարբեր էր այսօրուայ համեմատութեամբ: Այն ժամանակ նախատեսւում էր նախ՝ Թուրքիոյ մի նոր անդամահատում եւ ոչ-թրքական հողերի անջատում: Բացի այդ, Խորհրդ. Միութեան դրութիւնն էլ անկայուն էր. անհնարին չէին նոր ցնցումներ ու նոր փլուզումներ եւ, հետեւաբար, նաեւ ենթակայ ազգերի ազատագրում: Միացեալ եւ Անկախ Հայաստանի պահանջը բխում էր երկրի առարկայական հանգամանքներից, բնական էր եւ անհրաժեշտ: Ընդհակառակը, անտեղի էր սկզբունքային «ռուսական» քաղաքականութիւնը, Հայաստանի ճակատագիրը ընդմիշտ Ռուսաստանի հետ կապելու պահանջը: Ինքը Ռուսաստանը գոյութեան պայքար էր մղում եւ անորոշութեան առջեւ էր կանգնած, խելացութիւն չէր Հայաստանի բախտը յարատեւօրէն կապել այդպիսի անորոշ եւ անկայութիւն ուժի հետ:

Բացի այդ՝ Ռուսաստանի հետ կապելով Հայաստանի ճակատագիրը՝ անկարելի էր դառնում թրքահայկական հողերի կցումը Հայաստանին: Նախ՝ Ռուսաստանը ինքը այդպիսի կարելիութիւն չունէր եւ հարկադրուած էր անվերջ սիրաշահել ու զիջումներ անել Թուրքիային: Երկրորդ, Ռուսաստանի միջազգային դիրքը այնպէս էր, որ դժուար էր երեւակայել, որ իրեն թոյլ կը տրուի «նուաճել» թրքահայկական հողերը:

Վերջապէս, կար եւ մի այլ կարեւոր հանգամանք. ազգերի անկախութեան սկզբունքը դեռ եւս իր ուժի մէջ էր. ո՛չ

ոք չէր համարձակւում ժխտել ազգերի անկախութեան իրաւունքը եւ նաեւ՝ Հայաստանի անկախութեան իրաւունքը:

Միացեալ եւ անկախ Հայաստանի պահանջը կենդանի գաղափար էր: Անկախ Հայաստանի գոյութիւնը կը դիւրացնէր եւ Թրքահայաստանի խնդիրը: Թուրքահայ հողերի կցումը Հայաստանին աշխարհակալութիւն եւ նուաճում չէր լինի, այլ բնական եւ արդար կարգադրութիւն:

Այս իսկ պատճառով Միացեալ եւ Անկախ Հայաստանի պահանջը թէ միջազգային գետնի վրայ եւ թէ հայ ժողովրդի աչքին քաղաքական կենդանի ծրագիր էր, որի իրագործումը կախուած էր դիրքերի նպաստաւոր դասաւորումից: Եւ նոյն պատճառով Հայաստանի միութիւնը Ռուսաստանի հետ անբնական եւ անիմաստ գաղափար էր՝ հանդուրժելի իբրեւ հարկադրանք, բայց ոչ քաղաքական ազգային ծրագիր:

Ներկայ պատերազմը հիմնիվեր ձեւափոխեց կացութիւնը: Խորհրդ. Միութիւնը չկործանուեց, այլ ամրացաւ եւ միջազգային քաղաքականութեան մէջ ստացաւ առաջնակարգ արժէք (գէթ մինչեւ այժմ այդպէս է): Թուրքիան չանդամահատուեց եւ դարձաւ «դէմոկրասիի ջատագով», «ասպետական» ազգ, բարեկամ Միացեալ Ազգերի եւ ի պատուի, մասնաւորապէս, Անգլիոյ եւ Ամերիկայի աչքին: Եթէ նոր դէպքեր տեղի չունենան եւ ներկայ կացութիւնը չփոխուի, այս երկու փաստերն իսկ բաւական են, որպէսզի հարկադրեն մեզ լրջօրէն վերաքննելու մեր քաղաքականութիւնը:

Այդ հարկադրանքի տակ ենք եւ վերեւ մատնանշուած այն պատճառներով, որ, առհասարակ, ազգային անկախութիւնների խնդիրը այսօր այլեւս այն դերը չունի, ինչ որ ունէր առաջ: Դժուար է երեւակայել, որ Անգլիա ու Ամերիկա այսօր Հայաստանի անկախութեան խնդիր դնեն խաղաղութեան իրենց ծրագրի մէջ, երբ Անգլիան արդէն հրաժարուել է բալտեան պետութիւնների անկախութեան պահանջից, եւ Ռուսաստանին carte-blanche է տուել սահմանային խնդիրները լուծելու սեփական հայեցողութեամբ ու սեփական միջոցներով:

Բայց ենթադրենք մի որպէ անկարելին, որ Անգլիային վերապահուած լինի հայկական հարցի լուծումը, այսօրուայ պայմաններում ի՞նչ կարելի է ակնկալել նրանից: Անկախութի՞ւն: Ոչ երբեք: Դեռ Հայաստանի անկախութեան շրջանին անգլիական կառավարութիւնը ոգի ի բռին ջանաց միացնել Անդրկովկասեան երեք ժողովուրդները եւ Հայաստանից, Վրաստանից ու Ազրբեջանից ստեղծել քաղաքական մէկ միաւոր՝ Անդրկովկասեան համադաշնակցութիւն: Լաւագոյն դէպքում այսօր էլ նոյնը պիտի անէր: Հայաստանը առանձինն նրան չի կարող հետաքրքրել. Անդրկովկասը կամ Կովկասը, իբրեւ միացեալ ոյժ, արժէք են նրա համար թէ՛ որպէս պատուար ռուսական ծաւալման դէմ եւ թէ որպէս հում նիւթերի շտեմարան (քարիւղ, մանգանէզ, պղինձ եւայլն) եւ թէ, ի հարկէ, որպէս շուկայ:

> *Ռուսական տիրապետութեան տակ հայը միշտ մեկուսացած է եղել իր հարեւաններից: Այդ մեկուսացումը մենք տեսանք եւ անկախութեան շրջանում, որից շատ տուժեց հայութիւնը: Ոմանք այդ փաստը վերագրում են հայերի բնաւորութեան – մարդկանց հետ վարուել չգիտցող ազգ ենք: Ուրիշներ՝ մեղադրում են հայկական ղեկավարութիւնը, որ չկարողացաւ բարեկամութիւն հաստատել հարեւանների [հետ]: Սրանք մակերեսային ու անհիմն դատողութիւններ են: Հայը վանողական բնաւորութիւն չունի եւ բոլոր ժողովուրդների պէս ժողովուրդ է: Հայ ղեկավարութիւնն էլ տարբեր չէ, քան որեւէ ազգի ղեկավարութիւն: Հայերի մեկուսացման պատճառը արտաքին եւ պատմական է...*

Անդրկովկասեան Դաշնակցութեան ծրագիրը, ինչպէս յայտնի է, օրօրում է եւ Գերմանիան, գէթ պատերազմից առաջ այդպիսի խօսակցութիւններ կային եւ գրեթէ նոյն նկատումներով, ինչ որ է Անգլիան:

Հայ ժողովուրդը ժամանակին հակառակեց Վանսզեդարդի[?] հետապնդումներին, հակառակ եղաւ եւ գերմանա-

կան ծրագիրներին, թէեւ իր հարեւանները գրաւուեցան գերմանական խայծով. ենթադրում եմ, որ վաղն էլ համակրանքով չպիտի վերաբերուի, եթէ ուրիշ որեւէ կողմից գայ նման ծրագիր:

20 Օգոստոս, Նանթասքէթ.– Շարունակենք քննել վերի հարցը:

Հայ ժողովրդի մէջ չկայ եւ ո՛չ մի հոսանք, որ սրտանց կողմնակից լինէր Կովկասեան Դաշնակցութեան: Ինչո՞ւ:

Ըստ իս, բացատրութիւնը երկու կէտերի մէջ է.– 1) աշխարհագրութիւն եւ 2) ազգային վիճակ:

Պատմական բախտը մեզ դրել է այնպիսի մի տեղ, ուր ոչ կարեւոր բնական հարստութիւններ կան, ոչ էլ հաղորդակցութեանց միջոց: Մինչ Ազրբեջանը ունի հարուստ քարիւղի հանքեր եւ Վրաստանը մանկանէզ եւ լայն ծովային ելք դէպի արտաքին աշխարհ, Հայաստանը զուրկ է ե՛ւ առաջինից, ե՛ւ երկրորդից եւ տնտեսական տեսակէտից կախուած պիտի լինի Ազրբեջանից ու Վրաստանից՝ ստորադաս վիճակի մէջ: Աւելին. հայը պիտի աշխատի Ազրբեջանի ու Վրաստանի համար. իւր նախաձեռնութեան ու շինարարութեան խոշոր մասը պիտի յատկացնէ այդ երկրներին, ինչպէս անցեալում. նորէն հայերի ձեռքով պիտի ծաղկին Թիֆլիսն ու Բագու, եւ Երեւանը պիտի մնայ երեսի վրայ:

Երկրորդ՝ հայութիւնը Անդրկովկասում ցրուած է, մինչ ազրբեջանցին ու վրացին նստած են իրենց սեփական հողի վրայ: Կովկասի հայութեան հազիւ կէսը ապրում է Հայաստանում, մնացեալը ցրուած է Վրաստանում ու Ազրբեջանի եւ Կեդրոնական Կովկասում: Վրաստանի եւ Ազրբեջանի մօտ 800,000 հայութիւնը պիտի աշխատին վրաց եւ ազերի հայրենիքները շէնացնելու եւ ոչ իրենց մայր-հայրենիքը՝ Հայաստանը:

Չպէտք է մոռանալ եւ այն փաստը, որ հայ ժողովուրդը, չնայած որ իր ամբողջ թուով աւելի է, քան ազերին ու վրացին առանձին-առանձին, Կովկասում երրորդ տեղն է բռնում իր թուով: Ուրիշ խօսքով, թուական տեսակէտից էլ ստորադաս է լինելու Ազրբեջանին ու Վրաստանին:

Վերջապէս, մոռանալու չէ եւ մի ուրիշ կարեւոր փաստ.

Հայաստանը միշտ գրկուած վիճակի մէջ է: Ամենեն աղաղակող փաստը այդ տեսակէտից՝ Ղարաբաղի, Ախալքալաքի պարագան: Ո՛չ մի բանով, ևս առաւել կոմունիստական վարդապետութեամբ ու խորհրդային պետական կարգով կարելի չէ արդարացնել Ղարաբաղի կցումը Ազրբեջանին, կամ Ախալքալաքի կցումը Վրաստանին, բայց կցուած են: Դարձեալ ոչնչով կարելի չէ պատճառաբանել Նախիջևանի միացումը Ազրբեջանին, որի հետ նոյնիսկ ընդհանուր սահման չունի և հաղորդակցում է Հայաստանի վրայով, բայց միացուած է: Ինչո՞ւ:

Ռուսական տիրապետութեան տակ հայը միշտ մեկուսացած է եղել իր հարեւաններից: Այդ մեկուսացումը մենք տեսանք եւ անկախութեան շրջանում, որից շատ տուժեց հայութիւնը: Ոմանք այդ փաստը վերագրում են հայերի բնաւորութեան – մարդկանց հետ վարուել չգիտցող ազգ ենք: Ուրիշներ՝ մեղադրում են հայկական ղեկավարութիւնը, որ չկարողացաւ բարեկամութիւն հաստատել հարեւանների [հետ]: Սրանք մակերեսային ու անհիմն դատողութիւններ են: Հայը վանողական բնաւորութիւն չունի եւ բոլոր ժողովուրդների պէս ժողովուրդ է: Հայ ղեկավարութիւնն էլ տարբեր չէ, քան որեւէ ազգի ղեկավարութիւն: Հայերի մեկուսացման պատճառը արտաքին եւ պատմական է. վրացիների եւ ազերիների աչքին հայերը ջանացել են ռուսներին բերել Կովկաս եւ պատճառ դառնալ, որ Ազրբեջանի իշխանութիւնները եւ Վրաստանը կորցնեն իրենց անկախութիւնը: Ամբողջ ցարական տիրապետութեան շրջանին Կովկասում՝ ազե-

րիներն ու վրացիները երազել են վերահաստատել իրենց երկրների անկախութիւնը, այդ նպատակով քաղաքական քայլեր են կատարել, ապստամբութիւններ են սարքել: Գէթ ազերիների համար Թուրքիան նկատուել է դրական, փըրկարար գործօն իրենց դատի համար: Հայերն, ընդհակառակը, ոգի ի բռին ջանացել են «խաչապաշտ թագաւորի» տիրապետութիւնը տեւական ու հաստատուն դարձնել Կովկասում: Այդքա՜նն էլ հերիք չէ. ջանացել են թրքահայ հողերն էլ միացնել Կովկասին կամ ռուսական տիրապետութիւնը տարածել դէպի Թուրքիա՝ ստեղծելով ինքնավար Թրքահայաստան ռուսական հովանաւորութեան տակ:

Այս տարամերժ ձգտումները, ազգային ներհակ շահերն ու քաղաքական ճիգերը խոր վիհ են բաց արել հայերի եւ վրացիների, բայց, մանաւանդ, հայերի եւ ազերիների միջեւ եւ պատճառ դարձել անցեալի մի շարք տխուր դէպքերի, նոյնիսկ արիւնոտ ընդհարումների: Ստեղծուել է առանձին մի մտավիճակ, ըստ որի ազերին ու վրացին բնական դաշնակիցներ են եւ հայը, լաւագոյն դէպքում, անվստահելի դաշնակից: Այդ մենք տեսանք հայ-թաթարական ընդհարումների ժամանակ 1905-ին, երբ վրացիք եւ ազրպէյճանցիք միացեալ ճակատ էին կազմում հայերի դէմ: Տեսանք ռուսական յեղափոխութեան ժամանակ, 1917-18-ին, երբ վրացի սոցիալ-դեմոկրատները եւ ազերի բէգերը ձեռք-ձեռքի ելան հայերի դէմ, մանաւանդ, գիւղացիական համագումարներում եւ բանուորական ու գիւղացիական խորհուրդներում: Տեսանք Սէյմում եւ Բաքումի հաշտութեան խորհրդաժողովում, երբ վրացիներն ու ազերիները համախորհուրդ դաւեցին հայերի դէմ (Տես Աւալաշվիլիի գիրքը) եւ ի վերջոյ կործանեցին Անդրկովկասի միութիւնը եւ իրենց երկրները յայտարարեցին անկախ՝ ապաւինելով մէկը Գերմանիային, իսկ միւսը՝ Թուրքիային՝ ձգելով հայերին մահացու վտանգի առջեւ:

Նոյն երեւոյթը տեսնում ենք եւ խորհրդային տիրապետութեան շրջանում. վրացի եւ ազերի բոլշեւիկների բլոկը իրական փաստ է, ինչպէս իրական փաստ է եւ հայերի մեկուսացումը: Հայաստանը միշտ զրկուած վիճակի մէջ է: Ամենեն աղաղակող փաստը այդ տեսակէտից՝ Ղարաբաղի, Ախալքալաքի պարագան: Ո՛չ մի բանով, եւս առաւել կոմունիստական վարդապետութեամբ ու խորհրդային պետական կարգով կարելի չէ արդարացնել Ղարաբաղի կցումը Ազրբեջանին, կամ Ախալքալաքի կցումը Վրաստանին, բայց կցուած են: Դարձեալ ոչնչով կարելի չէ պատճառաբանել Նախիջեւանի միացումը Ազրբեջանին, որի հետ նոյնիսկ ընդհանուր սահման չունի եւ հաղորդակցում է Հայաստանի վրայով, բայց միացուած է: Ինչո՞ւ: Որովհետեւ այդպէս են ուզում վրացին եւ ազերի բոլշեւիկները, հակառակ հայ բոլշեւիկների: Ազգային հակամարտութիւնը եւ հայերի մեկուսացումը խորհրդային իշխանութեան օրով էլ փաստ են, թերեւս, նախկին ձեւերն են փոխուած:

Ներկայ պայմաններում ընդունել Անդրկովկասեան Դաշնակցութիւն՝ նշանակում է Հայաստանը դնել «ստորադաս վիճակի մէջ, ի քմահաճ տնօրինութիւն ազերի ու վրացի ազգայնականների եւ հայութիւնը ճղակոտոր անել, տնտեսապէս ու մշակոյթով տկարացնել: Եթէ վրացիների եւ ազերիների համար Անդրկ. Դաշնակցութիւնը նկատւում է օգտակար եւ յառաջադիմական քայլ, հայերի համար նա կը լինի՝ յետադիմական եւ վնասակար: Այդ է պատճառը որ, ինչպէս ասացի, հայերի մէջ չկայ ոչ մի լուրջ քաղաքական հոսանք, որ սրտանց կողմնակից լինի Անդրկ. Դաշնակցութեան: Երբեմն այդ իմաստով արտայայտութիւններ լինում են եւ նոյն իսկ քաղաքական քայլեր են կատարուած, բայց դրանք եղել են եւ լինում են՝ կամ դէպքերի հարկադրանքի տակ, կամ առերեսս՝ որոշ հաշիւներով, բայց կարող եմ վստահօրէն պնդել, որ Անդրկ. Դաշնակցութեան համակրող, հայերի համար բարիք համարող շատ քիչ մարդ կայ մեր մէջ:

Եթէ անկախութիւնը առարկայօրէն դժուարութիւնների է բախում ո՛չ հայ ժողովրդի կամքով, այլ արտաքին պայմանների հետեւանքով, եթէ Անդրկ. Դաշնակցութիւնը օգտակար չէ հայ ժողովրդի համար, ի՞նչ ցանկալի ելք է մնում, ուրեմն, մեզ համար:

Այս դէպքում ինձ օգնութեան է գալիս իմ «ռուսասիրութիւնը»:

Իմ անհատական տարերքը միշտ էլ կազմել է հայութիւնը եւ ռուսութիւնը միաժամանակ: Իմ մանկութիւնը անցել է ռուսների մէջ. եղել է ժամանակ, երբ ես նոյնիսկ հայերէն չգիտէի եւ իբր մայրենի լեզու գործ էի ածում ռուսերէնը: Առաջին գիրքը, որ ես կարդացել եմ, եղել է Գոգոլի Տարաս Բուլբան՝ ռուսերէն, ապա՝ Լեւ. Տոլստոյի «Կնեազ Սերեբրեանոյ»[1], ապա Զագոսկինի ռուս պատմական վէպերը, Պուշկին, Լերմոնտով, Տուրգենեւ: Յաճախել եմ ռուսական եկեղեցին. ես երգել եմ ռուս եկեղեցու երգչախմբի մէջ: Ռուսական դպրոցից եմ սկսել իմ կրթութիւնը: Ռուս մշակոյթով է սկսուած իմ հոգեկան ու մտաւոր կազմակերպումը՝ ռուսերէն հեքիաթով ու երգով, ռուս արձակ ու բանաստեղծական գրականութեամբ:

Յետոյ արդէն եկել է հայկականը՝ հայ դպրոցն ու հայերէն գիրքը, Րաֆֆին ու Սասունը: Եւ երկար ժամանակ հայութիւնը մէջս մնացել է իբրեւ վերնախաւ. հիմքում եղել է ռուսութիւնը, մինչեւ որ հայութիւնը վերջնական յաղթանակ է տարել եւ ես դարձել եմ հարիւր տոկոսով հայ, միաժամանակ եւ խորունկ յարգանք տածելով դէպի ռուսութիւնը՝ ռուս ժողովուրդն ու ռուս մշակոյթը, մինչեւ այսօր էլ: Այսօր եւս ես չեմ կարողանում առանց յուզումի լսել ռուսական երգը, եւ ամբողջ հոգիով զգում եմ ռուսական արուեստի գեղեցկութիւնն ու հարազատութիւնը հոգիիս, յաճախ նոյնչափ եւ, խոստովանում եմ, նոյն իսկ աւելի, քան հայկական երգն ու արուեստը:

Այս ես ասում եմ նրա համար, որ որեւէ կասկած չմնայ իմ ապրումների եւ մտածումների մասին ռուսութեան եւ Ռուսաստանի մասին: Հակառակ դրան, եղաւ մի ժամանակ, մասնաւորապէս 1920-ի Մայիսեան ապստամբութիւնից յետոյ, երբ իմ հոգին ու միտքը ընդվզեցին Ռուսաստանի դէմ: Ես այսօր էլ դեռ չեմ կարողանում հանդարտ մտքով մտածել այն բոլոր չարիքների մասին, որ Ռուսաստանը հասցրեց մեզ: Կարող էր չհասցնել եւ հասցրեց: Հայ ժողովրդի վիճակը բոլորովին տարբեր կը լինէր, եթէ Ռուսաստանը գէթ որոշ ժամանակի համար հաշտուէր Հայաստանի անկախութեան հետ, ինչպէս վարուեց Բալտեան երկրների վերաբերմամբ:

Այդ դէպքում Հայաստանը կ'ապրէր իբրեւ անկախ պետութիւն, սահմանները կ'ընդարձակուէին, տարագիր հայութեան մեծ մասը կը վերադառնար հայրենիք, եւ Հայաստանը կը դառնար Անդրկովկասեան երկրներից մեծագոյնը եւ աւելի զօրաւորը: Այնուհետեւ նորէն թո՛ղ խորհրդայնանար, ինչպէս խորհրդայնացան Էստոնիան, Լատվիան ու Լիտվանիան, բայց Հայաստանը արդէն կը լինէր իր ազգային սահմանների մէջ ամփոփուած, ժողովրդի մեծ մասով հայրենի հողի վրայ տեղաւորուած, շէն ու յառաջանալու ընդունակ մի երկիր: Ռուսաստանը այդ բոլոր կարելիութիւններից զրկեց մեզ եւ Հայաստանի անկախութեան խորտակումից մինչեւ այսօր անիրաւեց մեզ: Դրա դէմ չէր կարող չընդբոստանալ իմ խիղճն ու բանականութիւնը: Անշուշտ, կարելի է ասել, որ ռուս ժողովուրդն ու ռուս մշակոյթը մեղք չունեն այդ բանում, բայց խորհրդային իշխանութեան արածների համար ռուս ժողովուրդը մեղք չունի, ցարական իշխանութիւն-

Սարգիս Սրապիոնեան-Լուկաշին

ների համար մեղք չունի, ո՞րն է հապա այդ մեծ ժողովուրդի մեծ գործը, կամ ի՞նչ ուժի վրայ յենուելով է, որ այդ իշխանութիւնները չարիք էին գործում: Լուրջ մտածելիք հարց է այս: Յամենայն դէպս, մի բան անվիճելի է, եթէ քառորդ դար խորհրդային իշխանութիւնը մնաց կանգուն եւ այսօր կարողանում է վարել մեծագոյն պատերազմներից մէկը համազգային ճակատով, նշանակում է սխալ էր մեր տեսութիւնը, թէ նա արմատներ չունի ժողովրդի մէջ: Անհաշիւ խարխափումներից, սխալներից ու ոճիրներից յետոյ՝ խորհրդ. իշխանութիւնը այսօր աւելի եւս մօտեցել է ռուս ազգային զարկերակին եւ համակւում է ռուսութեան ազգային տարերքով: Իսկ ռուսական տարերքի ցայտուն յատկանիշներից մէկն էլ բնազդական ձգտումն է ծաւալման դէպի այն բնական հանգրուանները, որոնք շնչերակներ են կազմում ռուսական վիթխարի թոքի համար՝ Բալտեան ծով, Սեւ ծով, Միջերկրական, Հնդկաց ովկիանոս եւայլն: Եթէ Խորհրդ. Միութեան (կրկնում եմ՝ եթէ) վիճակուած է կանգուն եւ զօրաւոր մնալ այս պատերազմից յետոյ) եւ իրական ուժակից ու դաշնակից Անգլիոյ եւ Ամերիկայի, ռուս ազգային ձգտումների մէկ կարեւոր մասը կ'իրականանայ, եւ ինչո՞ւ չենթադրել, որ «սրբագրութիւններ» տեղի ունենան եւ հարաւային սահմաններում, հայկական նահանգների ուղղութեամբ: Ըստ իս, այդ անկարելիութիւն չէ: Այստեղ չեմ կարող չյիշել իմ խօսակցութիւնը, տարիներ առաջ, ֆրանս-գերմանական սահմանի վրայ մի շատ կարեւոր հայ բոլշեւիկի հետ՝ իմ մօտիկ ընկեր եւ այն ժամանակ կառավարութեան անդամ: Բառացի յիշում եմ նրա խօսքերը. «Խելքդ վրադ պահիր, այն ինչ որ դուք չյաջողեցիք անել, մենք պիտի անենք. մենք պիտի գրաւենք Թրքահայաստանը, պիտի միացնենք Խորհրդ. Հայաստանին եւ պիտի դառնանք Կովկասում ամենամեծ եւ զօրաւոր երկիրը»: Ճիշտ է, նրան էլ «մաքրեցին» եւ ես չգիտեմ՝ ողջ է նա, թէ մեռած, դրա համար էլ անունը չեմ տալիս, բայց հաւատում եմ նրա ասածներին(2): Հաւատում եմ, որ հայ բոլշեւիկներն էլ, մեզ պէս, ուզում են լայնացնել Հայաստանի սահմանները. այդ բանը ես լսել եմ եւ ուրիշ պատասխանատու հայ բոլշեւիկներից: Եւ եթէ լսած էլ չլինէի, բնական ու հաւատալի է նրանց ցանկութիւնը: Բայց այլ է ցանկանալ, այլ է կարենալ: Հայ բոլշեւիկները Ղարաբաղն էլ ուզում էին միացնել Հայաստանին, բայց միացրի՞ն: Քանի՞ հայ բոլշեւիկ իր գլուխը կորցրեց Ղարաբաղի համար:

Առարկայօրէն, սակայն, իմ ընկեր բոլշեւիկի ասածը ես գտնում եմ բնական ու տրամաբանական. որեւէ զօրաւոր Ռուսաստան չպիտի հաշտուի թուրքի ներկայութեան հետ Արաքսի եւ Ախուրեանի ափերին: Եթէ Էստոնիան ռազմական անհրաժեշտութիւն է Լենինգրատի ապահովութեան համար, Բագուի եւ Բագու-Բաթում գծի ապահովութիւնը պակաս կարեւոր չէ Ռուսաստանի համար, իսկ Ճորոխ-Ախուրեան-Արաքս սահմանագիծը բնաւ չի երաշխաւորում Բագու-Բաթումի ապահովութիւնը: Հարաւային Կովկասի սահմանների «սրբագրութիւնը» կենսական անհրաժեշտութիւն է որեւէ զօրաւոր Ռուսաստանի համար, թէկուզ, այդ Ռուսաստանը կրէ Խորհրդ. Միութիւն ծածկանունը:

Եւ ահա, ուրեմն, մենք գալիս ենք այն բնական եւ տրամաբանական եզրակացութեան, որ անխուսափելի կերպով բխում է երկրի առարկայական պայմաններից, ինչպէս ձագը դուրս է գալիս հաւկիթից – Հայաստանը կապուած Ռուսաստանի հետ*):

Լաւ է այս, թէ վատ – տարբեր խնդիր: Մեր աշխարհագրական դիրքը եւ պատմական հանգամանքները մեզ նորից վերադարձնում են դէպի մեր պապերի որդեգրած քաղաքական ուղին՝ դէպի Ռուսաստանը, կամ, նոր անունով, Խորհրդ. Միութիւնը:

21 Օգոստ., Նանթասքէթ.– Փաստօրէն մենք արդէն վաղուց Ռուսաստանի ճամբու վրայ ենք: Եւ այդ է պատճառը, որ մենք, հակառակ որ յուսացել ու նեցուկներ ենք փնտռել Եւրոպայում, միշտ էլ մէկ աչքով նայել ենք դէպի Մոսկուա եւ ամէն առիթից կառչել ենք՝ շահելու համար Խորհրդ. իշխանութեան բարեացակամութիւնը մեր դատի վերաբերմամբ: Այդ նպատակով մենք Ջենովա գնացինք տեսնուելու համար Չիչերինի հետ: Այդ նպատակով մենք դիմումներ արինք

(Լեռնեանի[3] միջոցով) Փարիզի դեսպան Ռակովսկիին: Այդ նպատակով փնտռել ենք խորհրդային ներկայացուցիչների բարեացակամութիւնը ժընեւում, Ազգ. Դաշնակցութեան մօտ: Այդ նպատակով Վ. Նաւասարդեանը փորձ արաւ տեսնուելու Անաստաս Միկոյեանի հետ, Ամերիկայում, որ զաւեշտական վախճան ունեցաւ: Այդ նպատակով ես էլ մէկէ աւելի տեսակցութիւններ եմ ունեցել շատ պատասխանատու եւ իշխանութեան մէջ գտնուող հայ բոլշեւիկների հետ: Ի՞նչ էր մեր փնտռածը.– Ո՛չ թէ շնորհ կամ առաւելութիւն կուսակցութեան համար, այլ միշտ միեւնոյն բանը – Հայաստանի սահմանների խնդիր. թրքահայ հողերի կցումը Հայաստանին եւ արտասահմանի հայութեան ներգաղթ դէպի Հայաստան:

Իսկ Խորհրդային Միութեան մասնակցութեամբ ներկայ պատերազմին՝ Դաշնակցութեան համար կուսակցական քաղաքականութիւն դարձաւ՝ «Տէմոկրասիի միջոցով Սովետների հետ» նշանաբանը: Ըստ իս յաջող ձեւակերպում չէ սա եւ, եթէ կ'ուզէք, կեղծիք կայ մէջը, կա՛մ, աւելի ճիշտ, կարող է մեկնաբանուել իբրեւ կեղծիք: Երբ մեր Բիւրօն յայտարարում է Խորհրդ. իշխանութեան, թէ ինքը ամբողջապէս կանգնում է հայրենիքի պաշտպանութեան գետնի վրայ, դադարեցնում է գաղափարական պայքարը բոլշեւիզմի դէմ եւ պատրաստ է ամէն միջոցով օգնելու Խորհրդ. կառավարութեան պատերազմական ճիգին – տրամաբանօրէն սա նշանակում է մենք Խորհրդ. իշխանութեան հետ ենք: Էլ ի՞նչ «Տէմոկրասիի միջոցով»: Մենք պարզ ու որոշ Խորհրդային իշխանութեան հետ ենք, թեեւ Խորհրդ. իշխանութիւնը դեռ մեզ հետ չէ:

Սխալ կը լինէր պնդել, թէ մեր Բիւրոյի այս քայլը լոկ պատերազմի արդիւնք է եւ ապագայի հաշիւներից զուրկ է: Գուցէ չգիտակցուած, բնազդական, բայց իրապէս արտայայտութիւն է այն առարկայական վիճակի եւ որոշ չափո՛վ նաեւ ստեղծուած մտայնութեան, իբրեւ հետեւանք միջազգային նոր պայմանների եւ ուժերի նոր դասաւորութեան: Պարզ է, որ մենք Խորհրդ. Միութեան եւ Խորհրդ. իշխանութեան մասին այնպէս չենք մտածում, ինչպէս մտածում էինք երէկ: Պարզ է նաեւ, որ այսօր Խորհրդ. Միութիւնը այլեւս դրական գործօն է, կամ մենք ուզում ենք, որ լինի դրական գործօն հայկական դատի համար:

Ուրեմն, ո՛չ միայն իմ անձնական, այլեւ Դաշնակցութեան քաղաքականութիւնն էլ այսօր pro-Խորհրդային է: Հայաստանի եւ հայկական դատի ճակատագիրը կապուած է Խորհրդ. Միութեան հետ: Խորհրդ. Միութեան քաղաքականութեան սահմաններում պէտք է փնտռել հայկական դատի լուծումը:

Այստեղ ցցւում է մի հոգեբանական կէտ – կը կակղե՞ս՝ կ'ուտես, հա՞: Երէկ հակառակ էիք Խորհրդային իշխանութեան, հիմա բարեկա՞մ էք ուզում դառնալ: Մենք չէի՞նք ասում ձեզ նոյն բանը, դուք չէիք լսում մեզ:

Մանաւանդ, ռամկավարների քէֆին շատ պիտի գայ: Բոլոր տեսակի Նազարներն ու Հրաչ Երուանդները հրապարակը պիտի աղմկեն չարախնդութեամբ:

Մասնաւորապէս իմ աչքում այդ պարագան ո՛չ մի արժէք չունի: Բաւական է, որ իմ խիղճը մաքուր լինի, իսկ թէ ուրիշները ինչ կ'ասեն՝ ոչ մի նշանակութիւն չունի: Եւ, առհասարակ, ես իմ կեանքում երբեք չեմ առաջնորդուել ուրիշների ասածով. ինչ որ միտքս ու խիղճս ինձ թելադրել են, այդ եմ արել: Հիմա էլ նոյնը պիտի անեմ. պիտի ծաղրե՞ն, հակասութիւնն՞ե՞ր պիտի փնտռեն – յիմար խօսք, թո՛ղ ծաղրեն ու փնտռեն:

Եւ ի՞նչ բան է հակասութիւնը քաղաքականութեան մէջ: Քաղաքականութիւնը պատեհապաշտութիւն է. եւ պատեհապաշտութիւնը հակասութիւնների շղթայ է: Քաղաքականութեան մէջ անյեղլի օրէնքներ եւ բացարձակ ճշմարտութիւններ չկան: Ինչ որ երէկ ճշմարիտ էր, այսօր կարող է լինել սխալ, եւ ընդհակառակը: Հակասութիւն չէ՞ Չըրչիլի արածը – երէկ կատաղի հակաբոլշեւիկ եւ Ստալինի թշնամի, այսօր մոլեռանդ բարեկամ Խորհրդային իշխանութեան ու Ստալինի: Վաղը կարող է նորից դառնալ թշնամի: Ինչո՞ւ: Ո՞ւր է ճշմարտութիւնը Չըրչիլի համար.– միայն եւ միմիայն

Անգլիայի ազգային շահը: Երէկ այդ շահը թելադրում էր հակառակութիւն խորհրդային իշխանութեան, այսօր՝ բարեկամութիւն:

Մեզի համար էլ միակ եւ բացարձակ ճշմարտութիւնը Հայաստանի եւ հայ ժողովրդի շահն են. մնացեալը քաղաքականութիւն է, օրուայ հաշիւ:

Մնաց որ ըստ էութեան էլ մեր հակառակորդները ուրախանալու ոչ մի պատճառ չունեն: Մեր եւ նրանց դիրքի մէջ հիմնական տարբերութիւն կայ. Ռամկավարները բոլոր պայմաններում Ռուսաստանի հետ են. Հայաստանը, նրանց համոզումով, չի կարող ապրել առանց Ռուսաստանի եւ միշտ միացած պիտի լինի նրա հետ, ինչպէս ծառի ճիւղը չի կարող ապրել, երբ կտրուի ծառից: Խորհրդային լինի, ցարական լինի, ուժեղ լինի, տկար լինի՝ Ռուսաստանն է միայն հայութեան փրկարար ոյժը:

Մենք այդ կարծիքի չենք բնաւ: Որոշ պայմաններում միայն Ռուսաստանը բարիք է Հայաստանի համար: 18, 19, 20 թուականներին նա չարիք եղաւ եւ գրեթէ մինչեւ գերեզման հասցրեց հայ ժողովրդին: Վաղը կարող են նորից նման դէպքեր տեղի ունենալ: Հայ ժողովուրդը դարեր ապրել է առանց Ռուսաստանի, նորից էլ կ'ապրի: Յաճախ մեծ կաղնիները փոքրկից կործանուել են, բայց նրանց կողքին փոքրիկ թուփերը մնացել են կանգուն: Ռուսաստանը մեզ համար դրական գործօն է ու բարիք այն չափով, ինչ չափով որ Ռուսաստանի գոյութիւնն ու շահերը զուգադիպում են հայ ժողովուրդի գոյութեան ու շահերին: Այսօր, ինչպէս ասում են, քաղաքական սիտուացիան այդպէս է, եւ մենք պարտաւոր ենք դրանից անել համապատասխան եզրակացութիւնը. վաղը, երբ սիտուացիան փոխուի, մեր եզրակացութիւններն էլ կարող են լինել տարբեր:

Մի կէտ եւս. անվերջ հոլովւում է մեր ընդդիմադրութիւնը խորհրդային իշխանութեան, որ մենք մեր քննադատութիւններով վնասել ենք Հայաստանին, իսկ իրենք իրենց «լորձնաշուրթն գետնաքարշութեամբ» բարիք են բերել Հայաստանին: Ո՞րն է այդ բարիքը – չտեսանք: Քսան տարի է ռամկավարները փառաբանում են խորհրդային իշխանութիւնը, քսան սենթի շահ ունեցա՞ւ դրանից Հայաստանը, կամ ինքը՝ Ռամկավար կուսակցութիւնը: Չեմ կարծում: Խորհրդ. իշխանութեան վերաբերումը եթէ Դաշնակցութեան հանդէպ ունեցած վերաբերումից վատ չէ, լաւ էլ չէ: Աւելի ճիշտ – ոչ մի վերաբերում: Խորհրդ. իշխանութեան համար ռամկավարները արհամարհելի քանակ են, մինչ Դաշնակցութեան մէջ տեսնում են ոյժ եւ հաշուի են առնում:

Դարձեալ յիշեմ իմ բոլշեւիկ ընկերոջ հետ ունեցած խօսակցութիւնս ֆրանսա-գերմանական սահմանին վրայ[2]: Ես հարց տուի իրեն «դուք գանգատում էք, որ Դաշնակցութիւնը անվերջ քննադատում է ձեզ, ուզո՞ւմ էք որ վերջ տան»:

«Չէ, չէ՛, շտապով վրայ տուեց նա: Մեր գանգատներին եւ հակառակութեան ականջ մի՛ կախէք: Շարունակեցէք, միայն լուրջ եւ փաստացի քննադատութիւններ արէք: Դրանցից մենք շատ ենք օգտւում»:

Եւ բացատրեց, որ Մոսկուայում շատ մօտից հետեւում են արտասահմանի տարագիրների գրածներին, մանաւանդ լուրջ կարեւորութիւն են տալիս ուկրաինացի, վրացի եւ հայ հակառակորդների քննադատութիւններին, որոնք թարգմանում են ռուսերէն եւ առանձին տետրակներով տպուելով ուղարկում են պատասխանատու կոմունիստներին ի ծանօթութիւն: Վրացի կոմունիստները՝ վրացի մենշեւիկների քննադատութիւններից շատ են օգտւում Մոսկուայից Վրաստանի համար յատկացումներ ստանալիս: Նոյնը անում են եւ հայ կոմունիստները դաշնակցական մամուլի քննադատութիւններից: Եւ յիշեց «Դրօշակ»ի մէջ եղած քննադատութիւնները շաքարի գործարանի վայրի մասին, որից իրենք օգտուել են Հայաստանում հիմնուելիք շաքարի գործարանի համար վարկ ստանալու:

Նման հարցումներ ես ուղղած եմ եւ Կարէն Միքայէլեանին, եւ բժ. Սպ. Կամսարականին եւ Եղիա Չուպարին, եւ

Ար. Երզնկեանին եւ նաեւ Աւ. Իսահակեանին – բոլորի պատասխանը միաբերան եղել է նոյնը. Արտասահմանի քննադատութիւնները Հայաստանի համար աւելի օգտակար են, քան անսանձ գովասանքները, որոնք միայն հեգնական ծիծաղի են արժանանում բոլշեւիկների աչքին:

Ուրեմն, դէպքերի այսօրուայ լոյսի տակ էլ դիտելով՝ մեր երէկուայ ընդդիմադիր դիրքը ոչ վնասակար է եղել Հայաստանին (ընդհակառակը), ոչ էլ կարող է որեւէ ստուեր ձգել մեր այսօր որդեգրելիք ուղղութեան վրայ: Ոչ էլ այսօրուայ մեր ուղղութիւնը կարող է հակասութիւն նկատուել երէկուայ մեր ուղղութեան համեմատ. երէկ պայմանները տարբեր էին՝ մեր ուղղութիւնն էլ տարբեր էր. այսօր պայմանները այլ են՝ մեր ուղղութիւնն էլ պէտք է լինի այլ, նոր պայմաններին համապատասխան: Այսքան բան հասկնալու համար մե՞ծ խելք պէտք է ունենալ:

22 Օգոստոս. Նանթասրէք.– Այսպէս, ուրեմն, Հայաստանի ճակատագիրը նորից կապւում է Ռուսաստանի հետ: Փորձենք եւ այս հարցն եւս մանրամասնել: Միայն փաստը արձանագրելը բաւական չէ, այլեւ պէտք է նկատի ունենալ կարելիութիւններն ու ցանկալիութիւնները – մեր desiderata-ն: Ո՞ր Ռուսաստանի մասին է խօսքը, կամ ո՞ր Ռուսաստանն է մեզ համար ամէնից ցանկալին:

Կարող են լինել մի քանի տեսակ Ռուսաստաններ.–

1) Խորհրդ. Միութիւն:

2) Դեմոկրատիկ Ռուսաստան:

3) Միապետական Ռուսաստան:

Սկսենք վերջինից:

Միապետական Ռուսաստան ցարական իշխանութեան վերականգնումով, ի հարկէ, այսուհետեւ հազիւ թէ հնարաւոր է: Ցարիզմը այլեւս պատմական երեւոյթ է եւ վերակենդանանալու հաւանականութիւն չունի: Բայց ի նկատի ունենալով ազգայնութեան ծայր աստիճանի սրումը Ռուսաստանում, անկարելիութիւն չէ, որ խորհրդային իշխանութեան անկման պարագային**), նրա տեղը բռնէ մի իշխանութիւն, որ աւելի կամ պակաս չափով յիշեցնէ ցարական ռեժիմը: Կարող է լինել ձեւով հանրապետական վարչաձեւ, բայց ըստ էութեան՝ միապետութիւն կամ սակաւապետութիւն, ամենայն հաւանականութեամբ՝ զինուորական: Նմանութիւնը այս եւ ցարական իշխանութեան միջեւ կը լինի այն, որ սա էլ կ'ունենայ խիստ շեշտուած ռուս ազգային նկարագիր եւ ռուսութեան վեհապետական ձգտումներ:

Այսպիսի մի իշխանութիւն անխուսափելիօրէն կը լինի թթու ազգայնական իշխանութիւն, կ'որդեգրէ ռուսացման քաղաքականութիւն եւ կը լինի չարիք ոչ-ռուս տարրերի համար: Կարծում եմ երկարելու պէտք չկայ եզրակացնելու համար, որ այդ իշխանութիւնը բարեացակամ չի լինի եւ դէպի հայերը, եւ, հետեւաբար, հայերի ցանկացածը չէ: Այդպիսի Ռուսաստանից հայերը ոչինչ ունին սպասելիք ազգային տեսակէտով: Այդպիսի Ռուսաստանի հետ հայերը չեն ուզի եւ պէտք չէ որ ուզենան մէկ յարկի տակ ապրելու:

Բոլորովին տարբեր խորհրդածութիւնների հիմք է տալիս երկրորդ՝ դեմոկրատիկ Ռուսաստանը: Հիմք կա՞յ, սակայն, որ այս պատերազմից յետոյ Ռուսաստանը կ'ընդունի դեմոկրատական վարչաձեւ: Դժուա՜ր: Ինչ է կատարւում Ռուսաստանում, մենք իրապէս տեղեակ չենք: Բայց ինչ որ գիտենք, իրաւունք է տալիս մտածելու, որ դեմոկրասիի գա-

ղափարը այնտեղ շատ էլ համակրանք չի վայելում: Քառորդ դար է, որ ռուս ժողովուրդը դաստիարակւում է ատելութեան ոգիով դէպի դեմոկրասին: Պետական կարգը եւ հասարակական ապրելակերպը, քաղաքական եւ ընկերային փիլիսոփայութիւնն ու առօրեան ընթանում են հակադեմոկրատիկ մթնոլորտում: Մինչեւ այժմ Ռուսաստանի ժողովուրդների մէջ եւ Համայնավար կուսակցութեան ծոցում ո՛չ մի շարժում երեւան չի եկել դեմոկրասիի դրօշի տակ: Հակառակ օրինակներ, սակայն, եղել են: Հենց տրոցկիական ամբողջ շարժումը, ըստ էութեան, այդ բանն էր: Վերջապէս, բանակը, որ յեղաշրջման դէպքում վճռական դերակատարը պիտի լինի, դեմոկրասիի ջատագով չէ ու չէ կարող լինել:

Որոշ չափով նոյնն է կացութիւնը եւ արտասահմանում: Ռուս տարագրութեան աննշան փոքրամասնութիւնը դեմոկրատական է, մեծ մասը հակառակորդ են դեմոկրասիի՝ տարբեր գունաւորումներով – բոլշեւիկներ, միապետականներ, մլադոռուսներ, անկուսակցականներ, որոնց համար թանգ է ցարիզմի յիշատակը:

Դեմոկրատիկ տարրերն էլ – զօրավարներ առանց բանակի – բաժանուած են իրանց մէջ բազմաթիւ ճիւղաւորումների – սոցիալ-դեմոկրատներ առնուազն երկու հատուածով (Դան–Աբրամովիչ), սոցիալիստ-յեղափոխականներ՝ մի քանի հակամարտ ճիւղերով եւ Բերինսկի, Չերնով, Լեբեդեւ, Սլոնիմ, Չինչինով, Ստալինսկի – ամէն գլխից մի ձայն), Միլիւկովի հատուածը՝ հողմացրիւ ու անգլուխ: Մի խօսքով՝ խեղճ պատկեր: Լայն զանգուածների մէջ՝ ոչ մի հող:

Սպասել, թէ ռուս դեմոկրատիկ տարագրութիւնը որեւէ դեր կարող է խաղալ Ռուսաստանի ապագայի մէջ, առնուազն միամտութիւն է:

Այս պայմաններում՝ ո՞րտեղից պիտի գայ դեմոկրատիկ Ռուսաստանը – ես դժուարանում եմ պատասխանել: Բայց ենթադրենք, որ Ռուսաստանը դարձաւ դեմոկրատիկ, դրանից ի՞նչ շահ հայերին ազգային տեսակէտով:

Մինչեւ այժմ գոյութիւն ունեցող ռուս դեմոկրատական հոսանքների ծրագիրներից ամենաազատամիտը, ազգային տեսակէտով, սոցիալիստ-յեղափոխականներինն է, որ ուզում է Ռուսաստանը կառուցանել ֆեդերատիւ հիմքերի վրայ, բայց այդ ֆեդերացիան պատկերացնում է որպէս շրջանների դաշնակցութեան եւ ոչ ազգերի: Անշուշտ, ազգային համախմբումներն էլի նկատի առնւում են, բայց հիմնականն աշխարհագրութիւնն է: Եւ հիմքում, ի հարկէ, ռուս ցեղի գերակայութեան գաղափարն է: Սոց. յեղափոխականներն էլ անհատէ անհատ տարբեր ժամանակներ տարբեր բովանդակութիւն են տալիս ֆեդերացիային: Օրինակ, Վ. Չերնովը ֆեդերացիայի սահմանները լայնացնում է մինչեւ կոնֆեդերացիա եւ աւելի՝ մինչեւ բրիտանական տոմինիոնների դրութիւնը: Ուրիշներ, ինչպէս Լեբեդեւի, Ստալինսկի եւ այլն, աւելի նեղ մտքով են հասկանում ֆեդերացիան: Առնենք, սակայն, ծրագիրը – Ռուսաստանը դաշնակցային հանրապետութիւն:

Միւս հոսանքները այդքան հեռանկար չեն գծում. ոմանք ֆեդերացիան էլ չեն ընդունում, ոմանք ընդունում են նեղ ծաւալով: Տիրող ոգին, սակայն, բոլորի մէջ էլ նոյնն է – ռուս ցեղի գերակայութիւնը:

Արդ, ի՞նչ կարող է շահել այդպիսի Ռուսաստանում հայութիւնը: Քաղաքացիական տեսակէտով կարող է ունենալ հանգիստ կեանք, տնտեսական տեսակէտով՝ բարգաւաճ վիճակ եւ հարստանալու հնարաւորութիւն: Իբրեւ անհատ, ահա կարող է յաջողիլ եւ զարգանալ, ինչպէս, օրինակ, Ամերիկայում: Բայց ազգային տեսակէտից ո՛չ մի ապահովու-

թիւն չի ունենայ սեփական տնտեսութիւն ունենալու եւ ազգային մշակոյթը զարգացնելու: Ինչպէս այստեղ, Ամերիկայում, հայկական մշակոյթը կուլ է գնում աւելի զօրաւոր՝ ամերիկեան մշակոյթին եւ հայութիւնը արեւի տակ ընկած ձիւնի պէս հալւում-փչանում է, անշուշտ, աւելի դանդաղ թափով նոյնը տեղի կ'ունենայ եւ դեմոկրատիկ Ռուսաստանում: Դրա նախանշանները մենք տեսանք արդէն ցարական տիրապետութեան վերջին շրջանում. շնորհակալ պէտք է լինենք Փլեւէներին եւ Գալիցիններին, որոնք իրենց գռեհիկ հայահալածութեամբ դանդաղացրին հայերի ռուսացման շարժումը, այլապէս ռուսացումը աւեր պիտի գործէր հայերի մէջ:

Դեմոկրատիկ Ռուսաստանն էլ զերծ չի լինի ռուսացման քաղաքականութիւնից, բայց կը գործէ աւելի յղկուած ձեւերով եւ աննկատելի կերպով, բնական նուաճումի ճանապարհով: Աշխարհաքաղաքացիական գաղափարներ սնուցանողների համար սրա մէջ ոչ մի վտանգ չկայ, բայց ազգային անհատականութեան եւ ազգային մշակոյթին արժէք ընծայողներ չեն կարող հաշտուել այդպիսի մի դրութեան հետ:

Անշուշտ, դեմոկրատիկ Ռուսաստանը ցարիզմից նախընտրելի է շատ տեսակէտներով, բայց հայութեան գոյութեան ու զարգացման ապահովման եւ յարատեւութեան համար վստահելի պայման չէ: Դեմոկրատիկ Ռուսաստանում Հայաստան գոյութիւն չի ունենայ իբրեւ առանձին միաւոր, հայութիւնն էլ բաժան-բաժան կ'ապրի ըստ աշխարհագրական վայրերի, ենթակայ տեղական միջավայրերի ազդեցութեանց: Դեմոկրատիկ Ռուսաստանն էլ կ'ունենայ մէկ յարկ, որի տակ սենեակները բաժանուած չեն լինի ըստ ազգութիւնների եւ, հետեւաբար, չեն ապահովի հայերի համախումբ կեանքը հայրենի հողի վրայ:

Դեմոկրատիկ Ռուսաստանը ռուսի համար ցանկալի իտէալ է եւ զարմանալի է, որ շատ քիչ ռուսներ յարած են այս գաղափարին: Ռուսաստանի ոչ-ռուս ժողովուրդների համար նա հիմնական դարման չէ, եւ ամբողջ էութեամբս դեմոկրասիի գաղափարակից ու ջատագով լինելով հանդերձ՝ ես դեմոկրատիկ Ռուսաստանն եւս չեմ համարում այն Ռուսաստանը, որի հետ նախընտրելի է միացած տեսնել Հայաստանը:

Լսողները պիտի զարմանան, երեւի, եթէ ասեմ, որ իմ գիտցած բոլոր Ռուսաստանների մէջ, ես նախընտրելի եմ համարում Խորհրդ. Միութեան պիտակի տակ ծածկուած Ռուսաստանը: Եւ ահա թէ ինչու:

Թէ գաղափարով, թէ պետական սահմանադրութեամբ, որոշ չափով եւ գործնական կեանքով Խորհրդ. Միութիւնը հաստատուած է ո՛չ թէ միջազգային, այլ ազգային սկզբունքի վրայ: Խորհրդ. Միութիւնը սկզբունքով ազգերի միութիւն է ոչ թէ՝ շրջանների, հողերի, ինչպէս Մեծ Բրիտանիան, օրինակ, որի դոմինիոնները տերիտորիալ բնոյթ ունին: Վաղը, եթէ Հնդկաստանը դոմինիոն դառնայ, հնդկական դոմինիոնի մէջ պիտի մտնեն բազմաթիւ ազգեր: Խորհրդ. Միութեան մէջ էլ կան բազմազգ միաւորներ, ինչպէս ինքը Ռուսաստանը, բայց նրանց մէջ ապրող ազգերն էլ կազմակերպուած են իբրեւ ազգային միաւորներ: Փոքրիկ Վրաստանը նոյնիսկ ունի ազգային ինքնավար միաւորներ՝ Աբխազիա, Աճարստան, որոնք ոչ միայն մշակութային միութիւններ են, այլեւ քաղաքական-պետական: Աշխարհիս երեսին գոյութիւն ունեցող պետութիւնների մէջ ազգութեան գաղափարը սկզբունքով ոչ մի տեղ այնքան լայն կերպով կիրառուած չէ, որքան Խորհրդ. Միութեան մէջ, ուր ապակեդրոնացումը, դարձեալ սկզբունքով, ամենալայն աստիճանի է հասցուած:

Այս սկզբունքը, սակայն, կեանքում խախտւում է այն բանով, որ պետական ապակենտրոնացման կողքին տիրական է կոմունիստ կուսակցութեան ծայրայեղ կենտրոնացումը: Եւ որովհետեւ կոմունիստ կուսակցութիւնն է տէրը պետական իշխանութեանն եւ աւելի ազդեցիկ ու հեղինակաւոր, եւ որովհետեւ կոմունիստ կուսակցութեան մէջ տիրող ոյժը ռուս տարրն է, այդ պատճառով ապակենտրոնացումը եւ ազգային ազատութիւնը մնում են սոսկ տեսական սկզբունք, իսկ փաստօրէն պետական իշխանութիւնը կենտրոնացած է ռուսների ձեռքը. ոչ-ռուս ազգերը գործնականում ստորադաս ազգեր են՝ զուրկ նոյնիսկ Սահմանադրութեամբ որոշուած իրաւունքներից օգտուելու հնարաւորութիւնից:

Այս դրութիւնը, սակայն, չի կարող մնալ յարատեւ: Իրերի տրամաբանութիւնը Խորհրդ. Միութիւնն էլ աստիճանաբար պիտի մղէ դէպի դեմոկրասի: Եթէ համեմատելու լինենք այսօրուայ վիճակը 10-15 տարի առաջուայ վիճակի հետ, զգալի փոփոխութիւն կը տեսնենք այդ տեսակէտով: Պատերազմն էլ անհետեւանք չի անցնի. պատերազմը շահած ժողովուրդը չի կարող դիւրութեամբ հրաժարուել ձեռք բերած նուաճումներից, ընդհակառակը, պիտի ջանայ լայնացնել այդ նուաճումների սահմանը: Եւ կարելի է յուսալ, որ պատերազմից յետոյ Խորհրդ. Միութեան մէջ իշխանութեան կենտրոնացումն ու կուսակցական միահեծանութիւնը զգալի չափով կը մեղմանան, հետագային ի սպառ ջնջուելու հաւանականութեամբ: Եւ ազգութիւններն էլ աւելի հնարաւորութիւն կ'ունենան օգտուելու Սահմանադրութեամբ իրենց ընծայուած իրաւունքներից:

Բայց եթէ անգամ փոփոխութիւն էլ տեղի չունենայ, նոյն իսկ իր այսօրուայ վիճակում Խորհրդ. Միութիւնը ազգութիւնների համար աւելի նախընտրելի է, քան ուրիշ որեւէ ձեւի Ռուսաստան:

Խորհրդ. Միութեան մէջ էլ գերիշխող է ռուսական ազգային տարերքը, մանաւանդ, պատերազմի այս օրերին: Ռուս ազգը իր թուի վիթխարի գերազանցութեամբ եւ իր բարձր մշակոյթով Խորհրդ. Միութեան մէջ էլ տիրում է միւս ազգերին եւ իրեն է ենթարկում միւս ազգերի մշակոյթը՝ այսպիսով նպաստելով միւս ազգերի ռուսացման: Բայց ռուսացման պրոցէսը Խորհրդ. Միութեան մէջ անհամեմատ աւելի թոյլ կ'ընթանայ, քան ազգային որեւէ Ռուսաստանի մէջ, որովհետեւ 1) Խորհրդային իշխանութիւնը (միշտ սկզբունքով) ռուսացումը չի նկատում պետական քաղաքականութիւն, մինչդեռ ուրիշ որեւէ Ռուսաստան, նոյնիսկ ամենէն ազատամիտ դեմոկրատականը, պետական քաղաքականութիւն պիտի նկատէ օտարազգերի ձուլումը ռուսութեան մէջ, ինչպէս անում են Եւրոպայի եւ Ամերիկայի բոլոր պետութիւնները: 2) Ոչ-ռուս ազգերը, պետական սահմանադրութեամբ, ազգային-մշակութային լայն իրաւունքներ ունին եւ որոշ չափով օգտւում են այդ իրաւունքներից՝ ստեղծելով ինքնուրոյն ազգային կեանք եւ ազգային մշակոյթ: Ճիշտ է ազգային կեանքն ու մշակոյթը գտնւում են Մոսկուայի, այսինքն ռուսութեան հանապազօրեայ հակակշռի տակ, բայց եւ այնպէս ոչ-ռուս ազգերը Խորհրդ. Միութեան մէջ կարողացել են իրենց համար ապահովել մշակոյթի շատ աւելի լայն հնարաւորութիւններ, քան մինչեւ այժմ որեւէ Ռուսաստանի մէջ: Կարելի չէ ուրանալ այն իրողութիւնը, որ Խորհրդ. Միութեան մէջ մի շարք ժողովուրդներ դարձան ազգ եւ բարձրացան իրենց մշակոյթով: Ուկրաինացին ամենալայնախոհ ռուսների կողմից էլ դիտւում էր իբրեւ ռուսութեան մէկ հատուածը. Խորհրդ. Միութեան մէջ Ուկրաինան դարձաւ առանձին ազգ: Պակաս ակնբախ չէ Հայաստանի պարագան. Խորհրդ. Միութեան մէջ շարունակուեցաւ Հայաստանի վերելքը, որ սկսուած էր Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեամբ: Ճիշտ է, այդ բանը տեղի ունեցաւ մեծ զոհերի գնով. կոմունիստական անհեթեթ բռնատիրութիւնը մարդկային եւ նիւթական անհաշիւ ուժեր սպառեց վերելքի ճանապարհին: Վերելքը ինքն էլ տեղի է ունենում բարձրացումների եւ անկումների շղթայով: Անշուշտ, Հայաստանը շատ աւելի արագ թափով եւ լայն ծաւալով կը յառաջանար, եթէ հայ ժողովուրդը ձգուէր հանգիստ եւ ազատութիւն ունենար սեփական ուղիով քայլելու եւ սեփական ծրագիրներով ու միջոցներով շինելու իր պետութիւնը, բայց այդ տարբեր խնդիր է: Մեր խօսքը այն մասին է, որ եթէ անկախութիւնը նորանոր չլինի, եւ հայ ժողովուրդը ստիպուած լինի իր ճակատագիրը կապելու Ռուսաստանի հետ:

Կայ մի պարագայ եւս: Վերեւ ասացինք, որ Խորհրդ. Միութիւնը, յաղթութեան պարագային, պիտի ուզէր ընդարձակել իր հարաւային սահմանները: Ցարական Ռուսաստանը, ինչպէս գիտենք, փորձեց, թրքահայկական հողերը կամենում էր բնակեցնել ռուսներով՝ ապահովելու համար սահմանները ռուսական տարրի գերակշռութեամբ: Որեւէ հիմք չունենք մտածելու, որ դեմոկրատիկ Ռուսաստանը այլ կերպով պիտի վարուի, ի հարկէ, ո՛չ ցարական գեներալների կոշտութեամբ, այլ աւելի վայելուչ ձեւով, բայց ըստ էութեան ռուս ազգային շահերի ապահովութեան համար աւելի վստահելի համարելով ռուս տարրը, քան ուրիշ որեւէ ժողովուրդ:

Խորհրդ. Միութիւնը, ընդհանուր առմամբ, հետեւում է ազգային սկզբունքին եւ նուաճած հողերը միացնում է այն ազգային շրջանին, որի մաս են համարւում այդ հողերը՝ պատմականօրէն կամ ազգագրական տեսակէտով: Լեհաստանից գրաւուած հողերը միացուեցան Ուկրաինային եւ Պելոռուսիային: Բեսարաբիան կցուեցաւ Մոլտաւիայի միջոցով, Ուկրաինային: Ֆիններից առնուած հողի մի մասը միացուեցաւ Կարելիային: Վաղը եթէ Իրանից հողեր գրաւուեն, կը միացուեն Իրանին սահմանակից հանրապետութիւններին: Թուրքիայից գրաւուելիք հողերը կը կցուեն Հայաստանին եւ Վրաստանին: Այս մասին հազիւ թէ կասկած լինի: Հետեւաբար, ուրեմն, Հայաստանին կցուած թրքահայկական հողերը կը մեծացնեն Հայաստանի տեսակարար կշիռը կովկասեան հանրապետութիւնների մէջ, ի վիճակի կը լինեն նոր հայութիւն ներգրաւելու եւ կ՚աւելցնեն հայ ժողովրդի ազգային-մշակութային, ինչպէս եւ տնտեսական-քաղաքական ներոյժ զօրութիւնը:

Մէկ կէտ եւս. ազգային տեսակէտով հայութեան համար բարիք եղաւ Անդրկ. Դաշնակցութեան լուծումը եւ Հայաստանի յարումը Խորհրդ. Միութեան, իբրեւ ազգային առանձին միաւորի: Ճիշտ է, դրանով Հայաստանը զրկուեց Վրաստանում եւ Ազրբեջանում ապրող մօտ 800,000 հայերի բարոյական կապից, որ Անդրկ. Դաշնակցութեան օրով էլ շատ ուժեղ չէր, բայց, միւս կողմից, մեծապէս շահեց անմիջապէս կապուելով կեդրոնի հետ, եւ, որպէս այդպիսին, ուղղակի նպաստաւորուելով կենտրոնից: Եթէ Հայաստանի ղեկավարութիւնը գտնուի կարող ձեռքերի մէջ եւ հեղինակութիւն ներկայացնէ Մոսկուայի աչքին, Հայաստանը շատ աւելի նպաստաւոր դիրք կը ստեղծէ իրեն համար, քան առաջ, երբ Հայաստանի բախտը կախուած էր վրացի եւ ազրբեջանցի կոմունիստների քմահաճոյքից:

Էլ չեմ ասում այն մասին, որ Հայաստանը դառնալով ուղղակի անդամ Խորհրդ. Միութեան, շատ աւելի լայն իրաւունքներ է վայելում, քան իբրեւ Անդրկ. Դաշնակցութեան անդամը: Եթէ խորհրդային իրականութիւնը, վերջ ի վերջոյ, հասնի այն կէտին, որ կեանքի պայմանները դառնան համապատասխան Միութեան Սահմանադրութեան տրամադրութիւններին, հայութիւնը կը դառնայ կէս անկախ մի պետութիւն: Դա չի լինի իտէալ մեզ համար, դրանով իրականացած չի լինի հայութեան դարաւոր երազը, բայց դա կը լինի աւելի, քան հայութիւնը վերջին 5-6 դարերում երբեւիցէ ունեցել է, բացառութեամբ Հանրապետութեան երկու եւ կէս տարիների: Մնաց որ, այս մեղաւոր աշխարհում, վաղուց է, որ իտէալներ չեն մնացել: Իրատես լինենք ժոռէսի պէս.–

Ուրեմն, եթէ պատմական դէպքերը դասաւորւում են այնպէս, որ պատերազմից յետոյ Խորհրդ. Միութիւնը պիտի մնայ, որպէս հաշտութեան դաշնագիրը ստորագրող մեծ պետութիւններից մէկը, անմտութիւն կը լինի յուսալ Հայաստանի անկախութեան վերականգնման, հետեւաբար, եւ անմտութիւն կը լինի անկախութեան պահանջով ներկայանալ հաշտութեան վեհաժողովին: Հայութեան կը մնայ աշխատանք թափել, որ Հայաստանի սահմաններն ընդարձակուին եւ հայութիւնը հնարաւորութիւն ստանայ վերադառնալ Հայաստան՝ ընդունելով իբրեւ փաստ, որ Հայաստանը պիտի մնայ Խորհրդ. Միութեան սահմանների մէջ: Այսքանը բաւական է այս սերնդի համար:

Ատլանտեան Չարթըրի սիրահարները, գիտեմ, զայրոյթով պիտի լսեն իմ այս մտքերը, եթէ առիթ ունենամ արտայայտելու, բայց ես Ատլանտեան Չարթըրի սիրահարներից չեմ: Եւ չեմ էլ հաւատում, որ այդ Չարթըրից որեւէ բարիք

դուրս կը գնայ անազատ ազգերի համար: Կեղծիքի վրայ հաստատուած, հակասական, ոչ ոքին ոչինչ չպարտադրող մի յայտարարութիւն է այդ թուղթը, որի տակ ստորագրութիւն դնողները առաջինը իրենք խախտեցին նրա պայմանները, եւ, ի հարկէ, վաղն էլ չպիտի յարգեն: Լինենք իրատես եւ ականջ դնենք ժամանակի նշանախօսքերին, որոնց մէջ, աւա՜ղ, ազգերի ինքնորոշման եւ անկախութեան պահանջներ չկան: Մարդկութիւնը աւելի վատ է, քան մենք միամտօրէն կարծում էինք: Աշխարհիս երեսին տիրողը մեծերի շահն է եւ գազանական գիշատիչ բնազդը: Մեծ ձկները ուտում են փոքր ձկներին, իսկ բնութիւնը մեզ ստեղծել է, դժբախտաբար, փոքր ձուկ: Լողանք այն ջրերում, ուր ամէնից քիչ հաւանականութիւն կայ կուլ գնալու...

25 Օգոստոս, Նանթասքէթ.– Մեր սերնդի վերջին քսան տարուայ կեանքի ամենաթերի կողմը այն է, որ մենք ապրում ենք հին գաղափարներով ու հին յոյսերով, այն ինչ արտաքին պայմանները հիմնովին փոխուել են: Անշուշտ, հին գաղափարները միշտ նոր են ե՛ւ առարկայօրէն, եւ մեր գիտակցութեան մէջ: Անշուշտ, Միացեալ եւ Անկախ Հայաստանի պահանջը կենդանի գործօն է, եթէ մենք հաւատում ենք մեր ազգի ապագային, եւ հասկանալի է, որ այդ պահանջի շուրջ են դառնում մեր մտահոգութիւնները, բայց – ժամանակները փոխւում են, եւ մենք էլ պէտք է փոխուենք ժամանակի պայմանների համեմատ: Մեռած է այն հասարակութիւնը, որ մնում է կանգնած մի կէտի վրայ, առանց շարժուելու, եւ ականջ չի դնում ժամանակի ձայնին:

Կարելի չէ անվերջ ապրել կրկնելով միեւնոյն մտքերը, որոնք այլեւս զրկուել են կենդանի բովանդակութիւնից: Պէտք է ստեղծել նոր մտքեր, կեանքի եւ գործի նոր խթաններ՝ ժամանակի պայմանների համեմատ, այլապէս կեանքը կը դառնայ ճահիճ, եւ միտքը՝ անապատ:

Հայ ազգը ապրել է դարեր՝ միշտ աչքի առաջ ունենալով Հայաստանի ազատութիւնը, իբրեւ լուսատու մի փարոս: Երբեմն այդ փարոսը պայծառ լոյս է տուել, երբեմն խաւարել է ի սպառ մարելու աստիճան, բայց հայութեան կեանքն ու հոգեւոր ստեղծագործութիւնը կանգ չի առել եւ ամենամռայլ օրերին անգամ արգասաւորուել է: Ազատութիւնը իտեալ է. կեանքի առօրեան ճանապարհն է դէպի այդ իտեալը, եւ ճանապարհը փոխւում է ժամանակի, տեղի եւ պայմանների համեմատ:

Մեր սերնդի դժբախտութիւնը այն է, որ մենք հաշուի չենք առնում ժամանակն ու պայմանները եւ կեանքը չենք բեղմնաւորում նոր գաղափարներով: Նոր սերմ չենք դնում հողի մէջ եւ զարմանում ենք, որ մեր արտը մնում է խոպան:

Քսան տարուայ մէջ ի՞նչ նոր բան տուինք մենք: Հինը պահելով կարելի չէ նոր կեանք ստեղծել. հնի հետ – կամ նոյն իսկ հնի տեղ – նոր գաղափարներ ու նոր գործեր պէտք է յղանալ:

Այո՛, պայմանները շատ աննպաստ են: Մեր ոտքի տակ սեփական հող չունինք: Չունինք հարազատ միջավայր: Ուժգրիւ ենք եղած: Տարիքը առնում ենք: Այս ամէնը ճիշտ է, բայց ճիշտ է եւ այն, որ հին դարմանը քամուն տալով կարելի չէ ապրել: Եւ, կարծես, մեր սերունդը չի գիտակցում այս: Քանի՜-քանի կենդանի դիակներ՝ ամէն կողմ:

Կարելի՞ է ասել, որ մենք սպառել ենք մեր ունեցածը եւ այլեւս անընդունակ ենք արտադրելու, այլեւս տալիք չունենք: Ես այդ գիտակցութիւնը չունեմ: Ինձ զգում եմ այնպէս, ինչպէս 25 տարի առաջ, փոթորկայոյզ կեանքի ալիքներում: Ցնցում, հոգեւոր վերազարթնում, մտքի շարժում – այս է հարկաւոր, եւ եթէ չկայ, պատճառը մեր սպառումը չէ, այլ կեանքի առարկայական պայմանները: Բայց կարելի՞ է, պէ՞տք է հաշտուել այդ պայմանների հետ: Բնա՛ւ երբեք:

Չպէտք է մոռնանք, որ մենք մեր ետեւը ունինք երիտասարդ սերունդ, որ հասակ է նետում եւ մեզ է նայում, մեզանից է օրինակ ու մղում սպասում: Երիտասարդութիւնը չի կարող ապրել մեր հին յուշերով, որոնք ինչքան եւ փառաւոր լինեն, այսօրուայ կեանքը չեն կարող լեցնել: Հին գործերը գեղարուեստական արծաթների պէս են՝ կարելի է դի-

տել ու հիանալ, բայց սնունդ կարելի չէ ստանալ նրանցից: Ապրելու եւ յառաջադիմելու համար նոր արծաններ են հարկաւոր՝ նոր գաղափարներ ու նոր գործեր, կամ գէթ կենդանի կեանքի օրինակ:

Ես յաճախ զարմանում եմ իմ շրջապատի մարդկանցով – որքա՜ն անհետաքրքիր եւ անբովանդակ կեանք, մտքի ի՜նչ աղքատութիւն, հետաքրքրութեան բացակայութիւն: Ոչի՛նչ չի ոգեւորում, ոչինչ չի շարժում: Ինչ որ քառորդ դար առաջ էին՝ նոյնը եւ այսօր: Եւ աւելի վատ. քառորդ դար առաջ գոնէ երիտասարդ էին, աշխոյժ ու հարցասէր. այսօր, այո՛, կենդանի դիակներ: Ի՞նչ օրինակ պիտի առնէ դրանցից նոր սերունդը, ինչո՞վ պիտի խանդավառուի: Կարելի՞ է խանդավառուել չոր փշերով:

Նոր մտքեր, նոր ծրագիրներ, նոր գործեր, նոր աւիւն ու ոգեւորութիւն – ականջ դնենք ժամանակի հրաւէրին, այլապէս կորսուած ենք:

Անցեալը՝ այո՛, բայց անցեալը ներկայի համար եւ ներկան՝ ապագայի համար: «Պէտք է յետ նայել՝ առջեւը տեսնելու համար»: Վա՜յ նրանց, որոնց միտքը պարպուած է եւ որոնց հոգեկան հուրը մարած:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

*) – Միշտ ի մտի ունենանք, որ խօսքը այն պարագայի մասին է, երբ Ռուսաստանը դուրս գայ յաղթական ու զօրաւոր այս պատերազմից: Հակառակ պարագային, մեր բանավարութեան միտքը կը կորցնէ իր ոյժը, եզրակացութիւնն էլ կը լինի տարբեր:

**) – Ես միշտ ի նկատի ունեմ, որ խորհրդ. իշխանութեան գոյութեան յարատեւումը դեռ ապահովուած չէ, պատմական ներկայ փուլի հանգամանքներով: Տեմոկրասիների եւ խորհրդային իշխանութեան կենակցութիւնը սիրոյ արդիւնք չէ, այլ շահի. դեռ ո՞վ գիտէ ինչ զաւակ կարող է ծնուել այդ կենակցութիւնից: Ո՞վ գիտէ, թէ վաղը ինչ կը պատահի: Երեւակայեցէք, որ գերման ժողովուրդը մի կողմ նետէ Հիթլէրին եւ միանայ բոլշեւիկներին, ինչ որ Ստալինի փնտռածն է – ի՞նչ հետեւանքներ կարող են ծագել դրանից:

Ծանօթագրութիւններ

1.- Բնագրին մէջ՝ ռուսատառ:

2.- Խօսքը կը վերաբերի Սարգիս Սրապիոնեան-Լուկաշինի, որուն հետ Վրացեանի ունեցած խօսակցութեան մէկ քանի կցկտուր արձանագրութիւններ մնացած են իր թուղթերուն մէջ: Այս վերջինները առանձին պիտի տրուին «Դրօշակ»ի յաջորդ թիւերէն մէկուն մէջ:

3.- Լեռնեան՝ ծածկանունն էր Լիպարիտ Նազարեանցի:

ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆԻ



1906, 9/2, Ալեքսանդր.

Սոնա,

նորերս Ձեզ մի նամակ ուղարկեցի, այժմ ուզում եմ քիչ ընդարձակ խօսել։ Վերջերս այդ անիծեալ գործադուլը մեր նամակագրութիւնն էլ դադարեցրեց։ Ճեմարանում էլ ուսումը դադարեց եւ ես եկայ Կովկաս։ Թիֆլիզում մտայ Դաշն. կազմակերպութեան մէջ իբրեւ պրոպագանդիստ։ Ուզում էին այնտեղ թողնել բանտորների մէջ պրոպագանդ անելու, բայց չմնացի։ Մակինցեանը հետս է։ Եկանք Ալեքսանդրապոլ։ Մինչեւ այժմ շրջում էինք գիւղերում։ Նոր ենք վերադարձել եւ այժմ մեզ ուզում են պահել քաղաքում պրոպագանդի։ Երեւակայեցէք, ոչ մի կարգին պրոպագանդիստ չունեն եւ չեմ սխալուի եթէ ասեմ, որ նոյնիսկ Կենտրոնական կոմիտէի անդամները կարօտ են պրոպագանդի։ Այնպիսի տգիտութիւն ու խաւար է տիրում այնտեղ, որ թէեւ գիտես, որ շատ սուղ է քո պաշարը, բայց այնուամենայնիւ զգում ես քեզ համարեա որպէս մի պրոֆեսոր հասարակական գիտութեանց։ Աւետիքը Իսահակեանին բաւականին մօտ ծանօթացայ։ Նա շատ անկեղծ մարդ է եւ շիտակ, այնպէս որ դա արդէն նրա համար մի մեծ պլիւս է։ Ճիշտ է, կանանցով շատ է տարուում, բայց Սոնա, ճիշտն ասած մեզանից տղամարդկանցից ո՞րը չի տարուում եւ եթէ ուրիշները սուրբ են երեւում, դա միայն նրանից է, որ նրանք դիմակի տակ են լինում։

Աւետիքը – անմիջական զգացմունքի եւ տրամադրութեան մարդ է եւ իզուր կը լինէր նրա մէջ որոնել փիլիսոփայական մտքի որոշ սիստեմատիկական ուղղութիւն։ Նրա բանաստեղծութիւններն էլ – անմիջական զգացմունքի արտադրութիւններ են։

Մի օր նա երկար պատմեց իր գլխին եկած արկածները եւ վերին աստիճանի անկեղծ էր իւր պատմութեան մէջ։

Ծննդին Ղազարապատ գիւղումն էինք։ Աւետիքը այնտեղ պահած ունի մի մեծ պոէմ (մօտ 200 երես) «Մասսա Մանուկը» վերնագրով, որ թաղած է եղել հողի տակ մի քանի տարի վախենալով խուզարկութիւ-

նից։ Ահա այդ պոէմը պիտի կարդար մեզ եւ դրա համար մենք Անիից վերադառնալիս իջանք Ղազարապատ, ուր ապրում է նրա եղբայրը եւ ուր իրանք կալուածներ ունեն։ Բայց Աւետիքը այդ օրերը գնացել էր գործով Թիֆլիզ եւ չեկաւ, մենք այնտեղ մնացինք մի քանի օր եւ վերադարձանք քաղաք։ Այստեղ համարեա միակ կարգին մարդը Աւետիքն է, մէկ էլ Լեւոն Մանուէլեանը, որի մօտ էլ լինում եմ։ Ամսոյս վերջերին կը գնամ Մոսկուա, որովհետեւ ուսումը երեւի կը սկսուի եւ հաշիւներս վերջնականապէս կը վերջացնեմ ձեմարանի հետ։ Այստեղի դէպքերի մասին կարդացած կը լինէք լրագրներում։ Արդեօք միտք չունէ՞ք գալու։ Շատ լաւ կը լինէր, եթէ Մոսկուա գայիք։ Միջոցներ ունենայի ես էլ կը գայի արտասահման ամառս։ Բայց...

Շրջեցի շատ գիւղեր, ընդունում էին լաւ եւ այստեղ էլ բաւականին մեծ պատիւ ենք վայելում։ Նամակս երեւի ստացած կը լինէք Անիից, դիտմամբ «զակազնոյ» գրեցի, որ հասնի անպատճառ։

Այստեղ Սիրանոյշը տուեց ներկայացում – «Դաւաճանութիւն»։ Երեւակայեցէք, սաստիկ հիասթափուեցի։ Նրա մասին այնպիսի գովասանքով էին խօսում, որ ես սպասում էի տաղանդաւոր խաղ, այնինչ նա այնքան թոյլ էր, որ բաւարար դերասանուհու տպաւորութիւն էլ չթողեց։ Վրոյրը հիանալի էր։

Այստեղի արիւնալի դէպքերի մասին կը գրեմ միայն այնքանը, որ դժբախտաբար նոքա արդէն սովորական են դարձել, այնպէս որ այնքան էլ ուշք չես դարձնում։ Մերոնք լաւ են այժմ, բաւականին զինուած են։ Մանաւանդ «Դաշնակցութիւնը» մեծ դեր է խաղում եւ իմ խորին համոզմունքով, եթէ չլինէր նա, շատ տեղերում ոչ մի հայ չէր մնայ։

Թիֆլիզի ընդհարումների ժամանակ այնտեղ էի եւ աչքովս տեսայ Դաշնակց. կատարած դերը։ Կռուի մէջ Դաշնակց. հաւասարը չունի, բայց պրոպագանդը շատ թոյլ է։

Գաւառը մի տեսակ անախորժ տպաւորութիւն է թողնում եւ շատ ձանձրալի է կեանքը, միայն գործն է, որ քիչ կենդանութիւն է տալիս այստեղի կեանքին։ Շնորհքով մարդիկ էլ չկան, որ մարդ կարողանայ հետները խօսել գոնէ։ Մոսկուայի դէպքերի մասին կարդացի։ Երեւակայեցէք, ոմբակոծել են հէնց այն տունը, որի մէջ մի ժամանակ մինչեւ Կովկաս գալս ես ապրում էի։ Ճակատագիրը ինձ ազատել է չգիտեմ ինչո՞ւ համար։

Ռուսաստանում այնպիսի քաոս է տիրում, որ մտքերն էլ են սրուել եւ ես չգիտեմ նոյնիսկ ինչ գրեցի։

Տպաւորութիւնները այնքան շատ են, որ չգիտես որը գրես եւ վերջապէս ոչինչ չես գրում։ Կուրծքս չգիտեմ ինչու նոր սաստիկ սկսեց ցաւել, այնպէս որ վերջացնում եմ նամակս։

Ձեր Վահան

*Հասցեն **Александрополь, Аветику Исаакяну,** Վահանին։*

Շուտով գրեցէք նամակս ստանալներուդ պէս։ Սպասում եմ։ Մի նամակ էլ Մոսկուայից էի ուղարկել, գործադուլից առաջ, երեւի ստացած կը լինէք։ Գրեցէք։

Վահան

Բնագիրը պահւում է ԳԱԹ-ի Վ. Տէրեանի ֆոնդում, թիւ 313։

Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

№ 2 (190) XVIII ՏԱՐԻ ՓԵՏՐՎԱՐ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ» ՕՐԳԱՆ

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Փետրուար 14 - Կարինի մէջ վերջի յեղափոխական շարժումներու հետեւանքով ձերբակալուած թիւրքերու դատավարութիւնը վերջացած է: Դատապարտուած են 8 հոգի մահուան, 18 մարդ մշտնջենական բանտարկութեան, 14-ը տասը տարուայ բանտարկութեան, որոնց մէջ է Կովկասէն եկող չերքեզ Ալի էֆենտին, 1-ը 5 տարուայ, 3-ը երեք տարուայ, 14-ը մէկ տարուայ եւ երկու անչափահաս պատանիներ 6-8 ամսուայ բանտարկութեան: 19 հոգի անպարտ արձակուած են:

* * *

Մինչեւ 1907-ի վերջը Մակեդոնիոյ մէջ գոյութիւն ունեցած են 110 գործող հրոսախումբ, ընդամենը 1200 հոգի: Անոնց հարիւրին 54-ը պուլկար, 30-ը յոյն, 15-ը սերպ եղած են:

* * *

Ցարը վախենում է Իտալիա գնալ... եւ միանգամայն իրաւացի է նրա երկիւղը: Իտալական սոցիալիստները վաղուց յայտարարել են, որ իրենք եւս պատշաճաւոր ընդունելութիւն կ անեն Ռուսաստանի միապետին: «Avanti»!, սոցիալիստների կենտրոնական օրգանը, գրել էր քիչ առաջ հետեւեալը.

«Թող թագակիր պարոնները գնան համբուրուեն ուր որ կ ուզեն - Իտալիայից դուրս, բայց երբեք Իտալիայում: Գարիբալդիի հայրենիքը երբեք չի թոյլ տայ, որ այնտեղ ոտք կոխէ ժողովուրդների դահիճ՝ ռուսական բռնապետը»...

Քաղաքական տեսութիւն

Արեւելեան ճգնաժամը.- Արեւելեան հարցը վերաբացուելու նախօրէին կը գտնուի: Մակեդոնական խնդիրը՝ ուրկէ «Եւրոպան բռնկցնող

կայծը կարող է ցայտել», հրատապ այժմէութիւն կուտայ արեւելեան ճգնաժամին:

Եւրոպական անաղարտաշնակ նուագը դեռ չէր կրցած խաղաղցնել Մակեդոնիան եւ հոն կայուն եւ բարւոք վիճակ մը հաստատել, հակառակ իր ծրագրած բարենորոգումներու գործադրումին:

Սուլթանը կը պահանջէ, որ բարենորոգումներուն հսկող եւրոպական ներկայացուցիչները իր ծառայութեանը մէջ մտնեն եւ ինք վճարէ անոնց թոշակները: Համիդի խորամանկութիւնը չէ վրիպած դեսպաններու աչքէն, որոնք կը մերժեն այդ առաջարկը, սակայն հարցը կը դառնայ յոռեշրջանի մը մէջ:

Աւստրիոյ թատերական հարուածը խլելով Նովի Պազարի գծի արտօնութիւնը մեծ գոռգոչ բարձրացուց ռուսական մամուլին մէջ, որ իրենց «սլաւ եղբայրներուն» դատը պաշտպանելէ չեն կշտանար: Ռուսները Աւստրիոյ ետեւ կը տեսնեն Գերմանիոյ մատը:

Յայտնի է, թէ Աբդիլ Համիդ ներկայացած առիթը չէր ուզէր փախցնել գժտութեան ծաղիկը նետելու եւրոպական նուագին մէջ, ինչպէս ալ ըրաւ:

Սակայն իրողութիւնը այն է, որ դրութիւնը ծանրակշիռ ըլլալ կը թուի Թիւրքիոյ համար: Անգլիական դիւանագիտութիւնը կը զգացնէ, որ ինք, եթէ նուագը իսկ քայքայուի, պատրաստ է առանձին ձեռք առնել Մակեդոնիոյ հարցը եւ լուծել:

Անգլիան ամբողջ արեւելեան հարցն է, որ կը սպառնայ դնել եւրոպայի առջեւ: Անգլիոյ կը ձայնակցին Ռուսիան, Ֆրանսիա եւ Իտալիա:

Ահա այն անելանելի դրութիւնը, որ ստեղծեց Աբդիլ Համիդ եւ ամենադժբախտ դրութեան հասցուց երկիրը եւ ժողովուրդը:

«Հիւանդ մարդը» կը մտմտայ...

* * *

Ռուսո-թիւրք.- Ռուս-թիւրք պատերազմին լուրերը կը զբաղեցնեն մտքերը: Ռուսական մամուլը լայն տեղ կը նուիրէ այդ լուրերուն: Եւրոպական մամուլը եւս լուրջ կարեւորութիւն կուտայ: Թիւրքիա պաշտօնապէս կը հերքէ ըսելով, թէ ինք ոեւէ «պատերազմական ծրագիր» չունի դէպի Ռուսաստանը եւ այդ աղմուկը կը վերագրէ հայ յեղափոխականներուն:

Տարօրինակ զուգադիպութիւնով մը ռուսները եւս հայկական ինդրիկներու կը վերագրեն այդ լուրերը: «Միւսուլման քրիստոնեայ աշխարհներու կռիւը հայերու քաղաքական նպատակին կը ծառայէ միայն», կը հաւաստէ ստախօս «Նովոյէ Վրեմիան» եւ կը հասկցնէ, որ հայերը երկու գահեր սասանեցնելու չափ ահարկու են:

Զինուորական պատրաստութիւններու շարժառիթը մէկէ աւելի են: Թիւրքերը կը յայտարարեն, որ Պարսկաստանի սահմանագլխի քիւրդերու արշաւանքները զսպելու համար է: Ուրիշ մեկնաբանութիւն մը՝ Ռուսաստանը վախցնելու, որպէսզի ձեռք քաշէ Մակեդոնիոյ բարենորոգումներէն: Ուրիշ կարծիք մըն է եւ այն, թէ սուլթանը՝ տեսնելով թիւրքերու մէջ յեղափոխական շարժումը, պատերազմի լուրը մէջտեղ նետած է, որ սասանեցնէ զանոնք:

Ռուս լրագիրները սպառնալով հանդերձ Թիւրքիային, չեն կրնար քօղարկել իրենց մտադրութիւնը՝ Կովկասի մէջ համիսլամական շարժումի մը հետեւանքները նախագուշակելով:

Պատերազմի շշուկները արդէն ձեւականօրէն կը պատրաստեն մտքերը: Ռուսիոյ մէջ հզօր կուսակցութիւն մը կայ, որ կը մղէ պատերազմի... թերեւս ոոպէն եկած կը համարուի, որ Արեւելեան հարցը, եւ նոյնիսկ Թիւրքիոյ հարցը, վերաբացուի լուծելու համար ընդմիշտ:

Պատերազմ մը սակայն պիտի պայթի Արարատի շուրջը եւ փորձութեան նոր թուական մը պիտի բանայ հայ ժողովրդի գլխին, եւ թերեւս անոր բախտը պիտի վճռէ...

№ 3 (191) XVIII ՏԱՐԻ ԺՆՎԱՐ 1908
„Droschak" organe de la Fédération
ԴՐՕՇԱԿ
Adresse: „Droschak" GENEVE (Suisse)
«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՊՇՆՉԱԿԱՑՈՒԹԻՒՆԻ» ՕՐԳԱՆ

* * *

Պարսկաստան.- Մեճլիսի գլխաւոր յոգն էր Պարսկաստանը օժտել եւրոպական սիստեմի պիւդճէով մը եւ որոշեց Շահին թոշակ, որպէսզի պետական գանձարանը զանազանուի Շահի ծախսերէն: Շահը ստիպուած եղաւ ձրիակեր ծառաներու լեգէոն մը ճամբել: Մեճլիսը տապալելու փորձերը հետեւանք էին սրանց դժգոհութեան: Ազգայնականները (ազատականները) ճակատ տուին եւ փրկեցին Սահմանադրութիւնը:

Յետադիմականները, ռուսականի նման սեւ հարիւրեակներ կազմելով ուզեցին ահաբեկել Մեճլիսի պաշտպանները: Միւս կողմեն էնճիմէնները - գաղտնի ընկերութիւնները - եռանդուն գործունէութիւն ցոյց կուտային ի նպաստ Սահմանադրութեան եւ կը պահանջեն, որ Մեճլիսը անխափան շարունակէ իր ազատարար բարենորոգումի դերը:

Յուզումը սակայն կը շարունակուի թէ մայրաքաղաքին մէջ եւ թէ գաւառները:

Էնճիմէնները կը սպառնան երկրին ահարկու եւ հրամայող ուժը ըլլալ: Նրանց կը վերագրեն Շահի դէմ կատարուած սպաննութեան փորձը:

Սահմանագլխի վէճը յանձնուած էր յանձնախումբի մը, որ պաշտօն ուներ... գործը աւելի բարդացնելու: Թիւրքերը անգլո-ռուս ճնշման տակ իրենց զօրքերը ետ քաշէր են ամէն բան աւէր ընելէ յետոյ:

Սակայն թիւրքերը մէկէ աւելի հնարքներ ունին այդ խնդիրը ձգձգելու եւ պատեհ առիթին սպասելու համար:

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Պոլսէն պաշտօնական հեռագիր մը կը ծանուցանէ, թէ բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուած են, որպէս թէ դաւադրութիւն մը գտնըուած է: Ձերբակալուածներէն մէկը պելճիգացի մըն է, որը Պելճիգայի դեսպանը կը ջանայ ազատել:

Դաւադրութեան քննութիւնը Եըլդըզի մէջ կը կատարուի:

Դաւադրութեան մասին ռուսական դեսպանատան թարգմանը կ ուզէին լսել, ռուսական դեսպանը մերժեց եւ բողոքեց:

* * *

<u>Պոլիս, մարտ 25.</u>- Հայերու եւ ռուսներու մէջ դաւադրութեան մը հետքերը գտնուած են: Սամի պեյ, ծովային սպայ մը, որ սուլթանի մօտ նկարչութիւն կ ընէ, ձերբակալուեցաւ: Ռուսական դեսպանը այժմ կը զբաղի այդ գործով: Երկու ռուսահպատակներ ձերբակալուած են:

* * *

Սելանիկի մէջ բաւական թուով իրաւագիտական ուսանողներ եւ սպաներ ձերբակալուած են, իբր թէ երիտասարդ թիւրքերու հետ յարաբերութիւն ունին եւ կ ուզեն տապալել ներկայ ռեժիմը:



Համշէն
եւ համշէնահայութիւն

Համշէն եւ համշէնահայութիւն (գիտաժողովի նիւթեր), Երեւան-Պէյրութ 2007, 295 էջ



Համշէնահայութեան կազմակերպական կեանքում 2005 թ. հոկտեմբերին Սոչիում տեղի ունեցած գիտաժողովը բացառիկ նշանակութիւն ունեցող իրադարձութիւն էր: Դա միջազգային առաջին խոշոր ֆորումն էր, որի ընթացքում բազում անդրադարձներ եղան Համշէնի ու համշէնահայերի խնդիրներին, մշակոյթին, բանահիւսութեանը, հասարակական-քաղաքական կեանքին, ինքնութեան գիտակցութեան եւ համշէնահայութեան համար արդիական այլ հարցերի:

Ասենք նաեւ, որ գիտաժողովի, որի ընթացքում ներկայացուել ու քննարկուել է հայ եւ օտար գիտնականների աւելի քան տասնհինգ զեկուցում, մի կարեւոր առանձնայատկութիւնն էլ այն էր, որ տեղի ունեցաւ համշէնահայ ամենահոծ համայնքն ունեցող քաղաքում՝ քննարկումների ակամայ մասնակիցը դարձնելով տեղի հայութեանը:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրօն եւս բարձր է գնահատել գիտաժողովի նշանակութիւնը: ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարեանը կուսակցութեան 115-ամեակին նուիրուած հանդիսութեան ժամանակ մասնաւորապէս ասաց. «Մենք պարտաւոր ենք, մեզ գերազանցելով, ազգային կազմակերպական ցանցի մէջ առնել հայ ժողովրդի բոլոր հատուածներին, որոնք ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել հայ ժողովրդի կազմակերպուածութիւնից: Պէտք է մօտենալ այդ հատուածներին, պէտք է նրանց տալ ինքնակազմակերպման հնարաւորութիւն՝ մեր գիրկը լայն բացելով նրանց առջեւ: Հայ ժողովրդի այդ կարեւոր հատուածներից են նախկին խորհրդային հանրապետութիւններում հաստատուած հայութիւնն ու մասնաւորաբար Սեւ ծովի ափերին ապրող համշէնահայութիւնը, որի վերաբերեալ թէ Հայաստանում եւ թէ Սփիւռքում պատկերացումները խիստ աղօտ են: Ճանաչողական այս բացը ինչ-որ չափով լրացնելու նպատակով հոկտեմբեր ամսին Սոչի քաղաքում կազմակերպուեց համշէնահայութեան հարցերին նուիրուած գիտաժողով, որը բացայայտեց գիտաճանաչողական եւ կազմակերպական աշխատանքների մի մեծ ասպարէզ: Համշէնահայութիւնը հայ ժողովրդի կարողականութեան մաս է կազմում եւ պէտք է գործնականում եւս մաս կազմի հայ ժողովրդի ուժին»:

Առաւել լայն լսարան ապահովելու նպատակով կազմակերպիչների՝ ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի եւ Հայ դատի գրասենեակների որոշմամբ գիտաժողովի նիւթերը պէտք է հրապարակուեն չորս լեզուներով՝ հայերէն, թուրքերէն, ռուսերէն եւ անգլերէն: Առայժմ ընթերցողի սեղանին են «Համշէն եւ համշէնահայութիւն» գրքի հայերէն եւ թուրքերէն տարբերակները: Ներածութեան մէջ, որի հեղինակը Երեւանի պետական համալսարանի Հայագիտական կենտրոնի աւագ գիտաշխատող Հայկազուն Ալվրցեանն է, համառօտ տեղեկութիւններ կան այն մասին, թէ ովքեր են համշէնահայերը, երբ, որտեղ եւ պատմական ինչ անցքերի արդիւնքում է ձեւաւորուել համշէնահայութիւնն իբրեւ հայկական մի առանձին համայնք, ներհամայնքային ինչպիսի տարբերակումներ (ըստ բնակութեան վայրի, դաւանանքի, բարբառների) գոյութիւն ունեն համշէնահայութեան մէջ: Այս եւ համշէնահայութեան մօտաւոր թուակազմի հաստատումներին են նուիրուած գրքում տեղ գտած գիտական յօդուածների եւ ուսումնասիրութիւնների մեծ մասը: Հետաքրքրութեամբ են ընթերցւում նաեւ համշէնահայերի էթնոմշակութային աւանդոյթներին, հեքիաթային բանահիւսութեան դիւաբանական պատկերացումներին, կրօնական ծիսակատարութիւններին, ժողովրդական տօնախմբութիւններին, խաղերին ու պարարուեստին նուիրուած գլուխները:

Թէեւ գրքի խմբագրական խորհուրդը խոստովանում է, որ հասկանալի պատճառներով հնարաւոր չի եղել ծանօթանալ բոլոր համշէնագէտների տեսակէտներին վերը նշուած հարցերի վերաբերեալ, այնուամենայնիւ կարելի է ընդգծել, որ առկայ է համակողմանի մօտեցումը համշէնահայութեան պատմութեանն ու արդի խնդիրներին, ինչը ներկայացուող գրքի համար արժանի տեղ է ապահովում թէ այս խնդրով զբաղուող գիտնականի եւ թէ պատմաբանասիրութեան մէջ խորացող ուսանողի սեղանին:

Արթուր Ղարիբեան

60-ական թուականներին վերստին ծնունդ առաւ եւ մեր ժողովրդի մէջ արթնացաւ ազատութեան եւ արժանապատուութեան զգացումը։ Հայն զգաց ուժ եւ կարողութիւն՝ ընտրելու անկախութեան ուղին։ Այս պայմաններում ժողովուրդը ծնեց բոլորովին նոր կեցուածքով ու մտածելակերպով սերունդ, որը պատրաստ էր հայրենիքը պաշտպանելու եւ ինքնուրոյն լուծելու իր բախտը։ Այդ սերնդի լաւագոյն ներկայացուցիչներից էր ազատամարտիկ Արթուր Ղարիբեանը։ Երբ մարտերից յետոյ գալիս էր հանգստի, աշխատում էր այդ կարճ ժամանակը խելացի օգտագործել՝ կուրսային առաջադրանքները կատարելու համար։ Սակայն միշտ նրա գործը մնում էր կիսատ՝ նորից մարտադաշտ, նորից ռազմիկ։ Երբ յիշում եմ Արթուրի քանդակները, ակամայից տեսնում եմ նրա հոգեկան վիճակը, նրա տագնապը, նրա կեանքի սէրը։ Թեմաների կատարման մէջ զգացւում էր ապագայ արհեստավարժ արուեստագէտը, որը իր ժողովրդի մշակոյթը հարստացնող դեռ որքան գործեր կը ստեղծէր, կը բարձրացնէր մեր քանդակագործական արուեստը, իր անհատականութեամբ իւրովի կը լուծէր մեր արուեստի խնդիրները։ Մեծ սպասումներ ունէի, քիչ էին այդպիսիները, կ'ուզէի տեսնել նրան մեր արուեստի նուիրեալների շարքում, բայց նա ունկնդիր էր նախնիների կանչին եւ ընտրեց այդ դաժան ճանապարհը։ Եթէ ապրէր, կ'անմահանար որպէս արուեստագէտ։ Այժմ անմահացաւ որպէս մարտիկ։ Սիրելի Արթուր, լսիր ուսուցչիդ կարօտի եւ ողբի ձայնը, լսիր՝ ՀՊԱՐՏԱՆՈՒՄ ԵՄ Քեզանով։

ԱՐԱ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ
Ժողովրդական նկարիչ, քանդակագործ,
Ռուսաստանի Դաշնութեան գեղարուեստի
ակադեմիայի անդամ, պրոֆէսոր

«ԴՐՕՇԱԿ» -ի պատկերասրահ

«Երգչուհի»

«Բերքահավաք»

«Զույգ»

«Պայքար»